


Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ՖՐԱՆՍԻԱՆ
ՇՐՈՒՄԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ
ՃԱՆԱԶՈՒՄ Է ՎԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ 1998



ԴՏՀ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ) 52

Բ 371

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ **Ս.Կ.Պողոսյան**

Բ 371 *ԲԱՐՍԵՂՅԱՆ Լ. ՖՐԱՆՍԻԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ
ՃԱՆԱԶՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.-Եր.,
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998, 132 էջ*

Բ 083010200
703(02) – 98

ԳՄԴ 63.3(2Հ) 52

. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

Ֆրանսիայի առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչները միշտ էլ հանդես են եկել հայ ժողովրդի արդար դատի պաշտպանությամբ, իրենց բողոքի ձայնը բարձրացրել արևմտահայության դեմ կիրառված անլուր հալածանքների ու բռնության դեմ¹:

Սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կառավարման տարիներին իրականացված հայերի զանգվածային ջարդերն ու 1915թ. Մեծ եղեռնը վայրույթով դատապարտվել են ֆրանսիացի ժողովրդի կողմից²:

Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունների ու ջարդերի անմիջական արձագանքն է 1900-1960-ական թվականներին միայն Ֆրանսիայում լույս տեսած շուրջ 400 անուն գրքերի հրատարակ գալը:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայում հրատարակվեցին գործեր, որոնց հեղինակներն էին աշխարհահռչակ մտավորականներ Ժակ դը Մորգանը, Ռընե Պինոն, Էմիլ Դոմերջին, Ֆրեդերիկ Մակլերը, Անատոլ Ֆրանսը, Անրի Բարբիսն և շատ ուրիշներ:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Ֆրանսիայում հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին լույս տեսած գրականությունը սահմանափակ էր: Փաստարկման նյութի անաչառ գնահատականներով աչքի են ընկնում Պոլ դյու Վեուի, Ռեմյուզայի, Ռ.Գոնտո-Բիլրոնի, Է.Նիկոլի, Միշել Պայառեսի, Պիեռ Ռըդանի և ուրիշների աշխատությունները: Սակայն ճշմարտացի գիտական խոսքին զուգահեռ, դեռևս հնչում են 1915թ. եղեռնի պատմության ֆրանսիացի մի խումբ կեղծարարների երկչոտ, սակայն կարծիք ստեղծող ձայները:

¹ Ռուբեն Սահակյան, Ցեղասպանության պատմությունից. Եղեռնի դատապարտման հարցը և ֆրանսիական հասարակայնությունը. Երևան, 1990, էջ 164-169:

² Նույն տեղում, Հայկական ցեղասպանության պատմությունը ֆրանսիական հրատարակություններում, էջ 164-169:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հատկապես 60-ական թվականների կեսերից սկսած. ֆրանսիայում լույս տեսած պատմագիտական գրականության մեջ և հրատարակախոսական գործերում հայկական եղեռնը արժեքավորվեց առավել լայն չափանիշներով, որպես XX դարի առաջին զանգվածային ցեղասպանություն, քննվելով մարդկության դեմ գործադրված հանցագործությունների ընդհանուր շրջայում:

Ուշադրության արժանի են 1970-80-ական թվականների ֆրանսիական պատմաբանների հրատարակությունները, որոնցում փորձ է արվում մերկացնել ժամանակակից թուրք պատմագիտության նպատակային մոտեցումները պատմական փաստերի աղավաղման ու նենգափոխման, Հայոց եղեռնը հերքելու հարցում:

Առանձնահատուկ պետք է նշել ֆրանսիացի հեղինակներ Իվ Տերնոնին և Ժան-Մարի Կառզուին, որոնք համակողմանի ուսումնասիրել են 1915-ի ողբերգության պատճառներն ու հանգամանքները և եկել այն եզրակացության, որ Հայոց ցեղասպանությունը անհերքելի իրողություն է և պարունակում է բոլոր այն բաղադրիչ մասերը, որոնք հատկանշական են ցեղասպանություն հասկացությանը:

Ֆրանսիայում այսօր էլ, ինչպես մախկինում, առկա է բուրքամետ պատմաբանների, պիվանագետների, լրագրողների մի խումբ (Պոլ Դյումոն, Ժան Լյարոշ, Պիեռ Մոզեր), որը թուրք-հայկական հարաբերությունների պատմությունը լուսաբանում է՝ նենգափոխելով իրականությունը, հետևելով և պաշտպանելով ժամանակակից թուրք պաշտոնական պատմագրությունը:

Ստորաբարշության անմախաղեպ օրինակ դրսևորեց ֆրանսիացի փաստաբան Ժորժ դը Մալվիլը, որի «1915-ի հայկական ողբերգությունը» գիրքը 1988-ին լույս ընծայեց Փարիզի «Լանոր» նրատարակչությունը: Հեղինակը լատ եւրոպան փորձում է հերքել հրապարակի վրա գոյություն ունեցող ողջ գիտական գրականությունը, աշխարհի տարբեր լեզուներով լույս տեսած հարյուրավոր այն հատորները, որոնք հաստատում են 1915-ի հայկական ցեղասպանության անառարկելի իրողությունը: Գիտակցված ձևով լրության մատնելով լայն ճանաչում գտած օտար հեղինակների (Թոյնբի, Մորգենթաու, Գիբոնս, Բրայս, Նաիմ բեյ, Մկան զադե Ռիֆաթ, Ժակ դը Մորգան, Մարտին Նիպագե և այլն) վկայություն-

ները. Ժողովը Մալվիլը իր հիմնական դրույթները խարսխում է թուրք պատմաբանների (Շիմշիր, Սոնիել, Գյուլյուն, Օրել, Յուջա և այլն) խիստ միտումնավոր տեսակետների ու եզրահանգումների վրա¹:

Ֆրանսիացի փաստաբանը, գիտակցորեն շրջանցելով իրականությունը, եզրակացնում է, որ հայ ժողովրդի ողբերգությունը չի կարելի անվանել ցեղասպանություն:

Պետք է ենթադրել, որ այդ աշխատությունը ավելի մեծ ուրախություն ու ոգևորություն պատճառեց Ադրբեջանին, քան նույնիսկ Թուրքիային: Փարիզում գրքի հրատարակությունից երկու տարի անց այն լույս տեսավ Բաքվում ռուսերեն լեզվով «Թուրան» տեղեկատվական-հրատարակչական ձեռնարկության մակնիշով, որտեղ հրատարակիչները, փորձելով քողարկել արդեն մեր օրերում Ադրբեջանի տարածքում բնակվող հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանությունը, ընթերցողներին կոչ էին անում «կասեցնել հայկական քարոզությունը, որը Եվրոսյայի և Ասիայի ապագայի համար լուրջ և ծանր հետևանքներ կունենա և անհրաժեշտ է բոլոր առողջ դատող մարդկանց վերաբերմունքը... Տվյալ գիրքը հենց այդպիսի վերաբերմունքի կոչ է անում»²: Մակայն ինչպես թուրքական, ադրբեջանական կառավարող շրջանները, այնպես էլ ֆրանսիացի մի խումբ ծախու պատմաբաններ ու լրագրողներ մոռացել էին այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողովրդի ողբերգությունը առաջին հերթին մտահոգել է Ֆրանսիայի ժողովրդին, ֆրանսիական հասարակայնության առաջադեմ ներկայացուցիչներին, որոնք իրենց ձայնն են բարձրացրել ի պաշտպանություն հայ ժողովրդի:

Ընդամենը երեսուներեք տարի է անցել այն ժամանակից, երբ աշխարհի 23 երկրներում, այդ թվում նաև Ֆրանսիայում, առաջին անգամ նշվեց 1915-ի Հայոց ցեղասպանության հիսնամյակը:

Վեռնա 1965-ի ապրիլին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին, ֆրանսիական խորհրդարանի՝ Ազգային ժողովի կոմունիստ պատգամավորները հարցապնդում արեցին կառավարությանը՝ պահանջելով դատապարտել 1915-ի ցեղասպանությունը միջազգային չափանիշով, որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, և փոխհատուցում տալ հայերին:

¹ Ռուբեն Սահակյան, նշվ. աշխ., Թուրք ցեղասպանների փաստաբանը, էջ 240-244:

² Жорж де Малевил, Армянская трагедия 1915 года, Баку, 1990.

1980 թվականի դեկտեմբերի 13-ին Մարտելում բացվեց «1915 ապրիլի 24» փողոցը: Մինչ այդ նման անվանումներով փողոցներ էին կոչվել Ֆրանսիայի հայաշատ Վիեն, Դեսին և այլ քաղաքներում:

Ֆրանսուա Միտերանը նախագահական ընտրությունների նախօրյակին հայտարարեց, որ Հայկական հարցն ուղղակիորեն վերաբերում է ֆրանսիական պետությանը և կշտամբեց կառավարությանը՝ հայերի ցեղասպանությունը և Հայկական հարցը յճանաչելու համար:

1981-ի ապրիլին նա Մարտելի «Ապրիլի 24» կոթողի մոտ հայտարարեց, որ «Մենք՝ սոցիալիստներս, պետք է պահանջենք, որպեսզի Ֆրանսիան ճանաչի 1915-ի հայերի ցեղասպանությունը, և հանդես գանք Հայկական հարցի արդարացի լուծման համար»:

1981-ի ապրիլի 24-ին Լիոնում Ֆրանսիայի պաշտպանության նախարար Շարլ Էռնյուն հայտարարեց, որ «Հայոց ցեղասպանության ճանաչումը անհետաձգելի պարտականություն է, մի քայլ դեպի խաղաղությունը, արդարության ակտ՝ աշխարհում ապրող յոթ միլիոն հայերի համար»¹:

1981 թվականի ապրիլի 24-ին ֆրանսիական «Մոնդ» թերթը տպագրեց Հայկական հարցին նվիրված մի հավելված, որտեղ ասվում էր.

«Թուրքիան շարունակում էր բռնազավթել հայկական, քրդական տարածքները, Կիպրոս կղզու մի մասը: Թուրքիան ևզգային հերոս է համարում Թալեաթ փաշային, որը ծրագրեց և իրականացրեց 1915-ի Հայոց եղեռնը: Թուրքական պետությունն անմահացրեց ցեղասպանության հիմնական պատասխանատուին: 1943-ին Թալեաթի աճյունը Բեռլինից տեղափոխվեց Ստամբուլ, որտեղ «Ազատության մարտիկների» բլրի վրա կառուցվեց նրա դամբարանը: Վերջերս Անկարայում բացվեց Թալեաթի անվան զբոսայգի: Եվ վերջապես, Ստամբուլում բացվեց Թալեաթի անվան դպրոց»:
Համեմատելով Թալեաթին Ադոլֆ Հիտլերի հետ, հավելվածի հեղինակները հարցնում են. «Որտե՞ղ է գտնվում Հիտլերի անվան դպրոցը: Գերմանիայի ո՞ր քաղաքում է գտնվում Ադոլֆ Հիտլերի

¹ Ջ.Կիրակոսյան, Երիտրուրքիոյը պատմության դատաստանի առաջ, Գլոբլ երկրորդ, Երևան, 1983, էջ 382:

պողոտան: Որտե՞ղ է գտնվում Հիտլերի դամբարանը¹:

1982թ. մարտի 6-ին, պատասխանելով թուրքական «Միլիեթ» թերթի թղթակցի հարցերին, Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Ռույոնը հստակ ներկայացրեց իր կառավարության դիրքորոշումը Հայկական հարցի մասին՝ հայտարարելով, որ «Ֆրանսիայի կառավարությունը պարզորոշ բացատրել է թուրքական իշխանություններին, որ նա համաձայն չէ Օսմանյան կայսրության ծանր շրջանում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին նրանց տված գնահատականին: Այդ դիրքորոշումը ոչ մի կերպ չի նշանակում, որ մենք հավանություն ենք տալիս կամ ըմբռնումով ենք ընկալում հայերի ծայրահեղական գործողությունները»²:

«Պարի մատչ» պարբերականը (1981թ. մարտի 21-ին) տպագրեց Ժորժ Մենոնի ընդարձակ հոդվածը հայկական հարցի, «հայերի սառը վրեժխնդրության» մասին, որտեղ ցույց էր տրված, որ թեև «համակենտրոնացման ճամբար» հասկացությունը շրջանառության մեջ դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, բայց դա մարդկությանը հայտնի էր հայկական ցեղասպանության օրերից, երբ թուրքերը Միջագետքի ողջ տարածքում ստեղծել էին համակենտրոնացման ճամբարներ: Հեղինակն ուղղակի համեմատություն է անցկացնում ֆաշիստական ու թուրքական չարագործությունների միջև, Դախաուի, Օսվենցիմի և հայկական ջարդերի թուրքական մեթոդների միջև՝ նշելով լոկ այն տարբերությունը, որ հայերը տակավին բարոյական, նյութական փոխհատուցում չեն ստացել³:

Թուրք-ֆրանսիական հարաբերություններն ավելի սրվեցին, երբ 1982-ի ապրիլին Մարսելում 1915 թվականին զոհված հայերի հիշատակին նվիրված մի ծիսակատարության ժամանակ Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Գաստոն Դեֆերը հայտարարեց՝ «Ֆրանսիական կառավարությունը ճանաչում է ցեղասպանությունը, որին զոհ դարձան հայերը»:

Կոմունիստ սլատգամավորները հատկապես 1982-1986թթ. ընթացքում բազմիցս հանդես եկան գրավոր հարցապնդումներով:

¹ Ջ.Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 382:

² Նույն տեղում, էջ 384:

³ Նույն տեղում, էջ 385:

1985թ. դեկտեմբերին 35 կոմունիստ պատգամավորների անունից Ազգային ժողովի փոխնախագահ Գ.ի Դյուկոյունեն հանդես եկավ գրավոր առաջարկով՝ ընդունել հատուկ օրենք և ճանաչել ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը 1915 թվականին: Ներկայացված օրենքի նախագծում մասնավորապես սավում էր.

«Իր անկումն ապրող Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը 1915-1922թթ. դարձավ նոր ժամանակների առաջին ցեղասպանության զոհը: 1915-ին թուրքական կառավարությունը կազմակերպում է հայ ժողովրդի բռնագաղթ, քանի որ այդ ժողովրդի ազգային գիտակցությունը դեմ էր առնում բարձրացող թուրքական ազգայնականությանը: Հայկական աղբյուրների համաձայն, մեկնկես միլիոն հայեր սպանվեցին, անհետացան արսորի ճանապարհին կամ տեղահանության վայրերում: Միայն վեց հարյուր հազար հոգի փրկվեց, որոնց մեծ մասը գաղթեց, միանալով XIX դարի սկզբին տեղի ունեցած առաջին ալիքին...

Կոմունիստ պատգամավորները միշտ էլ հանդես են եկել հայերի ցեղասպանության ճանաչման օգտին: Ծանաչել այն, նշանակում է գործնականորեն հանդես գալ այն բանի օգտին, որ այդ հանցագործությունը հիշվի ու դաս ծառայի՝ բացառելով նրա կրկնությունը...

Վերջին տարիներին բարձրաստիճան անձինք հանդես են եկել այդ հանցագործությունը դատապարտող հայտարարություններով, սակայն կառավարական կամ օրենսդրական որևէ ակտով դրանք չեն հաստատվել: Ահա թե ինչու առաջարկվում է օրենսդրական տեքստով վավերացնել ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի կողմից, նախատեսել նրա նշումը և ձեռնարկել կառավարական քայլեր՝ միջազգային չափանիշով»¹:

Օրենքի նախագիծը ուղարկվեց Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական, օրենսդիր ու վարչական օրենքների հանձնաժողով, որը սակայն հարցին համապատասխան ընթացք չտվեց: Այնուհանդերձ կոմունիստ խորհրդարանականները շարունակեցին հանդես գալ հարցապնդումներով:

1986թ. ապրիլի 23-ին նրանք նոր առաջարկով հանդես եկան

¹ Ռուբեն Սահակյան, նշվ. աշխ., էջ 166:

Ազգային ժողովում՝ պահանջելով յուրաքանչյուր տարի նշել 1915թ. ապրիլի 24-ը և միջազգային հասարակայնությանը կոչով դիմել՝ ճանաչելու մարդկության դեմ ուղղված այդ հանցագործությունը:

Այս հարցադրման պատասխանով հանդես եկավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Բեռնար Ռեմոնը, որը փաստորեն դեմ դուրս եկավ կոմունիստ խորհրդարանականների առաջարկությանը՝ գտնելով, որ ներկայիս թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն կրել դեռևս 71 տարի առաջ տեղի ունեցած դեպքերի համար:

Այս անգամ ևս օրենքի նախագիծը շներկայացվեց Ազգային ժողովի քննարկմանը:

Ֆրանսիական կոմունիստների ներկայացուցիչ Պիեռ Պլանշերը, որպես Եվրոպական խորհրդարանի անդամ, 1985թ. նոյեմբերի 26-ին հանդես գալով խորհրդարանի նիստում, անդրադարձավ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցերին, խորհրդարանի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ «Հայկական ազգային տարածքի չորս հինգերորդը, որն այսօր էլ գտնվում է Թուրքիայի սահմաններում, ամբողջովին դատարկվել է հայ ազգաբնակչությունից... Այն ժամանակ, երբ Եվրոպական խորհրդարանում քննարկվում էին բյուջետային հարցեր, իմ խումբը պահանջեց օրինագծի ուղղում, որպեսզի թուրքական վարչակարգին հատկացվելիք վարկերը առժամանակ կասեցվեին, մինչև որ Թուրքիայում լիովին վերահաստատվեն դեմոկրատական կարգերը... Ես պետք է ճշտեմ, որ վերադարձ դեմոկրատիային մեզ համար նշանակում է ոչ միայն վերջ տալ մարդու իրավունքների ոտնահարմանը երկրի ներսում, այլև ճանաչել հայերի ցեղասպանության փաստը»¹:

Եվրոպական խորհրդարանը, սակայն, մերժեց ֆրանսիական կոմունիստ պատգամավորների առաջարկը:

Ֆրանսիայում սկսեցին որոշակի ակտիվություն հանդես բերել նաև հասարակական կազմակերպությունները:

1985-ի դեկտեմբերին Փարիզում ստեղծվեց «Հայերի ցեղասպանության ճանաչման ֆրանսիական կոմիտեն», որի կազմը համալրեցին նաև նացիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարած, մահվան ճամ-

¹ Ռեբեն Սահակյան, նշվ. աշխ., էջ 167-168:

բարներն անցած դիմադրության մասնակիցները, ինչպես նաև գաղութային պատերազմների դեմ ըմբոստացած մարտիկներն ու խաղաղության պաշտպանները: Կոմիտեի նախագահ ընտրվեց Գի Դյուկալոնեն, որը, հանդես գալով կազմակերպության հիմնադրման առթիվ, հայտարարեց.

«Մեր երկրի վերապրած ծանր պահերին դրսևորելով հմտություն և ավանդ ներդնելով իրենց բնակության վայրերի տնտեսական ու մշակութային զարգացման գործում, հայերն իրենց նպաստը բերեցին Ֆրանսիայի պաշտպանությանը, նացիզմի դեմ պայքարին ու Ֆրանսիայի ազատագրությանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 40-րդ տարեդարձի այս օրերին այն տեղը է արդյոք հիշեցնել, որ Խորհրդային Միության ավելի քան 300 հազար հայեր զոհվել են կռվի դաշտում՝ հսնուն ազատության ու Եվրոպայի ազատագրության: Այսօր ոչ ոք չի կարող վիճարկել նրանց տեղը մեր ազգի մեջ: Այդ է պատճառը, որ հայերն իրավունք ունեն ակնկալելու Ֆրանսիայից հատուկ ուշադրություն՝ իրենց պատմության ու մշակույթի հանդեպ, որի կրողներն են նրանք»:

Այդ տարիներին հետևողական ու ծավալուն գործունեությամբ հանդես եկավ նաև ֆրանսահայ համայնքը:

Ֆրանսահայ մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնց մեջ հատկապես աչքի ընկան «Հայ դատի պաշտպանության կոմիտեն», «Ֆրանսահայ երիտասարդաց միությունը», «Ֆրանս-հայկական համերաշխությունը», զգալի ներդրում կատարեցին ֆրանսիական հասարակայնությանը լայնորեն ծանոթացնելու Հայոց ցեղասպանության անհերքելի իրողությանը:

Փարիզում լույս տեսնող «Լենուվել Դ-Արմենի» հանդեսը դեռևս 1996 թվականին հրապարակել էր Լուի Հարիսի հաստատության կողմից կազմակերպված հարցումների արդյունքները, որոնց համաձայն ֆրանսիացիների 69%-ը տեղյակ էր Հայոց ցեղասպանության մասին, իսկ նրանց 79%-ը ցանկացել էր, որպեսզի պաշտոնապես ճանաչվի Հայոց ցեղասպանությունը, և դատապարտվեն այդ իրողությունը ուրացողները:

Սփյուռքահայության հետազոտման կենտրոնը Փարիզում, Լիոնում և Ֆրանկֆուրտում համապատասխանաբար 1998թ. ապրիլի

¹ Ռուբեն Սահակյան, նշվ. աշխ., էջ 168-169:

17-ին, 22-ին և 24-25-ին կազմակերպեց Հայոց ցեղասպանությանը նվիրված հավաքներ, որոնց մասնակցում էին հայեր, բուրքեր, քրդեր և գերմանացիներ: Մասնավորապես ելույթներ ունեցան թուրք մտավորական Ռաջիպ Ջարաքուլուն և կին գրող Ելյան, հայտարարելով, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը պետք է ուղեկցվի փոխհատուցմամբ: Ելյան Փարիզում, Լիոնում և Ֆրանկֆուրտում ելույթ ունեցավ հայերեն: Նա մասնավորապես հայտարարեց, «Թուրքիայի հասարակությունը չի կարողացել մաքրվել: Մեր սերնդին խեղաքյուրված պատմություն է դասավանդվել: Մենք վախենում ենք հայերի հետ ամեն տեսակի մերձեցումից և հեռու ենք մնում նրանցից: Ես ցավում եմ դրա համար և ձեզնից ներողություն խնդրում: Մեր հանդիպումը ինձ համար շատ կարևոր է: Դեռ վերջերս ես չէի գիտակցում ապրիլի 24-ի իմաստը: Ես երկու գիրք եմ գրել հայերի և Թուրքիայի ազգային փոքրամասնությունների մասին: Հիմա ես կարող եմ հայերեն գրել և կարդալ: Հայերեն սովորելով ուզում էի ձեզ ավելի լավ ճանաչել և օժանդակել»:

Հավաքների օրերին Ֆրանսիայի և Գերմանիայի թուրքերն ու քրդերը համատեղ ցույցեր կազմակերպեցին Հայոց ցեղասպանության տարելիցի առիթով: Նրանք հիմնեցին «Ժողովուրդների երկխոսության նախաձեռնություն» կազմակերպությունը, որի նախագահ Ալի Էրթենը հավաքների ընթացքում հայտարարեց, որ մոտ ժամանակներս ստեղծվելու է Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարող թուրք-քրդական ընկերակցություն: «Ժողովուրդների երկխոսության նախաձեռնություն»-ը ապրիլի 24-25-ին Ֆրանկֆուրտում կազմակերպեց հանդիպում «Անատոլիա, որտե՞ղ եմ քո հայ զավակները» թեմայով: Ապրիլի 24-ի հանդիպման ժամանակ Ալի Էրթենը ներկաներին առաջարկեց մեկ լուպե լուռությամբ հարգել Ցեղասպանության գոհերի հիշատակը:

Ֆրանկֆուրտի Սուրբ Կատերինա լյութերական եկեղեցու քահանա դոկտոր Հանս Քրիստոֆ Շտոդտը, հայ-գերմանական ընկերակցության փոխնախագահ Բաֆֆի Քանթյանը, «Շպիգել» հանդեսի հայտնի լրագրող, հայերի մասին պատմող գրքի հեղինակ Վոլֆգանգ Գուստը, Գերմանիայի քուրդ գրողների Պեն ակումբի նախագահ Հայդար Իսիկը, ինչպես նաև հրավիրյալ թուրք մտավորականներ Ռաջիպ Ջարաքուլուն և Ելյան հակիրճ ելույթներ ունեցան:

Ապրիլի 25-ին հանրային քննարկում անցկացվեց հիշյալ եկեղեցուն: Բացման խոսք սաաց Ալի Էրթենը: Բաֆիի Քանթյանը ներկաներին հիշեցրեց, որ հայ ժողովուրդը որոշ այլ ժողովուրդների մեծն ենթարկվել է ցեղասպանության և թուրք ու բուրյ մտավորականներին կոչ արեց այդ հարցում հստակեցնել իրենց դիրքորոշումը: Վոլֆգանգ Գուստլ խոսեց հայերի ցեղասպանության ընթացքում գերմանա-թուրքական հարաբերությունների և այդ ողբերգության մեջ Գերմանական կայսրության խաղացած դերի մասին: Քուրդ գրող Հայդար Իսիկն ընդգծեց հայերի ցեղասպանության մեջ քրդերի պատմական մեղքը՝ արժարժելով ապագայում դրանից առնվելիք դասերի հարցը: Թուրքիայից հրավիրված Ռաջիպ Ջարաբոլուն և Ելլան ընդգծեցին, որ ցեղասպանությունները «որոշակիորեն այլասերում են հասարակությունը», խոսելով մասնավորապես թուրք հասարակության մասին:

Կարծիքների փոխանակման ընթացքում երկու թուրք մտավորականները հիշեցրին, որ Հայաստանի պետությունը թերացել է արժարժել ցեղասպանության զոհերի ժառանգներին փոխհատուցում տալու հարցը: Նրանք հայտարարեցին. «Հայոց ցեղասպանության հարցն այլևս զուտ հայկական խնդիր չէ, մեզ համար այն դառնում է թուրքական հարց»: ՀՐԸՄ Փարիզի տեղեկագրի հաղորդման համաձայն, այդ վերջին հավաքի ընթացքում Ռաջիպ Ջարաբոլուն և Ելլան մաս հայտարարել են. «Ամձամբ մենք մի քանի ուրիշ թուրք ժողովրդավարների հետ պահանջում ենք, որ մեր պատմության այդ սև բիծը մաքրվի: Թուրք հասարակությունը բազմաթիվ կոտորածներով աղտոտված իր պատմությամբ չի կարողանա զերծ մնալ նոր ոճիքներից, եթե արագորեն չճանաչի Հայոց ցեղասպանությունը: Քանի որ անհնար է իսկական զղջումը պատկերացնել առանց փոխհատուցման, մենք հավատում ենք հատուցման վճարման անհրաժեշտությանը: Այս խնդիրն այլևս զուտ հայկական հարց չէ և արդեն վերաբերում է թուրք հասարակության ապագային»:

‘Էռես 1997թ. սեպտեմբերի 26-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի կոմունիստ պատգամավորների խմբակցությունը տարածեց մի փաստաթուղթ (թիվ 209) հայ ժողովրդի ցեղասպանությունը ճանաչելու մասին, որը նախապես՝ 1997թ. սեպտեմբերի 11-ին, ներկայացվել էր Ազգային ժողովի նախագահությանը:

Ստորև ներկայացնում ենք այդ օրինագիծը:

**ԿՈՄԻՏԵՆԻՍՏՆԵՐԻ ԽՍՔԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ
ՀԱՐՈՂՆԵՐԻ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳԻ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻՃԱՐԿՈՒՄՑ
ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ուղարկված է սահմանադրական օրենքների, օրենսդրության և հանրապետության ընդհանուր կառավարման, ընտանեկան ու սոցիալական հարցերի հանձնաժողովներ)

«Ներկայացված է պատգամավորներ Գի Էրմիելի, Ֆրանսուա Ագանսիի, Ժիլբեր Բիեսիի, Կլոդ Բիյարի, Բեռնար Բիրսենժեի, Ալեն Բոկեի, Պատրիկ Բռաունգելի, Ժան-Պիեռ Բրարի, Ժակ Բրյունեսի, Պատրիս Կարվալոյի, Ալեն Կլարիի, Քրիստիան Կյուվիլիեի, Ռընե Դյուտենի, Դանիել Ֆյորտեի, Ժաքլին Ֆրայս-Կազալիսի, Անդրե Ժերենի, Պիեռ Գոլբերգի, Մաքսիմ Գլեննեցի, Ժորժ Աժի, Ռոբեր Յուի, Սյուզեթ Ժաքենի, Ժանին Ժամբյուի, Անդրե Լաժուանիի, Ժան Կլոդ Լոֆորի, Պատրիկ Լրոուայի, Ֆելիքս Լեյգուրի, Ֆրանսուա Լիբերտիի, Պատրիկ Մալավիեի, Ռոժե Մեյի, Էռնեստ Մուտուամիի, Բեռնար Ուտենի, Դանիել Պոլի, Ժան-Կլոդ Սանդրիեի, Ժան Տարդիտոյի, Միշել Վաքսեսի և Ժան Վիլայի կողմից:

ԳՐԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇԱՐԿՐԱՆՔԸ

Տիկնայք, պարոնայք

Հենց սկզբից XX դարը աչքի ընկավ մարդկության դեմ գործված մի ոճրով, որի արձագանքները զգացվում են մինչև օրս:

1998 թվականը 83-րդ տարեկիցն է այն Յեղասպանության, որին 1915-1922թթ. հայ ժողովուրդը ենթարկվել է Օսմանյան կայսրությունում:

1 միլիոն 500 հազար հայեր բնաջնջվեցին կամ անհետ կորան տեղահանությունների ընթացքում կամ արքայազարեթում: Միայն 600 հազար մարդ վերապրեց, որոնց մեծամասնությունը տարագրվեց:

Այսօր, երբ Թուրքիայում գտնվող պատմական Հայաստանի մեծ մասը գրեթե հայաթափված է, Թուրքիայում ապրում է շուրջ 50

հազար հայ, որոնք կենտրոնացած են գլխավորապես Ստամբուլում (նախկին Կոստանդնուպոլիս), ներկայացնելով Օսմանյան կայսրության այն ազգը, որը տնտեսական ու մտավոր առաջնակարգ դեր էր խաղում:

Կոմունիստ պատգամավորները միշտ արտահայտվել են հայ ժողովրդի ցեղասպանության ճանաչման օգտին:

Այդ նպատակով նրանք 1965թ. (50-րդ տարելիցից) ի վեր կանոնավորապես օրինագծեր են ներկայացնում, որոնցից վերջինը 1995թ. փետրվարի 1-ի թիվ 1932 օրինագիծն է:

1915թ. մինչև օրս թուրքական բոլոր կառավարությունները մերժել են ճանաչել ցեղասպանությունը: Ավելին, տարիների ընթացքում նրանք ջանացել են Թուրքիայի պատմական հայկական տարածքներում հետևողականորեն վերացնել Հայաստանի հետ կապված բոլոր հետքերը:

Պաշտամունքի վայրերը նույնպես աստիճանաբար հատկացվում են այլ նպատակների: Ներկայումս միջազգային խաբեության մի լայն արշավ է ծավալվել, որի նպատակն է դիմագրավել արդարության և ճանաչման ազգային ու միջազգային շարժումը:

Մինչ այսօր բազմաթիվ պետություններ, այդ թվում Ռուսաստանն ու Հունաստանը, մարդկության դեմ գործված այդ ոճիորը ճանաչել են որպես Ցեղասպանություն, Եվրախորհրդարանն ինքը ճանաչել է 1987թ. հունիսի 18-ին, այն նույնիսկ պայման դարձնելով Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության համար: 1997թ. հունիսի 1-ին անցկացված հարցումը ցույց է տալիս, որ ֆրանսիացիների գերակշիռ մեծամասնությունը կողմ է դրա ճանաչմանը, և վաղուց ժամանակն է, որ օրենսդրական ակտով Ֆրանսիան ճանաչի հայ ժողովրդի Ցեղասպանությունը:

Ցեղասպանությունը ճանաչելը նշանակում է արտահայտվել այն բանի օգտին, որ մարդկության դեմ գործված այդ ոճիորը դաջվի հիշողության մեջ, և կանխվեն ժողովուրդների բնաջնջման նույնատիպ ձեռնարկումները:

Դժբախտաբար, այսօր ևս այդ ճանաչման բացակայությունն անհետևանք չի անցնում: Օրինակները շատ են:

Հայաստանի կառավարության հետ տարբեր համաձայնա-

գրերի կնքումից հետո այդ ճանաչումը նոր աստիճանի կբարձրագներ բարեկամությունն ու համագործակցությունը նորանկախ այդ երկրի, այդ ժողովրդի հետ, որի հետ կապված ենք պատմական կապերով:

Մույն օրինագիծը շարունակությունն է այն բազմաթիվ ելույթների, որոնցով Ազգային ժողովի կոմունիստական խմբակցությունն արտահայտվել էր Ցեղասպանության ճանաչման օգտին: Խոսքը սկզբունքային դիրքորոշման մասին է, որը ենթադրում է մահ Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում ու շրջաններում հայոց լեզվի և հայ մշակույթի դասավանդմանն առնչվող օրինագծի ներկայացում:

Այսօր հարկ է ընդգծել, որ խորհրդարանի մեծամասնական խմբերը և բազմաթիվ պատգամավորներ իրենց հերթին կամ ներկայացրել են օրինագծեր, կամ էլ պաշտպանել են դրանք: Այդ առթիվ կարելի է լուրջ գոհունակություն արտահայտել:

Այս հեռանկարով առաջարկված է լրացնել 1990թ. հուլիսի 13-ի թիվ 90-615 օրենքը, որի նպատակը ռասիզմի, հրեատյացության և այլատյացության բոլոր քայլերի կանխումն է, որի հիմքում կոմունիստների խմբակցության օրինագիծն է:

Այդ օրենքը մամուլին վերաբերող 1981թ. հուլիսի 29-ի օրենքում մտցնում է 24ա հոդված, որտեղ նշված է.

«24-րդ հոդվածի 6-րդ պարբերությամբ նախատեսված պատիժներին կենթարկվեն նրանք, ովքեր 23-րդ հոդվածում նշված միջոցներից որևէ մեկով կվիճարկեն մարդկության դեմ գործված մեկ կամ մի քանի ոճիրներ, որոնք բնութագրված են Լոնդոնի՝ 1945թ. օգոստոսի 8-ի համաձայնագրին կցված միջազգային ռազմական դատարանի կարգավիճակների 6-րդ հոդվածում, և որոնք իրագործվել են կամ հիշյալ կարգավիճակի 9-րդ հոդվածին համապատասխան ոճրագործ հայտարարված որևէ կազմակերպության անդամների կողմից, կամ էլ ֆրանսիական կամ միջազգային օրենսդրությամբ այդ կարգի ոճրագործ ճանաչված որևէ անձի կողմից»:

Բացի դրանից, դատարանը կկարողանա տնօրինել.

«Քրեական օրենսգրքի 131-35 հոդվածով նախատեսված պայմաններում դատավճռի հրապարակումն ու տարածումը»:

Առաջարկված է լրացնել այս կետը՝ տարածելով բոլոր մյուս ցեղասպանությունների վրա:

Ի դեպ, առաջարկված է լրացնել այդ նույնն՝ 1981թ. հուլիսի 29-ի օրենքի 48-2 հոդվածը: Ներկայումս այնտեղ նշված է. «Փաստերի արձանագրման պահին գործունեության առնվազն հնգամյա ժամկետ ունեցող ամեն մի ընկերակցություն, որն իր կարգավիճակի համաձայն նպատակ ունի պաշտպանել Դիմադրության շարժման կամ տեղահանվածների բարոյական շահերն ու պատիվը, կարող է քաղաքացիական դատ բացել պատերազմի հանցագործությունների, մարդկության դեմ գործված ոճիրների գովաբանման, թշնամու հետ գործակցելու հանցանքների դեպքում և 24ա հոդվածով նախատեսված խախտումների դեպքում»:

Առաջարկված է ընդլայնել այս կետը՝ տարածելով որևէ ցեղասպանության գոհերի պաշտպանության վրա:

1998թ. ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցն է:

Խորհրդարանի հեղինակությունը կբարձրանար օրենքի միջոցով Ցեղասպանության ճանաչման և դատապարտման շնորհիվ: Նկատի ունենալով այս դիտարկումները, մենք ձեզ, տիկնայք և պարոնայք, խնդրում ենք ընդունել հետևյալ օրինագիծը:

ՕՐԻՆԱԳԻԾ

Հոդված 1

Ֆրանսիայի Հանրապետությունը ճանաչում և դատապարտում է այն ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը 1915-1922թթ. Օսմանյան Թուրքիայի ամբողջ տարածքում:

Կառավարությանը հանձնարարված է երկրում ամեն տարի ապահովել դրա հիշատակումը և գործել միջազգային հանրության կողմից դրա ճանաչման օգտին:

Հոդված 2

Մամուլի ազատությանը վերաբերող 1981թ. հուլիսի 29-ի օրենքի 24ա հոդվածի առաջին պարբերությունից հետո ավելացնել

հետևյալ պայրերությունը.

«Նույն պատիժներին կենթարկվեն նրանք, ովքեր կվիճարկեն քրեական օրենսդրության 211-11 հոդվածի կամ միջազգային դատարանների և Ֆրանսիայի կողմից ճանաչված միջազգային կազմակերպությունների բնութագրած ցեղասպանությունները»:


Հոդված 3

Մանուլի ազատությանը վերաբերող 1981թ. հուլիսի 29-ի օրենքի 48-2 հոդվածում «կամ տեղահանվածների» բառերից հետո ավելացնել «կամ մյուս բոլոր գոիերի» բառերը:

1998թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահությունում գրանցվեց ևս մեկ օրինագծի նախագիծ՝ Ֆրանսիայի սոցիալիստների օրինագիծը 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, որը 1998թ. մայիսի 19-ին տարածվեց որպես թիվ 895 փաստաթուղթ և ներկայացվեց արտաքին գործերի հանձնաժողովին:

ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԳԻԾԸ 1915Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ներկայացված է սոցիալիստ պատգամավորներ Դիդիե Միգոյի, Ժան-Պոլ Բրեյի, Ուրնե Ռուբեյի, Մարտին Դավիդի, Ալեն Կալմայի, Ժակ Բասկուի, Ժան-Պիեռ Բլազիի, Մարտին Լինհեռ-Կասուի, Միշել Ռիվազիի, Ժան-Մարկ Այրոյի, Իվոն Աբիլենի, Մորիս Ադա-Պյոֆի, Դամիեն Ալարիի, Լեո Անդրիի, Ժան-Պոլ Բաբեյի, Ժան-Պիեռ Բոնլերի, Ժան-Պիեռ Բալլյույկի, Ժեռար Բապտի, Ալեն Բարոյի, Ժան Կլոդ Բատոյի, Սերժ Բլիսկոյի, Օգյուստեն Բոնոբպոյի, Դիդիե Բուլոյի, Դանիել Բուսբեյի, Ժան-Պիեռ Բրենի, Նիկոլ Բրիքի, Մարսել Կարիլյուի, Ժերոմ Կայուզակի, Վերոնիկ Կարիոն-Բաստոկի, Բեռնար Կազնյովի, Ժան-Կլոդ Շազալի, Դանիել Շվալյեի, Դիդիե Շուայի, Պիեռ Կուանի, Մոնիկ Կոլանժի, Ֆրանսուա Կյույանդրի, Անրի Դ-Ատիլյոյի, Ժակ Դառնի, Մոնիկ Դրնիզի, Միշել Դեստոյի, Մարկ Դոլեսի, Ֆրանսուա Դոզեյի, Պիեռ Գյուկուի, Ժան-Պոլ Դյուարեյի, Ժան-Պոլ Դյուրիոյի, Ալեն Ֆաբր-Պյուժոլի, Ժան-Ժակ Ֆիլոլի, Ռեմոն Ֆոռնիի, Զրիստիան Ֆրանկվիլի, Ժեռար Ֆյուբսի կողմից:



1158

ԳՐԿԱՊԱՏՃԱՄԻՆԵՐԻ ՇԱՐԿՐԱՆՔԸ

Տիկնայք, պարոնայք

Մեր երկիրը և ժողովրդավարությունը հիշողության հրամայական պարտականություն ունեն։ Այդ հիշողությունը չի կարելի սահմանափակել յուրաքանչյուր ազգի պատմությամբ։ Այն պետք է նաև ընդգրկի դարիս ընթացքում ողբերգաբար բազմաթիվ ցեղասպանությունների ենթարկված մարդկության հիշողությունը։

Ցեղասպանության բոլոր ձևերն էլ դատապարտելի են։ Բոլորն էլ ունեցել են միևնույն արդյունքը՝ մարդկանց բնաջնջումը էթնիկական, կրոնական կամ մշակութային տարբերությունների պատճառով։

Հայոց ցեղասպանությունը չպետք է կոլեկտիվ մոռացության առարկա լինի։ Դրա ճանաչումն արդարացիորեն պահանջում է մեր երկրի քաղաքական գործիչների մեծամասնությունը։

Այս առումով օգտակար է հիշեցնել պետական ամենաբարձր պաշտոնյաների որոշ հայտարարություններ։ Դրանք հանձնարարականների արժեք ունեն։

1981թ. հուլիսի 13-ին արտգործնախարար Կլոդ Շեյսոնը հայտարարեց. «Ֆրանսիայի կառավարության դիրքորոշումն արտահայտվել է ամերկմտորեն. Օսմանյան կայսրությունում ապրած հայերը ցեղասպանության զոհ են դարձել։ Փաստերը մնում են փաստեր, որևէ մեկն ի գորու չէ դրանք փոփոխել կամ մոռացության մատնել։ Նման փորձեր բազմիցս արել են Թուրքիայի ներկա իշխանությունները, որոնց չի կարելի որևէ ձևով պատասխանատու համարել հայ ժողովրդի ապրած ողբերգության համար»։

Այդ դիրքորոշումը հետագայում հաստատվեց մասնավորապես Հանրապետության նախագահ Ֆրանսուա Միտերանի կողմից, երբ նա 1984թ. Սուրբ ծնունդը տոնեց Իզերում՝ Վիենի հայ համայնքի հետ։

Այսօր կարևոր է Ֆրանսիայի խորհրդարանի պաշտոնական փաստաթղթով վավերացնել այդ ճանաչումը։ Հենց այդպես վավեցին ՄԱԿ-ը 1985թ., Ստրասբուրգի խորհրդարանը 1987թ. և որոշ թվով ազգային խորհրդարաններ։

Վերջերս որոշ մտավորականների կողմից ցեղասպանությունների ժխտման միտումն այսօր առավել հրատապ և անհրա-

ժեշտ է դարձնում հայերի գեղասպանության՝ պատմության ողբերգական այդ էջի պաշտոնական ճանաչումը ժողովրդավարական մեծ պետությունների և մասնավորապես Ֆրանսիայի Հանրապետության կողմից:

Այդ գեղասպանության ճանաչմամբ գիտակցելով Հայաստանին և Թուրքիային իրեն կապող բարեկամության և համագործակցության պատմական կապերը՝ Ֆրանսիան իր կամքն է դրսևորում՝ մասնակցելու բուրբերի և հայերի միջև տեսական հաշտության հաստատմանը, նրանց ժողովրդավարությունների և մարդու իրավունքների ամրապնդմանը:

ՕՐԻՆԱԳԻՃ

Հոդված

Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց գեղասպանությունը»:

Երկարատև սպասումներից հետո, մայիսի 29-ին, Ֆրանսիայի Ազգային ժողովը ճանաչեց Հայոց գեղասպանությունը: Խորհրդարանում սոցիալիստների խմբակցության նախագիծը՝ «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է Հայոց 1915թ. գեղասպանությունը», ընդունվեց միաձայն, հոտնկայս ծափահարություններով:

Նիստն սկսվեց Փարիզի ժամանակով 9-ին և տևեց 2.40 ժամ: Բացման խոսքն արտասանեց Ալֆրովիլի քաղաքապետ, պատգամավոր, օրինագծի զեկուցող Ռենե Ռուբեն, որ հակիրճ ներկայացրեց գեղասպանության պատմականը, հուզված շեշտեց, որ Ֆրանսիայի համար պատմական առիթ է ճանաչել պատմական ճշմարտությունը: Նա հիշատակեց նաև հանգուցյալ նախագահ Ֆ.Միտերանին, որպես Ցեղասպանությունը ճանաչած առաջին պետական ղեկավարի: Այնուհետև խոսք առավ կառավարության կողմից նախկին ռազմիկների գծով փոխնախարարը, որն, ընդունելով հանդերձ հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը, պատգամավորներին հարց տվեց, որ արդյոք օրինագիծը օրակարգ ընդունվելու դեպքում սահմանադրական բնու՞յթ է կրելու (ակնարկ Սահմանադրության 20-րդ և 34-րդ հոդվածները): Նա շեշտեց, որ օրինագիծը մտցնելը պատգամավորների պատասխանատվու-

բյուճն է, հարցրեց, թե Ֆրանսիան կարո՞ղ է նպաստել հայ և թուրք ժողովուրդների միջև հաշտության կայացմանը, միաժամանակ ընդգծեց, որ Ֆրանսիան բարեկամ է և Թուրքիային, և Հայաստանին: Փաստորեն փոխնախարարն ուզում էր իր կառավարության դիրքորոշումը տարանջատել Ազգային ժողովից, մանավանդ որ Ֆրանսիայի կառավարությունն օրերս մեծ ճնշումների է ենթարկվել Թուրքիայի կողմից:

Հաջորդաբար ելույթ ունեցան Ֆրանսիա-Հայաստան խմբի նախագահ, սոցիալիստ պատգամավոր Ժան-Պոլ Բրեթը, UDF-ից Ռոլան Բլյումը: Վերջինս ցավ հայտնեց, որ բանաձևում թուրքերի և Թուրքիայի անունը չկա, հետևաբար ամբողջական չէ: Սակայն ավելացրեց, որ իր խմբակցությունը որոշել է «կողմ» քվեարկել, իսկ կոմունիստներից Գի Հերմինն, հայտարարելով հանդերձ, որ իրենց խմբակցությունն էլ է «կողմ» քվեարկելու, ի հավելումն օրինագծի առաջարկեց, որ Ֆրանսիան ազգային սզո օր հռչակի ապրիլի 24-ը: Հատկապես հուզված էր Անտոնիի քաղաքապետ, պատգամավոր Պատրիկ Դեջյանը: Նա ասաց, որ այսօր այս օրինագծի առաջ ոչ աջ և ոչ էլ ձախ կողմնորոշում չի կարող լինել: Նա հիշեցրեց, որ հայերը մեծ հավատք ունենին Ֆրանսիայի հանդեպ, երբ վերջինս լքում էր կլիկկյան թուրքերին: Ցավ հայտնեց, որ դահլիճում կառավարությունը ներկայանում է երկրորդ ներկայացուցչով, որն իր խոսքում ոչ մի անգամ չգործածեց ցեղասպանություն բառը և խոսքերն ուղղեց ոչ այնքան պատգամավորներին, որքան Թուրքիային:

Հայ պատգամավորից հետո խոսք առան Ժորժ Սարրը, Ռ.Միկոն, Ֆ.Ռոշերլուան (UDF): Վերջինս հիշեցրեց, որ այս օրը 24 ժամվա տարբերությամբ զուգադիպում է Հայաստանի առաջին հանրապետության 80-ամյակին: Ելույթ ունեցան մահ Պիեռ Լելուշը, Մարտին Դոլլին, Ժ.Ֆուշեն (Կլամարի քաղաքապետ): Ապա կրկին միջամտեց նախկին ռազմիկների գծով փոխնախարարը և գլխավորապես պատասխանեց Պ.Դեջյանին ու շեշտեց, թե ինչ էլ լինի քվեարկության արդյունքը, ժողովրդավարությունն է հարգվելու:

Հետևեցին կարճ ելույթներ, որոնցից ամենահատկանշականը Իսիլե-Մուլինոյի քաղաքապետ Անյրե Սանտիմիի խոսքն էր՝ «Գոնեն մեկ անգամ հուսախար չանենք մեր հայ բարեկամներին»:

Ժամը 11.40-ին տեղի ունեցավ պատմական քվեարկությունը,

որի համրածայն արդյունքի հրապարակումը խլացավ ծափահարություններից:

Մինչ այդ, մանավանդ մայիսի 27-ին և 28-ին, Ֆրանսիան ենթարկվեց Թուրքիայի հետ իր հարաբերություններում թերևս ամենալուրջ ճնշումներին, թե դիվանագիտական, և թե քարոզական առումներով: Թուրքիայի արտգործնախարարի կողմից Ֆրանսիայի իր պաշտոնակցին, Ազգային մեծ ժողովի նախագահից՝ Ազգային ժողովի նախագահին ուղղված մամակներից հետո, մայիսի 19-ին վարչապետ Լիոնել Ժոսպեճին պաշտոնական նամակ էր հղել նաև վարչապետ Մետոք Յըլմազը: Իր ներկայացրած հետաքրքրության համար նամակի թարգմանությունը գետեղում ենք ստորև: Ի դեպ, նամակի թուրքերեն և ֆրանսերեն բնագրերը մայիսի 28-ին տպվել էին «Հյուրիլիեթ» թուրքական թերթում, որն իր առաջին էջը հատկացրել էր ցեղասպանության հարցին, իր հոդվածագրերի միջոցով կրակ ու բոց ժայթքելով Ֆրանսիայի դեմ և զգուշացնելով, որ դրանից կտուժեն ոչ միայն Թուրքիա-Ֆրանսիա հարաբերությունները, այլև ... Հայաստանը:

Գործի էր լծվել նաև Փարիզում Թուրքիայի դեսպան Գյոքսալը, որ հանդիպումներ ունենալով Ֆրանսիայի կառավարող շրջանների հետ՝ ընդգծել էր «Թուրքիայի դյուրագագողություն» այդ նյութի շուրջ, մինչ Անկարայում Ֆրանսիայի դեսպան Դանիել Լեո Կարտիեն հրավիրվել էր արտգործնախարարություն՝ տեղեկացվելու Թուրքիայի անհանգստության մասին: Ըստ որոշ տվյալների, Թուրքիան պատրաստվում է արգելք դնել ներմուծվող ֆրանսիական ապրանքների վրա, այնինչ Ֆրանսիան վերջին 10 տարում 5 մլրդ 100 մլն դոլարի ներդրումներ է կատարել Թուրքիայում:

Այնուամենայնիվ, հսկառակ մման բազմաթիվ ճնշումներին, արդեն մայիսի 27-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին հարցերի հանձնախումբը մեկ ձայնով պակաս որդեգրել էր Ռըմե Ռուբեի առաջարկած օրինագիծը, իսկ հանձնաժողովի նախագահ Ժակ Լանգը հայտարարել էր, որ վճռել է մինչև վերջ գնալ այս հարցում:

Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանությանը վերաբերող օրինագծի ընդունումը հաջորդ օրերին լայնորեն մեկնաբանվեց ֆրանսիական մամուլում և սփյուռքի թերթերում:

Ֆրանսիայի ամենաազդեցիկ օրաթերթերը՝ «Մոնդը», «Ֆիգարոն», «Ֆրանս սուարը», ինչպես նաև կոմկուսի պաշտոնաթերթ «Յունամիտեն», այդ իրադարձության մասին ազդարարեցին առաջին էջերում: Չախ ուղղվածություն ունեցող «Լիբերասիոնը», ինչպես նաև Փարիզում ու մերձակայքում տարածվող «Պարիզիեն» օրաթերթը բավարարվեցին համեմատաբար զուսպ տեղեկատվությամբ: Մասնավորապես «Մոնդ» օրաթերթը Ազգային ժողովում Հայոց ցեղասպանության ճանաչմանը նվիրեց իր խմբագրականը՝ «Հայաստան տաբուի վերջը»: Իրոք, մայիսի 29-ի իրենց որոշմամբ ֆրանսիացի պատգամավորները խոսեցին մի արգելված թեմայի մասին, քանզի մինչև օրս Արևմուտքի ժողովրդավարական մեծ երկրներից և ոչ մեկը 1915թ. Ցեղասպանությունը չէր անվանել իր անունով: «Վերապրողների արդարության կոչերը մինչև օրս լսելի չէին եղել քաղաքական նկատառումներով, որոնք Թուրքիայի հետ որոշ երկրների շահադիտական հարաբերությունների հետ են կապված: Այժմ միջազգային իրավիճակը փոխվել է: Հայաստանի Հանրապետությունն անկախություն է ձեռք բերել ԽՍՀՄ ավերակների վրա: Հայկական ահաբեկչությունը վայր է դրել զենքերը: Թուրքիան ևս փոխվել է, թեև Արևմուտքի և մասնավորապես Եվրոպայի հետ նրա հարաբերությունները զերծ չեն վեճերից ու թյուրիմացություններից», – գրում է թերթը, Թուրքիայի այժմյան ղեկավարներին առաջարկելով ի վերջո հանգիստ խորհրդածել Թուրքիայի պատմության այն մասի շուրջ, որի համար իրենք պատասխանատու չեն:

«Մոնդի» մեկ այլ հոդվածում մեջբերվում են կոմկուսի ներկայացուցիչ պատգամավոր Գի Էրմիեի խոսքերը, որը մայիսի 29-ի նիստից հետո հայտարարել էր, որ Ազգային ժողովը երբեմն ընդունում է «խրեն պատիվ բերող որոշումներ»: «Մոնդը» միաժամանակ նշում է, որ քննարկումից առաջ օրինագիծը որոշակի կրճատումների էր ենթարկվել կառավարության կողմից: Մայիսի 29-ի քննարկմանը ներկա չէր Ֆրանսիայի արտգործնախարարը, իսկ զեկուցման մեկնաբանությամբ հանդես եկավ նախկին մարտիկների հարցերով զբաղվող պետքարտուղար Ժան-Պիեռ Մասյեն: «Ինչպե՞ս խնայել Թուրքիային, միաժամանակ մեծամասնությունը ներկայացնող պատգամավորների մեջ թեկնածու Լիոնել Ժոսպենի

ընտրական խոստումը հարգելու տպավորություն ստեղծելով», – հարց է տալիս հողվածագիրը: Կառավարության ներկայացուցիչը լրկ «ի գիտություն ընդունեց» Ազգային ժողովի «քաղաքական մտադրությունը» և խոստացավ տեքստը հանձնել Սենատին:

Կոմունիստ պատգամավորները և «Ֆրանսիայի ժողովրդավարության միություն» խմբակցությունը դժգոհություն արտահայտեցին այն պատճառով, որ Յեղասպանության պատասխանատուներին նշելու կամ օրինագծի միակ հողվածը խմբագրելու վերաբերյալ իրենց առաջարկած լրացումներից ոչ մեկը չէր ընդունվել:

Չնայած իր մեղմ ու թերի ձևակերպմանը, ընդունված օրինագիծը զայրացրեց պաշտոնական Անկարային: Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազը և արտգործնախարար Իսմայիլ Չենը հայտարարեցին, թե Յեղասպանության ճանաչումը «վնասակար հետևանքներ կունենա թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա»: Թուրքիան մասնավորապես սպառնում է գեներլ գնումների, էներգետիկայի և քաղաքացիական ավիացիայի բնագավառներում խիստ կրճատել հարաբերությունները ֆրանսիական ու եվրոպական որոշ ընկերությունների, օրինակ, ֆրանս-գերմանական «Եվրոկոպտեր» ֆիրմայի կամ եվրոպական «Էրբաս ինդաստրիզ» կուրսորացիայի հետ:

«Ֆիգարոն» նշում է, որ մայիսի 29-ի օրինագծի հաստատումը պատգամավորները ընդունել են հոտնկայս ժափահարություններով, իսկ Ազգային ժողովի միակ հայ պատգամավոր «Հանրապետությանն» աջակցող միավորման ներկայացուցիչ Պատրիկ Դեեջանը հայտարարել է. «Այսօր այլևս չկան աջեր ու ձախեր, կա հավերժական Ֆրանսիա»:

Աշխարհահռչակ երգիչ, երգահան, կինոդերասան, Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ հանձնարարությունների դեսպան և ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հայաստանի պատվիրակ Շարլ Ագնավորը միլիոնավոր հայերի նման ևս հուզվեց Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանությանը վերաբերող օրինագծի ընդունումից: Այդ է վկայում նույն օրը ֆրանսիական ամենահայտնի օրաթերթերից մեկի՝ «Ֆրանս սուարի» թղթակից Կլեմանս Լըմետրին նրա տված հարցազրույցը:

« – Հայոց ցեղասպանությունը վերջապես ճանաչված է: Դուր

ի՞նչ զգացումներ ունեք:

– Ես սփռված եմ: Կատարվեց առաջին կարևոր քայլը: Շարունակությունը: Կարծում եմ, որ ուրիշ կառավարություններ էլ նույնպիսի որոշում կընդունեն: Կամաց-կամաց չէի ասի, թե թուրք ժողովուրդը (և ես դա ընդգծում եմ), բայց Անկարան կվարժվի դրան, և ի վերջո ամեն ինչ կհարթվի: Կատարվելիք երկրորդ քայլը ոչ թե հաշտեցումն է, քանզի միմյանց համար մենք օտար ենք եղել, այլ թուրքերի և հայերի միջև յուրահատուկ մտավոր գործակցության հաստատումը: Ես դա կարևորում եմ, քանզի այսքան տարիների մերժումից հետո, կարծում եմ, դա պետք է ցավագին լինի նրանց համար: Այն, ինչ ցավագին էր նախկինում մեզ համար, ցավագին է դառնում թուրքերի համար: Ես գիտեմ, թե ինչ է ցավը և չէի ուզենա, որ հարատևի այժմ՝ 80 տարի անց: Մանավանդ որ Յեղասպանության համար պատասխանատու է ոչ թե թուրքերի ներկա սերունդը, այլ Օսմանյան կայսրությունը: Ես կուզենայի դա ընդգծել:

– Ոմանց կողմից կիսատ-պռատ համարվող այս ճանաչումը չի՞ բորբոքի հիմն վեճերը:

– Դա չպետք է անել: Վերջերս ես գրեցի և Թուրքիայի հայկական գլխավոր թերթին հանձնեցի մի հոդված. որ կոչվում է «Նամակ թուրք բարեկամիս»: Այնտեղ ես բացատրում եմ, որ հարկավոր է ամեն ինչ կարգավորել: Ես այն ձևակերպել եմ բանաստեղծական ոճով, որը ցանկության դեպքում կարելի է ըմբռնել, բայց կարծում եմ, որ դա դյուրըմբռնելի է: Միայն կլինեն այս ճանաչումը հաղթականորեն ընդունելը: Ընդհակառակը, կարծում եմ, որ դա պետք է ընկալել այնպես, ինչպես որ կա: Դա տեղի ունեցավ ոչ, ուրեմն պետք է ընդունել շատ ավելի հանգիստ կերպով: Եվ հիմա պետք է սկսենք մտածել, որ դիմացը մարդիկ են, որոնք որոշակի ցավ կզգան: Ես ուզում եմ ամեն գնով խուսափել դրանից:

– Ունե՞ք թուրք բարեկամներ:

– Այո, ես վաղուց ունեմ թուրք բարեկամներ և ծանոթ թուրք լրագրողներ: Վերջերս ավտոմթարից զոհված լավագույն ընկերներիցս մեկը թուրք էր: Շատերն ինձ հարցրել են. «Այդ ինչպես, մի՞թե դու թուրք բարեկամ ունես»: Իսկ ես պատասխանել եմ. «Հետո ինչ»: Կարևորը մարդն է, ոչ թե ազգությունը: Գիտե՞ք, ես երբեք չեմ մասնակցել ապրիլի 24-ի երթերին: Իմ ակնկալիքն այն է, որ մի օր

երթի դուրս գամ թուրք դեսպանի կամ մեկ ուրիշ կարևոր թուրք անձնավորության հետ կողք կողքի:

– Ի՞նչ եք մտածում Անկարայում այդ ճանաչման առաջացրած գայրույթի մասին:

– Այս ամենի հետևում ամոթի որոշակի զգացում թաքնված չէ՞ արդյոք, և գուցե կուզենային, որ այդ պատմությունը երբևէ եղած չլիներ: Ես այնպիսի անձնավորություն եմ, որը ոչ թե խփում է, այլ ձեռք մեկնում:

– Դուք կամ Չեր ընտանիքը տուժե՞լ եք Ցեղասպանությունից:

– Անձամբ ես չեմ տուժել, բայց մայրս շատ է տուժել: Ինչ վերաբերում է գերդաստանիս, բնաջնջվել է»:

Ստորև մաև ներկայացնում ենք Փարիզում, Հայաստան մեկնելուց առաջ Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ժակ Ուդենի հետ տեղի ունեցած հարցազրույցն ամբողջությամբ:

«Մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունելով 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը, վերջապես վերացրեց 83 տարուց ի վեր Հայ դատին հարվածող տաբուն: Կարո՞ղ եք պատմել այն արձագանքի մասին, որ սենատորներն ունեցան այդ քվեարկության արդյունքներն իմանալու պահին:

– Հայոց ցեղասպանության խնդիրը մտահոգում է Ֆրանսիացիներին և մասնավորապես խորհրդարանականներին՝ պատգամավորներին և սենատորներին: Ֆրանսիան պատմականորեն մարդու իրավունքների հայրենիքն է, ուստի այն ամենը, ինչ կապված է մարդկության իրավունքների հարցերի հետ, չի կարող մեզ անտարբեր թողնել: Երկմտանք չկա, պարզապես դա քիչ հայտնի խնդիր է: Ազգային ժողովն ընդունեց մի տեքստ, վերջին ամսվա ընթացքում տեղի ունեցած զարգացումները հանգեցրին կառավարությանն ուղղված հարցերի ընտրությանը, անձամբ ես հունիսի 14-ին գրավոր հարցեր ներկայացրի կառավարությանը: Ես սա կարևոր եմ համարում, քանզի որպես Սենատում Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ, դիմել եմ կառավարությանը: Այն ժամանակ Ազգային ժողովը ընդունեց օրինագիծ, որը հիմա հանձնվում է Սենատին: Իր պարտականություններով, բնույթով Սենատը մի համաժողով է, որը հարցերը քննարկում է հիմնավորապես, ամբողջ

համատեքստում: Այդ այս գործում առկա է երկու կողմ, ես կասեի քաղաքական և մարդկային կողմեր, մարդու իրավունքն անվիճարկելի, անշրջանցելի է, իսկ երկրորդը իրավաբանական կողմն է: Երբ խոսքն օրենքի մասին է, հարկավոր է միատեսակ կարևորություն տալ իրավաբանական և քաղաքական կողմերին: Ազգային ժողովի օրինագիծը իմ կարծիքով սահմանադրական քվեարկության որոշ դժվարություններ ունի, այսինքն հարկավոր է լուծել իրավաբանական խնդիր:

– Այժմ դուք՝ սենատորներդ, պետք է արտահայտվեք պատգամավորների միահամուռ ընդունած տեքստի առնչությամբ: Որպես խմբի նախագահ, ձեր գործընկերների շրջանում ինչպիսի՞ արշավ եք ծավալել այդ օրինագծի ընդունմանը հասնելու համար:

– Ազգային ժողովը չպետք է շփոթել Սենատի հետ: Այստեղ արշավ չեն ծավալում: Հարցերը կուսումնասիրվեն ստույգ ձևով, խորապես, հանձնաժողովների մակարդակով: Ազգային ժողովն օրինագիծն ընդունել է չափազանց սեղմ ժամկետներում, և ներկայումս այստեղ այն ուսումնասիրում են առավել խորացված ձևով: Ըստ երևույթին իրավաբանորեն առկա է մի փոքրիկ դժվարություն, և մենք ուզում ենք գնալ հնարավոր լավագույն ուղղությամբ: Սենատն իմաստնորեն գործող օրգանիզմ է, դա երբեք չլուծարվող համաժողով է, ուստի դուք կարող եք վստահի լինել, որ երբ որևէ խնդիր մուտք է գործում Սենատ, միշտ այնտեղից դուրս կգա, միշտ էլ որևէ մեկը կհիշեցնի այդ խնդրի մասին: Բայց նաև այնպիսի համաժողով է, որը ոչինչ չի քվեարկում հապճեպորեն:

– Օրենքը պետք է քննարկվեր հունիսի 29-ին, քայց Սենատը հարկ չհամարեց այդ տեքստը մտցնել օրակարգ: Կարծու՞մ եք արդյոք, որ այդ հետաձգումը կփոխի Թուրքիայի իշխանությունների արձագանքը, և վերջին հաշվով հավատու՞մ եք, թե Թուրքիայի տնտեսական սպառնալիքները հիմնավոր պատճառ են եղել անորոշ ժամկետով հետաձգման համար:

– Թուրքիայի ճնշումները չեն կարող ազդել Սենատի վրա: Զննարկումը հետաձգվեց, քանի որ տեքստի խոր քննությունը ավելի շատ ժամանակ էր պահանջում:

– Բայց դա միանգամայն պարզ ու հստակ իրողություն է... Դուք ի՞նչն եք խորապես ուսումնասիրելու:

– Քննությունը կվերաբերի հատկապես այն բանին, թե հնարավոր է օրենքի մեջ մտցնել այդ ձևով ընդունված օրինագիծը: Առայժմ տեքստը վկայում է, որ մենք չենք կարող ընդունել որպես օրենք:

– Ձեր կարծիքով որպես օրենք ընդունած պատգամավորները ինստիտուցիոն խախտու՞մ են կատարել:

– Նրանք այդպես չեն քվեարկել: Նրանք քվեարկության են դրել յուրօրինակ հանձնարարական և ոչ թե իրավաբանական օրենք: Դա տարօրինակ է թվում, բայց այդպես է: Ի դեպ, եթե վրնեխն նույն ձևով քվեարկող երկու ազգային ժողովներ, դա մեծ օգուտ չէր տա: Ազգային ժողովն ընդունեց համարձակ որոշում, դա շատ տպավորիչ է, բայց կա իրավաբանական օրենք, որը պահանջում է առավել խոր մոտեցում:

– Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ալեն Ռիշարը, որն անմիջականորեն առնչվում է Անկարայի զենքի գնումների պայմանագրերի սառեցման պատճառով 60 միլիարդ ֆրանկի հնարավոր կորստի հետ, հայտարարել է, թե խորհրդարանն ու կառավարությունը մեծ տարածայնություններ ունեն տվյալ հարցում: Սենատում ինչպիսի՞ն են ներկա իրավիճակը և նախարարի նշած տարբերության արձագանքը:

– Ձեր հարցին դժվարանում եմ պատասխանել: Պրն. Ռիշարը գուցե հայտարարություն անի Սենատի հանձնաժողովների առջև, բայց հարցը հրապարակավ չի քննարկվել:

– Թուրքիայի սպառնալիքների կլիրառումը շատ է մտահոգում ինչպես ֆրանսահայ համայնքին, այնպես էլ Հայաստանին: Բայց մենք հույս ունենք, ու Ֆրանսիան այդ հնարավոր ֆինանսական կորստին կդիմանա, քանզի բարոյական առումով ճիշտ է վարվել այդ ողբերգությունը ճանաչելով:

– Այո, անշուշտ, բարոյական պարտականությունն անշուշտ-ցեղի է, և վստահաբար կարտահայտվենք այդ բոլոր ճնշումներից անկախ: Եվ ոչ մի ֆինանսական կորուստ չի կարող ազդել ինքնիշխան խորհրդարանի վրա:

– Դուք տեղյակ եք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման հասնելը այլևս ոչ թե միայն հայ համայնքի նպատակն է, այլև Հայաստանի պետության նոր քաղաքականության

գլխավոր նպատակներից մեկը: Բո՞նն կատարած իր այցի ժամանակ Հայաստանի արտգործնախարար պրն. Օսկանյանը արդեն այդ մասին խոսեց Գերմանիայի խորհրդարանում, իսկ Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն իր հերթին այդ հարցը արծարծեց Անգլիայում: Չե՞ք կարծում արդյոք, թե Սենատի քվեարկությունից հետո ֆրանսիացի խորհրդարանականների օրինակը իրենց օտարերկրացի գործընկերներին կդրդի նույն քայլին դիմել:

– Կարծում եմ, որ միջազգային խնդիրների մակարդակով այս կարգի հարցերը գլխավորապես բխում են միջազգային հանրությունից: Բայց համաշխարհային հնչեղություն ստանալու համար տրամաբանական է, որ այդ հարցը քննարկվի ՄԱԿ-ում:

– Ազգային ժողովում Ձեր պաշտոնակից Ժան-Պոլ Բրեն Հայաստանի մամուլի համար ինձ տված հարցազրույցում հայտարարեց, որ Ազգային ժողովում Տեղասպանության ճանաչումը բարոյական առումով կլինի իր խորհրդարանական կյանքի ամենակարևոր գործը: Իսկ ո՞րն է ձեր մոտեցումը:

– Բարոյական առումով դա, անշուշտ, շատ կարևոր գործ է: Ես նույնպես շատ զգայուն եմ այս առնչությամբ: Բացի դրանից, ես անձամբ կապված եմ հայերի, նրանց պատմության հետ, քանզի կնոջս պապը հայ է եղել, նրա ազգանունը Յուզբաշյան էր:

– Ինչպիսի՞ ուղեքձ կուզենայիք հղել հայկական ծագումով ձեր հայրենակիցներին և բոլոր հայերին, հուսալով, որ ձեր բարձր համաժողովը կհետևի Ազգային ժողովի օրինակին:

– Համաժողովը կանի իր կարելին, բայց հարգելով պետական օրենքը և ինստիտուցիոն կանոնները: Սենատի նախագահ Ռենե Մոնորին Հայ դատի կրքոտ պաշտպան է, և Սենատում Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խումբը ամենամեծերից մեկն է. խումբն ունի 60 անդամ, այնքան, որքան Ֆրանսիա-ԱՄՆ բարեկամության խումբը: Դա վկայում է, որ Սենատը խիստ զգայուն է այդ հարցի նկատմամբ և ուզում է օժանդակել Հայաստանի երիտասարդ հանրապետությանը:

– Հունիսի 29-ին Դ-ուք մեկնում եք Հայաստան: Ո՞րն է այդ այցի գլխավոր նպատակը:

– Դա Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակության առաջին պաշտոնական այցն է Հայաստան: Մեր

նյատակն է տեսնել ՀՀ Ազգային ժողովի մեր հայ գործընկերներին, ամրապնդել բարեկամական կապերը, ինչպես նաև հանդիպել Հայաստանի իշխանությունների հետ: Բայց մեր գլխավոր մտահոգությունը Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրների լուծմանն օժանդակելն է: Հենց այդ պատճառով մի քանի ձեռնարկատերեր կլինեն մեր պատվիրակության կազմում»:

Ֆրանսիական պատվիրակությունը ջերմ ընդունելություն գտավ Հայաստանում:

«Ֆրանսիայի Սենատը, հավատարիմ մնալով մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին, հայ և ֆրանսիացի ժողովուրդներին կապող դարավոր բարեկամությանը, խոնարհվում է այս հուշարձանի առջև, որը խորհրդանշում է դարասկզբին հայ ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակը: Հանուն բարոյականության ու խղճի, Ֆրանսիայի Սենատը կջանա վարել այնպիսի գործունեություն, որ թե ֆրանսիական կառավարությունը և թե համաշխարհային հանրությունը ճանաչի այս ցեղասպանությունը»:

Այսպիսի գրառում կատարեց Ֆրանսիայի Սենատի պատվիրակության, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Ժակ Ուդին Հայոց ցեղասպանության թանգարանի հուշամատյանում, հուլիսի 1-ին այցելելով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Պատվիրակությունը, որին ուղեկցում էին Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ, ծաղկեպսակ դրեց Եղեռնի զոհերի հուշարձանին: Ինչպես նշեց Ժակ Ուդին, Սենատը մտահոգ է ցեղասպանության ճանաչման խնդրի կապակցությամբ և ցանկանում է օժանդակել Հայաստանին: «Սենատում հարցի քննարկումը հետաձգվեց, – ասաց նա, – քանի որ տեքստի մանրակրկիտ քննությունը շատ ժամանակ է պահանջում: Սակայն միջազգային մակարդակով վճռվող այս կարգի հիմնահարցերը կախված են գլխավորապես միջազգային հանրության կարծիքից, և համաշխարհային հնչողություն ստանալու համար տրամաբանական է, որ խնդիրը քննարկվի նաև ՄԱԿ-ում»:

Ֆրանսիայում լույս տեսնող «Նուվել դ'Արմենի» ամսագրի՝ 1998թ. սեպտեմբեր-հոկտեմբեր միացյալ համարում հրատարակվեց

Վալանսի քաղաքապետ Պատրիկ Լաբունի նամակը՝ ուղղված Ֆրանսիայում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Աքին Ալգանին: Քաղաքապետի պատասխան նամակը վերաբերում է 1998թ. մարտի 30-ին Վալանսի քաղաքապետարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշում կայացնելուն, որը առիթ էր դարձել հուլիս ամսին Թուրքիայի արտգործնախարարության հրապարակած նոտային:

Թուրքական նոտան կրկնում էր բազմիցս ներկայացվող «մեղադրանքները», հայտարարելով, որ Ֆրանսիան, ընդունելով մայիսի 29-ի որոշումը, «քաջալերում է ռասայական բնույթ կրող ահաբեկչությունը», որ ցեղասպանություն չի եղել, որ Ազգային ժողովի որդեգրած որոշումը անխուսափելիորեն ազդելու է Թուրքիայի և Ֆրանսիայի միջև քաղաքական ու տնտեսական հարաբերությունների վրա:

Ահա թե ինչ է գրում իր պատասխանում Վալանսի քաղաքապետ Պատրիկ Լաբունը.

«Պրն. Գլխավոր հյուպատոս.

Ստացա և մեծագույն հետաքրքրությամբ կարդացի Ձեր՝ ինձ ուղարկած փաստաթուղթը:

Նրա բովանդակությունը սկանդալային է, քանզի շարունակվում է թուրքական պետության 1920թ-ից ի վեր որդեգրած ուղիղունիստական քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը ժխտում է Հայկական ցեղասպանությունն իրագործած երիտթուրքերի վարչակարգի և այդ փաստն ուրացող թուրքական ներկայիս պետության միջև առկա մեղսակցությունը:

Դուք պետք է իմանաք, որ միայն Ձեր դիվանագիտական անձեռնմխելիությունն էր, որ արգելեց ինձ դատարանի առաջ Ձեզ պատասխանատվության կանչել:

Յանկանում եմ արտահայտել Վալանսի քաղաքային խորհրդի ողջ ցասումը Թուրքիայի (Ֆրանսիայի նկատմամբ) վարած տնտեսական նենգ քաղաքականության և թուրքական պաշտոնական մամուլի էջերում նրա հակաֆրանսիական առեւտրային արշավի առթիվ:

Ինչպե՞ս կարող է Թուրքիան ձաղկել Ֆրանսիային՝ եվրոպա-

կան իր գլխավոր ներդրողին և Եվրամիություն մտնելու գործում իր ամենաջերմ սրաշտպանին:

Ամոթ էր Չեր գրության մեջ կարդալ, որ իբր Ֆրանսիայի Ազգային ժողովը բաջալերում է քաղաքական ահաբեկչական շարժումները:

Յնցող է տեսնել, որ Թուրքիան Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանությունը և ինքնորոշման շարժումները համարում է գավթում, մինչդեռ Թուրքիան գինվորական հսկողության տակ է պահում Կիլլոսի Հանրապետության մեկ երրորդ մասը:

Իսկ ինչ վերաբերում է Չեր այն պնդմանը, թե Հայաստանն է տարածաշրջանի անկայունության գլխավոր աղբյուրը, կարծում եմ, որ այդ արտահայտությունն ավելի պատշաճ է այն պետությանը, որ ոչնչացնում է իր քուրդ ազգաբնակչությանը, որ գրավում է Կիլլոսի մեկ երրորդը, սպառնում է Եվրամիության անդամ Հունաստանին, որ շանտաժի է ենթարկում Սիլիային՝ գրկելով նրան ջրից, որ տնտեսական շրջափակում է պարտադրում Հայաստանին, որ ոտնակոխում է մարդու իրավունքները, և որի ստեղծումն ու գոյության իմաստը իր փոքրամասնությունների ոչնչացման, իր հարևանների նկատմամբ ռեպրեսիվիզմի և զավթողական քաղաքականություն վարելու մեջ է:

Ժամանակն է, որ թուրքական իշխանությունները հետևեն հետզհետե ստվարացող թուրք այն քաղաքացիների օրինակին, որոնք ցանկանում են պատմական փաստերի ընդունումը, հարևան պետությունների միջև խաղաղ հարաբերությունները և նրանց ժողովուրդների միջև բարեկամությունը:

Ի վերջո, թույլ տվեք Չեզ մի անձնական հարց ուղղել վաղը, երբ ողջ աշխարհը ճանաչի Հայկական ցեղասպանությունը, և թուրքական կառավարությունն էլ նույնը անի, ի՞նչ էք կարդալու Չեր երեխաների աչքերի մեջ:

Խնդրում եմ, ընդունեք, պրն Գլխավոր հյուպատոս, իմ ջերմ ողջույնները:

ՊԱՏՐԻԿ ԼԱՌՈՆ,
«Կալանսի քաղաքապետ Ֆրանսիա»

Փարիզում, պատասխանելով «Ազգ» թերթի թղթակցի հարցերին (26 նոյեմբերի 1998թ.), «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամության խմբի փոխնախագահ Բեռնար Պիրան ասել էր.

«*Հարց* – Առաջին անգամ Սենատի նախագահը գոլիստ է: Նախկին և ներկա նախագահների կողմնակիցների միջև նախագահական ընտրությունների ժամանակ ծավալված բռնուն վիճաբանությունները կարո՞ղ են բացասական ազդեցություն ունենալ ձախերի նախաձեռնությամբ ընդունված օրինագիծը օրակարգում դնելու հարցում:

Պատասխան – Չեմ կարծում, թե դա է խնդրի էությունը: Ազգային ժողովը կարողացավ արարողակարգի ընթացքում արդյունավետ գործել, քանզի այնտեղ միացյալ ձախերը մեծամասնություն են կազմում: Սենատում, ընդհակառակը, ձախերը չեն կարող դա անել, քանի որ մեծամասնություն են կազմում աջ ուժերը, որոնք կարող են օգտագործել իրենց առավելությունը: Ազգային ժողովում միացյալ ձախերի հանդես բերած նախաձեռնությունը լավ նախաձեռնություն է: Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խումբը կողմնակից է, որ մենք հետևենք Ազգային ժողովի օրինակին: Խնդիրն այն է, թե ինչպես գտնենք դրան հասնելու եղանակը:

Հարց – Օրինագծի առթիվ ձեր խումբն արդեն դիմե՞լ է Սենատի նոր նախագահին:

Պատասխան – Ոչ: Մենք գրավոր դիմելու ենք մինչև նոյեմբերի վերջը:

Հարց – Ֆրանսիա-Թուրքիա բարեկամության խմբի նախագահ պարոն Դելոնը հայտարարեց, թե ջանք չի խնայի, որպեսզի օրինագիծը սառեցվի Սենատում: Դա ողջունելի անկեղծություն է: Իսկ ձեր խումբը ինչպիսի՞ ջանքեր կգործադրի՞ մրցակցի ճամբարի այդ նպատակադրմանը հակադդելու համար:

Պատասխան – Որպես Ֆրանսիա-Հայաստան խմբի փոխնախագահ՝ հայտարարում եմ, որ հնարավոր ամեն ինչ կանեն, որպեսզի Սենատը հետևի Ազգային ժողովի օրինակին: Եթե նախագահը և արտգործնախարարությունը համաձայն լինեն, սառեցում չի լինի:

Հարց – Ազգային ժողովը օրինագիծն ընդունեց առանց նախագահի և ԱԳՆ-ի համաձայնությունն ստանալու: Պատճառը

թերևս այդ համաձայնության անհնարիությունն է:

Պատասխան – Կարծում եմ, արդյունքի կհասնենք, բայց ոչ առաջիկա ամիսներին: Դրա համար կպահանջվեն որոշակի ժամանակ և աշխատանք: Մենատում մեծամասնություն կազմող՝ Հանրապետությանն աջակցող միավորման և Ֆրանսիայի ժողովրդավարության միության ներկայացուցիչները, որոնք դաշնակիցներ են, ոչինչ չեն անի առանց նախագահի համաձայնության: Բայց պետք է լավատես լինել, եթե Ազգային ժողովն այդ համաձայնությունը չունեցավ, դա չի նշանակում, թե մենք էլ չենք ունենա:

Հարց – Արտգործնախարարության խոսնակ Անն Գազո Սեկրեն իր հարցազրույցի ժամանակ հայտարարեց, թե Մենատը որոշումներ ընդունելու բացարձակ ազատություն ունի, ինչպես Ազգային ժողովը:

Պատասխան – Միանգամայն ճիշտ է: Երբ խոսքը օրենսդրական նախաձեռնության մասին է, տեղի է ունենում իրավաբանական քննարկում, բայց տվյալ դեպքում խոսքը ոչ թե օրենքի, այլ բանաձևի մասին է: Բոլոր բանաձևերը բխում են կամ կառավարությունից, կամ էլ մի խումբ սենատորներից: Սա է օրինագծի և օրենսդրական նախաձեռնության տարբերությունը: Քանի որ Ազգային ժողովում, կրկնում եմ, այդ գաղափարը մտահղացումն էր մեծամասնություն կազմող միացյալ ձախերի, որոնք օգտագործեցին իրենց առավելությունը, Մենատում մենք փոքրամասնություն ենք կազմում, ուստի այդ ուղին մեզ համար միևնույն ձևով մատչելի չէ: Բայց Մենատի աջ ուժերը կարող են օգտագործել իրենց առավելությունը:

Հարց – Չեր խմբի նախագահ պրն Ուդենի կարծիքով, այս գործում գլխավոր խոչընդոտը օրինագծի իրավաբանական կողմն է: Կարծու՞մ եք, որ տեքստը իրոք գուրկ է օրենսդրական ուժից:

Պատասխան – Ես իրավաբան կամ սահմանադրության մասնագետ չեմ, բայց կարծում եմ, չենք կարող այդ տեքստը ներկայացնել որպես օրենք: Մենք կարող ենք ընդունել որևէ փաստի գոյությունը, բայց չենք կարող օրենքի ուժ տալ որևէ սպատմական փաստի: Եթե տեքստն օրենսդրական նախաձեռնության ձևով ներկայացնենք օրենսդրական հանձնաժողովի քննարկմանը, դա բարդություն կստեղծի: Դրանից խուսափելու համար հարկ կլինի այն ներկայացնել որպես բանաձևի նախագիծ: Իմ գործընկերների այս

պատրվակները վերաբերում են տեքստի իրավաբանական կողմին, բայց չեն կազմում խնդրի էությունը, որը Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչումն է: Իմ կարծիքով կարևորը ոչ թե օրենքն է կամ բանաձևը, այլ այն փաստը, որ Ֆրանսիայի խորհրդրդարանն իր ժողովրդական ներկայացուցչության շնորհիվ ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, մյուս խորհրդարաններին դրդելով անել նույնը, ինչպես արեց մարդու իրավունքների հարցում: Խնդրի էությունն ի վերջո միջազգային ճանաչման հասնելն է: Եթե ժամանակին պետությունները քաջություն ունենային միջազգային մակարդակով ճանաչելու այդ փաստը, թերևս տեղի չուներային XX դարի մյուս ցեղասպանությունները:

Հարց – Հնարավո՞ր է, որ խորհրդարանի երկու պալատները նույն տեքստը ընդունեն տարբեր ձևակերպումներով:

Պատասխան – Իհարկե, հնարավոր է: Խոսքը երկարատև, բայց միանգամայն իրագործելի ընթացակարգի մասին է:

Հարց – Մենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ պրն դը Վիլպենը, որից հարցազրույց էի խնդրել, հայտարարեց, թե իր կարծիքով դեռ վաղ է խոսել այդ հարցի մասին: Ի դեպ, նույն պատասխանը տվեց նաև Մենատի նախկին նախագահ պրն Մոնորին: Այդ բոլոր խոսանավումները չե՞ն վկայում, թե առկա է օրինագիծը թաղելու դիտավորություն:

Պատասխան – Չեմ կարող կանխավ դատողություններ անել, բայց պարզ է, որ առաջիկա չորս ամսում ոչինչ չի պատահի, և որ օրինագիծն օրակարգում կարող է դրվել միայն սոցիալիստների, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի, ԱԺ-ի մեր գործընկերների ուժգին ճնշմամբ, ըստ որում թե կառավարության և թե հանրապետության նախագահի մակարդակով:

Հարց – Ինչպես իրավացիորեն նշեց Փարիզում հավատարմագրված թուրք լրագրողներից մեկը, Մենատի վրա ամենատուժեղ ճնշումները կգործադրեն ավելի շուտ ֆրանս-թուրքական տնտեսական հարաբերություններով շահագրգռված ֆրանսիացի գործարարները, քան ինքը՝ Թուրքիան:

Պատասխան – Այդ ճնշումները բնականաբար անխուսափելի են: Նման դեպքերում լոբբիստական ուժերը բացահայտ են գործում: Թուրքամետ ուժերն ինչու՞ պետք է առիթը բաց թողնեն:

Հարց – Հնարավո՞ր էք համարում համաձայնությունը Ֆրանսիա-Թուրքիա բարեկամության խմբի հետ:

Պատասխան – Մենք կհանդիպենք ոչ միայն Ֆրանսիա-Թուրքիա խմբի, այլև Ֆրանսիա-Ադրբեջան և Ֆրանսիա-Վրաստան խմբերի հետ արտաքին գործերի հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հարց – Այդ հանդիպման ժամկետը և քննարկումների գլխավոր թեման հայտնի՞ են:

Պատասխան – Առաջիկա օրերին մամակ ենք ուղարկելու, ինչը թույլ կտա հանդիպումն անցկացնել հաջորդ ամիս: Ինչ վերաբերում է դրա նպատակին՝ Մենաստում օրինագծի քննարկման հնարավորության ստեղծումն է:

Հարց – Ստույգ ժամկետներ նախատեսվա՞ծ են օրենսդրական և արտաքին գործերի հանձնաժողովներում տեքստի քննարկման համար:

Պատասխան – Այս հարցին չեն կարող պատասխանել, բայց կարող են հավաստիացնել, որ հանձնաժողովները կմասնակցեն վերոհիշյալ ժողովի աշխատանքներին:

Հարց – Ենթադրենք օրինագիծն ի վերջո հայտնվեց Մենատի օրակարգում, այդ դեպքում քվեարկությունը նման կլինի՞ ԱԺ-ի քվեարկությանը:

Պատասխան – Կարծում են, օրակարգում տեքստի հայտնվելու դեպքում դեն քվեարկելու ցանկություն ունեցող սենատորները չեն մասնակցի նիստին, ինչպես եղավ ԱԺ-ում, որտեղ միա-համուռ քվեարկությունն ապահովվեց ընդդիմադիրների բացակայության պայմաններում:

Հարց – Եթե Մենատը սառեցներ օրինագիծը, կկարողանա՞ր ժխտել պատասխանատվության իր բաժինը քաղաքական այն սխալի մեջ, որ միջազգային առումով կներկայացվեր Ֆրանսիային: Ի դեպ, մերժումը կբացահայտե՞ր խորհրդարանի երկու պալատների խոր տարածայնությունները:

Պատասխան – Իրոք, միջազգային առումով սխալ կլիներ մերժել այդ ճանաչումը: Ինչ վերաբերում է տարածայնություններին, դրանք ակնհայտ են: Այդուհանդերձ, նման արդար դատի առթիվ համաձայնության կայացումը միանգամայն ցանկալի կլիներ»:

Դեռևս 1998թ. մայիսի 3-ին Անկարայում ընդունելով թուրք-ամերիկյան միությունների համաժողովի պատվիրակություններին, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հայտարարեց, որ արևմտյան մի շարք կառույցներ ջանում են վերակենդանացնել Սևրի պայմանագիրը, ինչը, սակայն, չի հաջողվելու: Միաժամանակ, ինչպես տեղեկացնում է Պոլսո «ժամանակ» օրաթերթը, Դեմիրելը հունիսի 3-ին հանդես եկավ Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից մայիսի 29-ին Հայոց ցեղասպանության մասին ընդունված որոշման կապակցությամբ: Նա հույս հայտնեց, որ Ֆրանսիայի Սենատը չի վավերացնի այդ որոշումը: Դեմիրելը շիւնայեց նաև Ֆրանսիայում «հակաթուրք լրբքիին» և ասաց. «Օսմանյան կայսրությունից 26 պետություններ ձևավորվեցին: Դրանցից միայն երկուսը չկարողացան ստեղծվել՝ հայկական ու քրդական պետությունները, որոնք չեն էլ կարողանալու ստեղծվել: Թուրքիայի սահմաններից ներս այս ուղղությամբ նկրտումների ունեցողներ կան, սակայն նրանք իրենց ավին են լիզում»:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությանը, Դեմիրելը հավաստիացրեց, որ վերջինիս ստեղծումից անմիջապես հետո Թուրքիան ճանաչեց և բարեկամաբար տրամադրվեց նրա նկատմամբ: «Սակայն նրանց (հայերի) առաջին գործը եղավ Կովկասում պատերազմ հրահրելը: Արտասահմանի հայերը մեծ սխալ են գործում Թուրքիայի դեմ թշնամություն մղելով», – ասաց Դեմիրելը և ավելացրեց, որ թեև Ֆրանսիան Թուրքիայի բարեկամն է, սակայն նրա վերջին որոշումը հուզում է պատճառում:

Եվ այդպես «հուզված» նախագահ Դեմիրելը կրկին շեշտեց, որ մի շարք կառույցներ դեռևս չեն մոռացել Սևրը: «Թուրքիան ուժեղ է և ինքնապաշտպանության կարողություն ունի: Եթե ամբողջ աշխարհը միավորվել է թշնամություն գործելու մեր դեմ, ապա Թուրքիան դրան էլ կդիմադրի», – ասաց նա: Ըստ Դեմիրելի, Հայկական հարցը օրակարգ է մտել Հայաստանի Հանրապետության ստեղծումով, մինչդեռ նախապես հայտարարվել էր, որ անկարելի է անցյալի դեպքերի պատճառով թշնամաբար տրամադրվել հայերի դեմ, և նրանք կարող են օգտվել Թուրքիայի նավահանգիստներից, օդային տարածությունից և երկաթուղիներից:

Ֆրանսիայի Ազգային ժողովի բացումից մեկ օր առաջ՝ մայիսի 28-ին, թուրքական «Հյուրիյեթ» քերթում հրապարակվեց Թուրքիայի վարչապետ Մետուք Յըլմազի նամակը՝ ուղղված Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենին:

«Պարոն վարչապետ

Ես տազնասպով իմացա, որ սոցիալիստ պատգամավորներն Ազգային ժողովին ներկայացրել են որոշ թվով օրինագծեր, որոնց նպատակը ենթադրյալ Հայոց ցեղասպանության ճանաչումն է Ֆրանսիայի կողմից: Ինձ հասած տեղեկությունների համաձայն այդ օրինագծերն ուղարկվել են արտաքին գործերի հանձնաժողով և ընդգրկվել Ազգային ժողովի 1998թ. մայիսի 28-ին նշանակված ամենամսյա նստաշրջանի օրակարգում, որը նվիրված է խորհրդարանական նախաձեռնություններին:

Դուք, անկասկած, կհամաձայնեք, որ 83-ամյա վաղեմության իրադարձությունները ցեղասպանություն համարել-չհամարելու հարցը պետք է լուծեն ավելի շուտ սլատմաբանները, քան քաղաքական գործիչները: Պատմությունը չպետք է մեկնաբանվի քաղաքական կրքերի տեսանկյունից, խորհրդարանական ատյանը դարձնելով ժողովրդական դատարան:

Ուստի ես ինձ իրավունք վերապահեցի Չեզ գրել, որպեսզի իմ խորին մտահոգությունը հայտնեն այն վնասակար հետևանքների առթիվ, որ մեր երկկողմ հարաբերությունների վրա կարող է ունենալ նման օրենքի ընդունումը: Ինքնին հասկանալի է, որ որևիցե ատյանի կողմից «Հայոց ցեղասպանության» ճանաչումը Թուրքիան կհամարի անվավեր և ուժ չունեցող: Այդուհանդերձ, թուրք ժողովուրդն անչափ զգայուն է Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած ցավալի դեպքերի բնութագրման առնչությամբ «ցեղասպանություն» բառի կիրառման նկատմամբ և իրեն անարդարացիորեն մեղադրված է զգում մի ոճրի համար, որն ինքը չի գործել թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի մեծ տառապանքների ժամանակաշրջանում:

Ես կարծում եմ, որ 80-ական թվականների տխուր հիշողությունը, երբ մեր երկու երկրների հարաբերությունները վատացան հայկական «ցեղասպանության» ճանաչման օգտին Ֆրանսիայի այն ժամանակվա կառավարության բռնած դիրքի պատճառով, պետք է մեկընդմիջտ թաղվի: Երկու կողմերն էլ շատ ջանքեր գոր-

ծաղրեցին՝ համագործակցության և փոխըմբռնման հիմքի վրա այդ հարաբերությունները վերսկսելու նպատակով: Ես կարող եմ հեշտությամբ կանխատեսել, որ Ֆրանսիայի խոբիդարանի սույն նախաձեռնությունը կվնասի մեր ժողովուրդների մեծ հույսերի աղբյուր թուրք-ֆրանսիական բարեկամությանն ու համագործակցությանը այն ժամանակահատվածում, երբ մենք կրկնապատկում ենք ջանքերը՝ «Թուրքիա-Ֆրանսիա-2000» համաձայնագրի շրջանակներում համագործակցության նոր կառույց ստեղծելու նպատակով:

Չեզ թախանձագին խնդրում եմ հնարավոր բոլոր միջոցները գործի դնել Ազգային ժողովում այդ օրինագծի ընդունումը ձախողելու համար: Հաճեցեք ընդունել, պարոն վարչապետ, հարգանքներիս հավաստիքը:

Վարչապետ ՄԵՍՈՒԹ ՅԸԼՄԱԶ
Անկարա, 19 մայիսի, 1998թ.»::

Մեզ հայտնի չէ, թե ինչպիսի արձագանք ունեցավ Թուրքիայի վարչապետի նամակը ֆրանսիական ղեկավար շրջանակներում, սակայն Ազգային ժողովի պատգամավորները գտնվեցին իրենց բարձրության վրա:

Ի պատասխան այդ նամակի, նվաստս բաց նամակ հղեց Թուրքիայի վարչապետին, որն առաջին անգամ հրապարակվեց 1998թ. հունիսի 17-ին Բեյրութի «Արարատ» օրաթերթում¹.

«Մեծարյոգ պարոն վարչապետ,

Մայիսի 28-ին «Հյուրիյեթ» թերթում հրապարակվեց դեռևս մայիսի 19-ին Անկարայից Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենին ուղարկված Ձեր նամակի տեքստը, որտեղ տազնապ էիք հայտնում սոցիալիստ պատգամավորների կողմից Ազգային ժողովին ներկայացված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագծի կապակցությամբ:

Ձեր նամակը հրապարակվեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նիստի նախօրյակին, և Դուք դեռևս հավատացած չէիք, որ հաջորդ օրը միաձայն, հոտնկայս ծափահարություններով ներկայացված օրինագիծը կընդունվեր կարճ, սակայն մեծ իմաստ արտահայտող ձևակերպմամբ. «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է հայերի 1915 թվականի ցեղասպանությունը»:

Ինչպես տեսաք, Ձեր և Ֆրանսիայի Ազգային ժողովի նախա-

գահին հասցեագրված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Հիքմեթ Չեքինի նամակները իրենց նպատակին չհասան:

Ֆրանսիայի Ազգային ժողովի երկու ժամ քառասուն րոպե տևած նիստը արդարության և ճշմարտության հասնելու մի նոր դրսևորում էր, որով հանդես եկան ֆրանսիացի պատգամավորները: Փաստորեն քննարկեցին և խոսեցին մի արգելված թեմայի մասին, քանի որ մինչև վերջերս էլ Արևմուտքի ժողովրդավարական մեծ երկրներից և ոչ մեկը 1915 թվականի ցեղասպանությունը չէր անվանել իր անունով: Եվ պատահական չէր, որ մայիսի 29-ի նիստից հետո ֆրանսիացի շատ պատգամավորներ խոստովանեցին՝ «Ազգային ժողովը ընդունում է իրեն պատիվ բերող որոշումներ»:

Եկեք, անկեղծ լինենք, չնայած Ազգային ժողով ներկայացրած օրինագծի մեղմ և թերի ձևակերպմանը, Ֆրանսիայի վարչապետին հասցեագրված Ձեր նամակում ուղղակի փորձել եք առարկել ու հիմնավորել Հայոց ցեղասպանությունը հերքելու Ձեր հիմնական դրույթները: Դուք գտնում եք, որ

1. «...83-ամյա վաղեմության իրադարձությունները ցեղասպանություն համարել-չհամարելու հարցը պետք է լուծեն ավելի շուտ պատմաբանները, քան քաղաքական գործիչները»:

2. «...որ որևիցե ատյանի կողմից «Հայոց ցեղասպանության» ճանաչումը Թուրքիան կհամարի անվավեր և ուժ չունեցող»:

3. «Այդուհանդերձ, թուրք ժողովուրդն անչափ զգայուն է Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած ցավալի դեպքերի բնութագրման առնչությամբ «ցեղասպանություն» բառի կիրառման նկատմամբ և իրեն անարդարացիորեն մեղադրված է զգում մի ոճրի համար, որն ինքը չի գործել թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի մեծ տառապանքների ժամանակաշրջանում»:

Փաստորեն Դուք փորձում եք կրկնել դեռևս տասնյակ տարիներ առաջ Ձեր իսկ պատմաբանների կողմից մշակված և Ձեր Հանրապետության նախկին ղեկավարների կողմից որդեգրած այն հայեցակետը, ըստ որի Թուրքիայում 1915-1922թթ. տեղի ունեցած իրադարձությունները ցեղասպանություն համարել-չհամարելու

¹ Բաց նամակ Թուրքիայի հանրապետության վարչապետին, «Արարատ» (օրաթերթ), Բեյրութ, 17 հունիսի 1998, թիվ 166, 18 հունիսի 1998, թիվ 167; «Գիտություն» (շաբաթաթերթ), Երևան, 1-15 հուլիսի 1998, թիվ 13 (122):

հարցը պետք է լուծեն ավելի շուտ պատմաբանները, քան քաղաքական գործիչները:

Ջարմանալի տրամաբանություն: Ինչպես կարող են պատմաբանները այդ հարցը լուծել, երբ այդ հարցը քաղաքականացված է, երբ այն Ձեր երկրի արտաքին պետական քաղաքականության դոկտրինայի անկյունաքարն է կազմում դեռևս 1919 թվականից:

Այսօր էլ դեռ որպես մեծ պատգամ Թուրքիայի կառավարող շրջանների համար ուղենիշ է դարձել Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահի՝ Մուստաֆա Քեմալի՝ 1919թ. դեկտեմբերի 31-ին Անկարայում կատարած այն հայտարարությունը, ըստ որի «...մեր դեմ հարուցված մեղադրանքներն անհիմն են»: Այս խոսքերն ասվեցին Հայոց ցեղասպանությունը հրահրողների ու կազմակերպիչների դատավարությունից ընդամենը հինգ ամիս անց, ու փորձ կատարվեց ընդմիջտ մոռացության տալ այն, անտեսելով նրա կազմակերպման փաստը. ներկայացված մեղադրանքների բուն էությունը, հանցագործության ասպացուցման անհերքելի նյութերի առկայությունը, մեղադրական եզրակացությունը և վերջապես կայացված դատավճռի անվիճելի նշանակությունը որպես կարևոր մի իրադարձություն, որի կողքով դժվար էր լռելյայն անցնելը: Գուրք պատմությունից քաջատեղյակ եք, որ Առաջին համաշխարհային պատերազմը ավարտվեց Թուրքիայի ջախջախիչ պարտությամբ: 1918թ. օգոստոսի 30-ին Մուդրոսում ստորագրվեց զինադադարի պայմանագիր, իսկ նոյեմբերի 2-ի գիշերը գերմանական ռազմական նավով գաղտագողի Թուրքիայից փախուստի դիմեցին կառավարության և իշխող կուսակցության պարագլուխներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Շաքիրը, Նազըմը, Ազմին և ուրիշներ:

Այս փաստը առիթ դարձավ, որպեսզի Թուրքիայում պատերազմից դժգոհ հասարակական խավերը, կառավարության և իշխող կուսակցության հակառակորդները սկսեն հրապարակայնորեն դատապարտել պատերազմի հանցագործներին, հայերի ցեղասպանությունը հրահրողներին ու կազմակերպիչներին:

Տեղի տալով աճող հասարակական կարծիքին, Թուրքիայի խորհրդարանը 1918 թվականի հոկտեմբերի 10-ին գումարեց հետպատերազմյան իր առաջին նիստը: Խորհրդարանը վիճակահա-

նությանը ստեղծեց այսպես կոչված «Հինգերորդ հանձնախումբը», որին հանձնարարվեց հարցաքննության ենթարկել պատերազմի ժամանակ Մայիդ Հայլմի և Թալեսթի գլխավորած կառավարության պաշտոնյաներին և որոշել նրանց դատական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նոյեմբերի 4-ին, նոյեմբերի 18-ին, դեկտեմբերի 9-ին, դեկտեմբերի 11-ին, դեկտեմբերի 12-ին տեղի ունեցան խորհրդարանի նիստերը:

Խորհրդարանում առաջին հարցը, որ հնչեց, վերաբերում էր Թուրքիայի հայ բնակչության ողբերգությանը: Եվ պատահական չէր, որ խորհրդարանի նախագահին ներկայացված գրավոր հարցապնդման մեջ հույն պատգամավոր Էմմանուել Էմմանուելիտինն պահանջում էր պատասխանել, թե ինչու՞ ոչ մի հանցանք չգործած մեկ միլիոն մարդ, առանց բացառության կանանց ու երեխաների, սպանվեցին ու ոչնչացան միայն հայ ազգին պատկանելու համար:

Տրապիզոնից պատգամավոր Մեհմեդ Էմինը առաջին իսկ խորհրդարանական նիստում կառավարությունից պահանջեց պաշտոնապես հայտարարել, որ կձեռնարկվեն երկրի ներսում կատարված բոլոր ոճիրների հետաքննությունը և նրանց պատասխանատուներին պատժելու գործը:

«...Ես այդ կառավարությանը վստահության քվե չեմ տա, այո, իրոք երկրի ներսում կատարված ոճիրները հետաքննության ենթարկելը և պատասխանատուներին պատժելը արդարության օրինավոր պահանջն է և թե այս ժողովը և թե այս ազգը ամբողջովին համաձայն են այդ պահանջներին», – ամբիոնից հայտարարել էր թուրք պատգամավորը:

Թուրք պատմաբաններին, ղեկավար գործիչներին և կառավարության ղեկավարներին հայտնի է, որ ուրսում տարի առաջ Թուրքիայի խորհրդարանում հայ, հույն և նրանց միացած առանձին թուրք պատգամավորների ելույթները, որոնք լայնորեն լուսաբանվում էին թուրքական և արտասահմանյան մամուլում, սուլթանին ստիպեցին վճռական քայլերի դիմել՝ համաշխարհային կարծիքի ճնշումից խուսափելու համար:

1918թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիայի վարչապետ Ահմեդ Իզզեթը որոշում ստորագրեց հայերի զանգվածային ոչնչացման և

սյատերազմի մեջ Թուրքիայի մտնելու հանգամանքների ուսումնասիրման ու մեղավորներին դատապարտելու համար հատուկ հետաքննական հանձնաժողովներ ստեղծելու մասին:

Օսմանյան կայսրությունը բաժանվեց տասը տարածքային շրջանների, որոնցից յուրաքանչյուրում նշանակվեցին դատախազներ, դատական քննիչներ, դատավորներ և դատարանների քարտուղարներ: Մի քանի օրվա ընթացքում կալանքի վերցվեցին շատ նախարարներ, նահանգապետներ, պետական ու կուսակցական ղեկավար սպաշտոնյաներ:

1919թ. հունվարի 8-ին Ստամբուլում ստեղծվեցին ռազմական երեք դատարաններ: Ապրիլի 8-ին ավարտվեց Յոզղաթի գավառի հայ բնակչության տեղահանության և ոչնչացման մեջ մեղադրվող հանցագործների դատավարությունը: Ապրիլի 27-ին սկսվեց Թուրքիայի Մեծ վեզիր Սալիդ Հալիմ փաշայի և մի խումբ նախարարների դատավարությունը, որը տևեց մինչև հունիսի 26-ը:

Մայիսի 22-ին ավարտվեց Տրապիզոն քաղաքի և նահանգի հայ բնակչության տեղահանության և ջարդերի գործով մեղադրվող հանցագործների դատավարությունը:

Կայացված դատավճիռների համաձայն տարբեր ժամկետներով բանտարկության դատապարտվեցին հայերի ցեղասպանության կազմակերպման մեջ մեղադրվող մեծ թիվ կազմող հանցագործներ, այդ թվում՝ մեծ վեզիրը, կուսակցության առաջին քարտուղարը, կենտրոնական կոմիտեի անդամները, մեջլիսի նախագահը, շեյխու ուլ իսլամը, արտաքին գործերի, ներքին գործերի, սոցիալական ապահովության, կապի նախարարները, սենատի նախագահը, հեռակա կարգով փախուստի մեջ գտնվող կրթության, առևտրի, գյուղատնտեսության, ազգային անվտանգության, ֆինանսների նախարարները: Հեռակա կարգով Թուրքիայի քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի թիվ 1 կետով մահապատժի դատապարտվեցին մեծ վեզիր, ներքին գործերի նախարար Թալեթ փաշան, պաշտպանության նախարար Էնվեր փաշան, ռազմածովային նախարար Ջեմալ փաշան և կրթության նախարար Նազիմ փաշան:

Մեծարգո՝ վարչապետ, ուղղակի հիշեցման կարգով ցանկանում եմ քաղվածաբար ներկայացնել ռազմական արտակարգ ատյանի 1919թ. հուլիսի 5-ի դատավճռից մի քանի հատված, որոնք

հրապարակվեցին մամուլում («Takvimi vekayi, 5 Temmuz 1335 (1919), N3604):

Այս դատավճիռը, որը սակայն այսօր մոռացության է տրվել Թուրքիայում, հայտնի էր աշխարհի իր ժամանակի համարյա բոլոր քաղաքագետներին ու պատմաբաններին: Ձեզ հետ միասին կարդանք դատարանի արձանագրության և դատավճռի առանձին հատվածներ.

«...Ռազմական առյուծի դատավարության վերջում բացահայտվեց, որ Տրապիզոնում, Յոզղաթում, Բողազլյանում և այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և գործադրվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից: Դատապաշտպանության ընթացքում նշվեց, որ այդ կոտորածների մասին իբրև թե նրանք տեղեկացել են գործադրվելուց հետո: Մինչդեռ լիովին բացահայտվեց, որ այդ մասին իրազեկ դառնալուց հետո էլ ոչ մի միջոց չի ձեռնարկվել այդ կոտորածները կանխելու համար:

...Այսպիսով, լիովին բացահայտվում է, որ կոտորածի գործադրման որոշումը հիմնականում համաձայնեցվել է երեքի միջև:

...Վերոհիշյալ (մեղադրյալների) պատժի չափը քննարկելու ընթացքում նկատի առնվեց, որ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և դոկտոր Նազըմի կատարած հանցագործ արարքները չափազանց ծանր են, ուստի որոշվեց նրանց դատել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով:

...Օրենսգրքում առկա այս հոդվածների հիման վրա Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազըմը դատապարտվում են մահվան, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը, Մուսա Քյազիմը՝ 15-ական տարի ժամկետով աքսորի:

...Սույն դատավճիռը միաձայն ընդունվեց...»:

1919թ. Ստամբուլում լույս տեսավ թուրք նշանավոր պատմաբան Ահմեդ Ռեֆիկի (Ալթընայ) «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» գիրքը: Ահա ինչ է գրում նա հայերի դեմ կազմակերպված ոճրի մասին. «Այս մեծ ոճրի իրականացումը արդարացված պատկերելու նախատակով քարոզչական ու նախապատրաստական անհրաժեշտ հիմնավոր աշխատանքներ էին կատարվել: Լուրեր էին տարածում, թե հայերը միանալու էին քջնամուն, Ստամբուլում ապստամբություն էին

բարձրացնելու, սպանելու էին «Իթթիհաթի» առաջնորդներին ու ձգտում էին բացել նեղուցը: Այս նողկալի խաբեությունները կարողացան հաճոգել միայն հասարակ ժողովրդի այն հատվածին, որը չէր գիտակցում իր քաղցած լինելը: Ավելի լավ կլինեք, որ իթթիհաթականների օրոք հայերը հաջողություն ունենային, այդժամ և Թուրքիան. և թուրքերը փրկված կլինեին արկս ծախնդիրների գերիշխանությունից, հայերը հավերժ կվայելեին թուրքերի երախտագիտությունը: Եթե հայերը տարված լինեին անկախության ու փրկության գալափարներով, նրանց իրենցիկ իրականացման գեթ մի փորձն անգամ կարող էր ամեն ինչ տակն ու վրա անել, քանզի իթթիհաթականների անկումը պատճառ կհանդիսանար երկրում համաձայնության ու խաղաղության կողմնակից կուսակցության՝ իշխանության գլուխ գալուն»: Մեկ այլ տեղում նշանավոր պատմաբանը գրում է. «Այս ողբերգությունն իմանալով՝ հնարավոր չէր չվշտանալ: Միանշանակ էր, որ մի օր սրա պատասխանը պահանջվելու էր: Այս ամենը մարդկության անվան տակ կատարված հանցագործություններ էին: Երբևէ ոչ մի իշխանություն այս աստիճան դաժան չի գործել: Այլուսով ուղեկցվող հայերի տեղահանությունները երկիրը զրկեցին կարևոր մի տարրից»:

Հայոց ցեղասպանության անհերքելի փաստը և նրա ընդունումը անհնար է անվավեր համարել և ուժ չունեցող ճանաչել: Այս առումով անհասկանալի է Ձեր նամակի այն մասը, որտեղ հաճոգված հայտարարում եք, թե՝ «ինքնին հասկանալի է, որ որևիցե ատյանի կողմից «Հայոց ցեղասպանության» ճանաչումը Թուրքիան կհամարի անվավեր և ուժ չունեցող»:

Դիմենք Ձեր պատմաբանների օգնությանը: Նրանց շնորհիվ երիտթուրքերի ոճրագործությունը լայնորեն չլուսաբանվեց, սխալ գնահատականներ տրվեցին, որի հետևանքով թուրք հասարակայնության զգալի մասը մինչև այսօր էլ չգիտի ճշմարտությունը: Տասնամյակներ շարունակ նոր սերունդներից բացթրեցին պատմական իրողությունը: Քարոզչական մեքենան իր շուրջը համախմբեց և այժմ էլ համախմբում է նաև օտարերկրացի բազմաթիվ գիտնականների ու հրապարակախոսների, որոնք փորձեցին «մոռացված ցեղասպանությունը» դարձնել «վիճելի ցեղասպանություն» և ընդհանրապես հերքել ու ժխտել իրագործված ոճրագործության

իրողության փաստը:

Սակայն դժվար չէ ճշմարտությունը զանազանել կեղծիքից: Եվ պատահական չէ, որ հայերի ցեղասպանությունը հավերժ մոռացության տալու քարոզչությունը հաջողություն չունեցավ:

Երկարատև և ինչ-որ մի տեղ հանցավոր լռությունը խախտվեց: Ծշմարտության և արդարության հնչեղ ձայնը, որը միջազգային հանրության բերանից հնչեց, լսելի դարձավ ամենուրեք:

Միջազգային հանրությունը իրոք բարձր գնահատեց հայերի՝ հավաքական հիշողությունը մոռացության տալու փորձերի դեմ իրենց իսկ կողմից տարվող պայքարը: Ոչ միայն հայերը, այլև աշխարհի բոլոր ժողովուրդները քաջ գիտակցում են, որ հիշողությունը սեփական ժողովրդի պատմությունն է, այն մոռանալ չի կարելի:

Եվ այսօր էլ, երբ 1915 թվականից մեզ բաժանում է 83 տարի, կարծես ավելի ենք գիտակցում մեր կորուստը: Ժողովրդի մարմնի վրա սպիացած վերքը շարունակում է իրեն զգացնել: Այն անբուժելի է: Եվ որքան կեարատևի աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի գոյությունը, այնքան վառ կմնա նրա հիշողությունը: Դուք հավանաբար քաջատեղյակ եք, որ մինչև 1998 թվականի գարունը, երբ մարտի 26-ին Բելգիայի Սենատը և մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունեցին իրենց որոշումները, աշխարհի շատ երկրների խորհրդարաններ արդեն հասցրել էին ճանաչել և դատապարտել XX դարի առաջին ցեղասպանությունը, հայերի դեմ կիրառված անհեղինակ ոճրագործությունը:

Հիշեցնեն, որ 1985թ. ապրիլի 23-ին, նույն օրը հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշումներ ընդունեցին Արգենտինայի Ազգային կոնգրեսը և Ուրուգվայի Ազգային համագումարը:

1990թ. ապրիլի 19-ին նույնամյան որոշում ընդունեց Կիպրոսի խորհրդարանը: 1995թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման ընդունեց հայտարարություն «1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»: 1996թ. ապրիլի 23-ին Կանադայի Համայնքների սլալատը որոշում կայացրեց «Ճանաչել մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունը» և յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 24-ը հայտարարեց «Մարդկանց կողմից մեկը մյուսի նկատմամբ գործադրած դաժա-

նության հիշողության շարք»։ 1996թ. ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանը օրենք ընդունեց «Ապրիլի 24-ը որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր սահմանելու մասին»։ 1997թ. ապրիլի 17-ին Նոր-Հարավային Ուելսի (Ավստրալիա) խորհրդարանի օրենսդիր համագումարը որոշում կայացրեց ապրիլի 24-ը սահմանել հայերի ցեղասպանության հիշատակի օր։ 1997 թվականի մայիսի 3-ին Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ի օրը հայ ժողովրդի հետ միասնության օր հայտարարելու մասին։

Բնորոշի հիշողության մեջ դեռևս թարմ է Եվրախորհրդարանի կողմից 1987թ. հունիսի 18-ին ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը։

Եվրախորհրդարանը ավստոսանքով անհրաժեշտ համարեց բանաձևում արձանագրել այն հանգամանքը, ըստ որոնց՝

«դ) ...թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն.

ե) ...թուրքական կառավարությունը մերժելով մինչև օրս ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, շարունակում է, այսպիսով, զրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից.

զ) նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը մինչև այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում.

է) նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետև կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը.

թ) նկատի ունենալով, որ իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը»։

Հայտնի է, որ Եվրախորհրդարանը կոչով դիմեց Թուրքիային և Եվրախորհրդարանի անդամ պետություններին քաղաքական երկխոսություն հաստատելու միջոցով հայերի լիազոր պատվիրակների մասնակցությամբ բննարկել 1915-1917թթ. հայերի նկատմամբ

կազմակերպված ցեղասպանության դատապարտման հարցերը: Եվրախորհրդարանի բանաձևի ընդունումից անցել է տասնմեկ տարի, և փաստորեն Թուրքիայի կառավարությունը առ այսօր էլ հրաժարվում է ճանաչել հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության կողմից գործադրած ցեղասպանությունը: 1998թ. մարտի 26-ին ընդունած բանաձևում Բելգիայի Սենատը, անդրադառնալով Եվրախորհրդարանի վերոհիշյալ բանաձևին, կոչ է արել Թուրքիայի կառավարությանը ճանաչել 1915թ. Թուրքիայի այն ժամանակվա կառավարության կողմից ձեռնարկած հայերի ցեղասպանության փաստը՝

« – Հաշվի առնելով այն, որ ամենափոքր կասկած անգամ չի կարող լինել այն պատմական փաստերի վերաբերյալ, որ հայերը զոհ գնացին մտածված և կազմակերպված ցեղասպանությանը.

– Հաշվի առնելով, որ միայն անցյալի սխալների և հանցագործությունների ընդունումը կարող է նախապայման լինել ժողովուրդների միջև հաշտություն հաստատելու համար.

– Հաշվի առնելով բարեկամական և համագործակցության կապերը, որ գոյություն ունեն մի կողմից Թուրքիայի և Բելգիայի, ինչպես նաև Եվրոպական Միության միջև և մյուս կողմից՝ Հայաստանի, Բելգիայի և Եվրոպական Միության միջև...»

Մեզ մամուլից հայտնի է, թե ինչպես Թուրքիայի ղեկավարությունը հիվանդագին արձագանքեց և՛ Բելգիայի, և՛ Ֆրանսիայի խորհրդարանների որոշումներին, համարելով դրանք թյուրիմացություն, պատմության խեղաթյուրում և բարոյազուրկ սխալ:

Ընդամենը մեկ նախադասություն պարունակող ֆրանսիական օրինագծի կապակցությամբ Թուրքիայում դրսևորվող չափազանց զգացմունքային արձագանքները վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունները անմիջապես իրենց վրա են վերցնում կատարվածի պատասխանատվությունը, նույնիսկ այն դեպքում, երբ ընդունված որոշման մեջ չեն հիշատակվում ցեղասպանություն կատարողները և կատարման վայրը:

Մեծարգո վարչապետ

Արլոյր ժամանակը չէ՞, որ Հայոց ցեղասպանության հարցերը քննարկվեն անզգացմունք հանդարտությամբ, մեր երկու երկրների նկատմամբ բարեկամաբար տրամադրված այլ երկրների խոր-

հուրդներին համապատասխան:

Օրերս պատասխանելով կոնգրեսական Սթիվ Ռոքմանի նամակին, ԱՄՆ-ի նախագահը շեշտելով, որ Թուրքիան, որի հետ ԱՄՆ-ը ընդհանուր առանցքային շահեր ունի, Հայաստանի ամենակարևոր հարևաններից մեկն է: «Ես հավատացած եմ, – գրում է Բիլ Զլինթրոնը, որ Հայաստանն ու Թուրքիան պետք է հաղթահարեն իրենց անցյալը և ատելությունից ու կասկածամտությունից զերծ ապագա կերտեն: Իմ վարչակազմը կանի ամեն հնարավոր բան այդ նպատակին հասնելու համար»:

Հավանաբար Դուք ծանոթ եք մահ Հայաստանի Հանրապետության նախագահի դիրքորոշմանը: 1998թ. ապրիլի 24-ին դիմելով հայ ժողովրդին Հանրապետության նախագահը իրավացիորեն նշեց, որ «Հայոց ցեղասպանությունը ոչ միայն մեր ժողովրդի, այլև համայն մարդկության ողբերգությունն է: Ցեղասպանության ցանկացած ոճրագործություն, ում կողմից էլ և ում դեմ էլ կատարված լինի, ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ և չունի վաղեմության ժամկետ: Մենք չենք ուզում լինել անցյալի գերին, սակայն ձերբազատման ճանապարհը աշխարհի կողմից անցյալը ճիշտ գնահատելն է»: Հայաստանի Հանրապետության նախագահը, արտահայտելով իր վերաբերմունքը Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, միանգամայն ճիշտ նկատեց, որ «վրեժխնդրությունը չէ, որ առաջնորդում է հայ ժողովրդին, այլև՝ անցյալի ճիշտ գնահատումը, որը թույլ կտա կանխել մարդկության դեմ հնարավոր նոր ոճիրները: Վստահ եմ մահ, որ ցեղասպանության ճանաչումը կծառայի տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատմանը»:

Իրոք, ժամանակը չէ սառը դատողությամբ քննարկել մեր երկու երկրներին հուզող այս խիստ կարևոր հարցը, քննարկել համատեղ, կլոր սեղանի շուրջը, երկու հարևան երկրների պատվիրանների մասնակցությամբ, նույնիսկ գործընթացը սկսել հայ և թուրք պատմաբանների հանդիպումներով: Թող իրենց խոսքն ասեն պատմաբանները, իսկ քաղաքական գործիչները հավանաբար մի ընդհանուր եզրակացության կգան:

Մեծարգո վարչապետ

Վերջացնելով մեր խոսքը, հույս ունենք, որ մեր նամակը իր

արձագանքը կունենա, և թուրք պատմագետներն իրենց պատրաստակամությունը կհայտնեն հայ պատմաբանների հետ դեմ առ դեմ, քաղաքակիրթ ձևով նստելու ու իրենց ծանրակշիռ խոսքը ասելու համար:

Խորին հարգանքներով՝

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի տնօրեն,
Անիի պահպանության և ուսումնասիրման
միջազգային կենտրոնի նախագահ»:

* * *

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշմանը Թուրքիայի կառավարող շրջանները հիվանդագին արձագանքեցին:

Մայիսի 29-ին վերոհիշյալ որոշումից անմիջապես հետո թուրքական հեռուստատեսությունը դա համարեց պատմական թյուրիմացություն: Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը որոշման առթիվ ասաց. «Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից այսօր ընդունված որոշումը ոչ այլ ինչ է, քան պատմության խեղաթյուրում: Հույս ունեմ, որ Մենատը կուղղի այս սխալը»:

Նույն օրը վերոհիշյալ որոշումը որպես ցավալի թյուրիմացություն որակեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի Մեջլիսի նախագահ Հիքմեթ Չեքինը, ավելացնելով թե թուրք ժողովուրդը պատմության առաջ չի մեղանչել: Իսկ վարչապետ Մեսութ Յըլմազը հույս հայտնեց, որ բարոյագուրկ այս սխալը չեն կրկնի ֆրանսիական Մենատն ու նախագահը, քանի որ «ֆրանսիական իշխանությունները մեզ տեղեկացրել են, որ այդ որոշման նախաձեռնությունը պատկանում է Ազգային ժողովի պատգամավորներին, և կառավարությունը հավանություն չի տալիս դրան»: Ինչ վերաբերում է փոխվարչապետ Բյուլենթ Էջևիթին, ապա նա 1915թ. ցեղասպանության ճանաչման որոշումը բնութագրեց որպես անխրավացի և արհեստական որոշում, որը ցույց տվեց, որ Ֆրանսիան Թուրքիայի նկատմամբ իր դիրքորոշման մեջ անկեղծ չէր:

Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշմանը թերևս խստագույնս արձագանքեց արտգործնախարար Իսմայիլ Ջենը, որը Լյուքսեմբուրգում մասնակցում էր եվրատլանտյան գործակցության խորհրդի նիստին: Նա դատապարտելով որոշումը՝ ընդգծեց, որ դրանով փաստորեն խրախուսվում է հայկական ահաբեկչությունն ընդդեմ Թուրքիայի: Մայիսի 29-ին որոշմանն անդրադարձավ նաև փոխվարչապետ և պաշտպանության նախարար Իսմեթ Սեզգինը. «Այս հարցի անընդմեջ արծարծումը, իմ կարծիքով, անիմաստ է: Որոշումն, ինչ խոսք, լուրջ վնաս է հասցնում թուրք-ֆրանսիական հարաբերություններին»:

Հունիսի 1-ին նույն Սեզգինը, պատասխանելով թուրքական հեռուստատեսության հարցերին, ասաց. «Որոշման ընդունումը կատարյալ սխալ էր, սխալ է նաև ավելի քան 80 տարվա վաղեմությամբ կատարված իրադարձությունների քննարկումը Ֆրանսիայի Ազգային ժողովում և այն, որ Ազգային ժողովն իր վրա է վերցնում պատմության դերը»: Իսմեթ Սեզգինն այնուհետև շարունակեց. «Թուրք-ֆրանսիական հարաբերություններում հնարավոր են որոշակի փոփոխություններ: Մենք կարող ենք դրանք վերանայել: Բնական է, որ թուրքական զինված ուժերի համար անհրաժեշտ պատվերները տալու ենք այն երկրներին, որոնք մեր դեմ չեն գործում: Ինձ թվում է, ֆրանսիական Սենատը կուղղի Ազգային ժողովի կողմից կատարված սխալն, ու եթե ֆրանսիացիները հետին մտքեր չունեն, ապա ողջամտությունն անպայման կհաղթանակի»:

Հաղորդավարի այն հարցին, թե ինչպե՞ս էր գնահատում Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը ԱՄՆ-ի գործունեության տեսակետից, Սեզգինը պատասխանեց. «Որոշումն արյունարբու այդ կազմակերպության համար ահաբեկչական գործունեությանն անցնելու նախադրյալներ է ստեղծում: Ցավալին այն է, որ այդ թվերին հայկական ավազակախմբերն են անմեղ մարդկանց կոտորել այնպես, ինչպես մեր օրերում կոտորում է ՔԿԿ-ն: Որոշումը ոչ միայն խրախուսում է հայ ահաբեկիչների գործունեությունը, այլև ահաբեկչական գործունեության համար իրավական հիմք է ստեղծում և արդարացնում է դա»:

Սեզգինի միտքը շարունակեց Չեթինը: Ի դեպ, վերջինս Պալերմոյում կազմակերպված Միջերկրական ավազանի երկրների հա-

մաժողովին մասնակցելու համար գտնվում էր Խտալիայում: Նրա կարծիքով «որոշումը քաղաքական ոլորտ է փոխադրում մի հարց, որի քննարկումը պատմաբանների իրավասության տակ է: Դա հայկական ահաբեկչության խրախուսումն է հատկապես այն դեպքում, երբ Անդրկովկասի առջև ծառացած է կայունության խնդիրը, իսկ Հայաստանում իշխանության են եկել արմատականները: Ուրեմն, վերոհիշյալ որոշման ընդունումը նշանակում է նաև Հայաստանի արաբների խրախուսում ընդդեմ Ադրբեջանի:

Ֆրանսիայի Ազգային ժողովում հայերի ցեղասպանությունը ճանաչելու որոշման նկատմամբ Թուրքիայի ղեկավարության մոտեցումները միանշանակ են, մեկնաբանության կարիք չեն զգում: Նույնը, սակայն, դժվար է ասել վերոհիշյալ որոշման դրդապատճառների մասին»:

Համենայն դեպս, Պալերմոյում Հիքմեթ Չեթինի և Լորան Ֆաբիուսի միջև երկկողմ հանդիպման պայմանավորվածություն է ձեռք բերվել: Դրա արդյունքները հազիվ թե ազդեն Սեմատի վրա, բայց որ Թուրքիային հաջողվել է Ֆրանսիայի Ազգային ժողովում հասնել ցեղասպանության բանաձևի խմբագրմանը, ակնհայտ է:

1998թ. հունիսի 1-ին այցելելով «Միլլիյեթ» թերթի խմբագրատուն, «Ամերիքըն Թըրքիշ Էսոշիեյշընզ Էսեմայլի»-ի ներկայացուցիչների պատվիրակության ղեկավար Թամեր Աչըբալընին հայտարարել էր, որ հայերն իրենց գործունեությամբ չորս նպատակ են հետապնդում, որոնք կարելի է բնութագրել իբրև՝ ա. Վերակենդանացում, բ. Վերաճանաչում, գ. Վերահատուցում, դ. Վերադարձ (Resurrection, Recognition, Restitution, Repatriation):

Ըստ այդ հայտարարության, հայ ազգի «Վերակենդանացումը» սկսվեց 1973-ի ահաբեկչական հարձակումով Լոս Անջելեսում թուրք դիվանագետի սպանությամբ և այնուհետև հաջորդ տարիներին ծավալված ահաբեկչական ալիքով:

«Վերաճանաչմանը» նպաստեց Հայոց ցեղասպանության դատապարտումը աշխարհի շատ երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից:

Հասնելով իրենց երկու նպատակի իրականացմանը, հայերը ներկայումս ձգտում են «Վերահատուցում» ձեռք բերել թուրքական կառավարությունից: Եվ, վերջապես, հայերը Թուրքիայից պահանջ

ջելու են «Վերադարձ» Արևելյան Անատոլիայի հողամասերը:

1998թ. հունիսի 3-ին Թուրքիայի Հանրապետության նախագահ Ս.Դեմիրելը հատուկ նամակով դիմելով Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակին, խնդրել էր նրանից անձնական ազդեցությամբ ու միջամտությամբ ձախողել Սենատի կողմից Ազգային ժողովի օրինագծի վավերացումը. «Ֆրանսիական խորհրդարանը միանգամայն մի սխալ քայլ կատարեց: Կհուսամ, որ այդ քայլը պետք է սրբազրվի առաջիկա օրինական քայլերի ընթացքում... և կարելի է խուսափել մեր երկկողմանի հարաբերությունների անթերի վիճակի վրա ստվեր գցելուց: Հենվելով մեր անձնական բարեկամության վրա և այն կարևորության՝ որ նվիրում եք թուրք և ֆրանսիական հարաբերություններին, հուսով եմ, որ օրենսդիր մարմինների վրա Ձեր ազդեցությունը շատ ուժեղ պետք է լինի:

... Պատմության ընթացքում ամեն մի երկիր ցավալի իրադարձություններ ունեցել է: Պատմական իրողություն է, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ 1915-ին հայերը ապստամբեցին և կատաղի հարձակումներ գործեցին Օսմանյան պետության և նրա քաղաքացիների դեմ: Երկու կողմերն էլ նկատելի կորուստներ ունեցան, երբ հայերը պատերազմական գործողությունների տարածքներից դուրս տեղահանվեցին: Այս դեպքերը խեղաթյուրելը և դրանք իբրև ցեղասպանություն ներկայացնելը պետք է հանդիսանա որպես քաղաքական, բարոյական և օրինական չափանիշների մի խախտում, քանզի որ մինչև հիմա էլ ցեղասպանությունը փաստող ոչ մի ապացույց ներկայացված չէ»:

Թուրքիայի ղեկավարությունը, զայրույթով դատապարտելով Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը, միաժամանակ սկսեց հակահայկական հիստերիա բարձրացնել, բորբոքելով նոր կրքեր:

Թուրքիայի կառավարող շրջանները Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը դիտում են որպես ազգայնամոլության դրսևորում և ակնհայտ տուրք հայկական ազգայնամոլությանը: Այդ ընթացքում աստիճանաբար վերանայվում և հստակեցվում են Մեծ եղեռնի նկատմամբ Թուրքիայի պաշտոնական շրջանակների մոտեցումները: Ըստ երևույթին, այդ մոտեցումները կնպաստեն թուրքական նոր դիրքորոշման մշակմանը տվյալ հարցում: Հարցի վերանայմանն ու հստակեցմանը Թուրքիայի քաղաքական շրջանակնե-

րի հետ, ինչ խոսք, մասնակցում են նաև գլխավորական շրջանակները, իսկ թուրքական հեռուստատեսությունը ստանձնում է համակարգային դեր:

Քաղաքական շրջանակների մեջ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, առանձնակի տեղ ունի: Հունիսի 2-ին Մեջլիսի գլխավոր ասամբլեայի լիազումար նիստում պատգամավորական խմբակցությունները, Հայոց ցեղասպանությունը ճանաչելու որոշման առնչությամբ անելով համապատասխան հայտարարություն, միաձայն դատապարտեցին Ֆրանսիայի Ազգային ժողովին: Միաժամանակ որոշվեց հայտարարության տեքստը տեղեկագրով հանդերձ հղել աշխարհի բոլոր երկրների խորհրդարաններին:

Հունիսի 3-ին Ադրբեջանի մայրաքաղաքում հրավիրվեց Միլի մեջլիսի արտահերթ նիստը, որտեղ պատգամավորները քննարկեցին այն փաստը, որ Ֆրանսիան հրապարակավ ճանաչել է 1915թ. հայոց եղեռնը և Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանին ուղղված դիմում ընդունեցին:

Այդ դիմումում ասվում էր, որ «շնորհիվ Ռուսաստանի ծածուկ և բացահայտ աջակցության, սկսած XIX դարի վերջից հայ ազգայնականները ներկայիս Թուրքիայի և Կովկասի տարածքում իրենց պետությունն ստեղծելու նպատակով զանգվածային ահաբեկչության ճանապարհով ոչնչացրեցին 2 միլիոնից ավելի թուրքերի ու ադրբեջանցիների: Այդ քաղաքականությունը շարունակվում է և մեր օրերում»: Սկսած 1988 թվականից, ասվում է փաստաթղթում, «հայ անջատականները գրավեցին Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը, կատարեցին էթնիկական զտում և հիմա փորձում են բռնությամբ Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին»: Արդյունքում՝ նշվում է դիմումում, մեկ միլիոն ադրբեջանցիներ դարձել են փախստականներ, 18 հազար մարդ զոհվել է, ավելի քան 20 հազար խաղաղ բնակիչ վիրավորվել և 50 հազարը դարձել է հաշմանդամ:

Ադրբեջանի խորհրդարանի պատգամավորները հույս ունեն, որ Ֆրանսիայի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի քաղաքական գործիչները այս հարցում օբյեկտիվ կլինեն և կշռադատված որոշում կընդունեն:

Երկար քննարկումներից հետո դիմումի տեքստը դրվել է քվեարկության և ընդունվել: Սակայն, ելույթ ունեցած որոշ պատգա-

մափորների կարծիքով դիմումն ինտ մեկտեղ անհրաժեշտ է Ադրբեջանի խորհրդարանի ներկայացուցիչների պատվիրակություն ուղարկել Ֆրանսիա, որպեսզի ադրբեջանցի պատգամավորները իրենց ֆրանսիացի գործընկերների հետ քննարկեն այդ հարցը:

Պաշտոնական հակազդեցություններից զուգահեռ, Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած որոշման դեմ բողոքում են նաև Թուրքիայի տարբեր գիտական հաստատություններ: Մասնավորապես Գալթասարայի և մի շարք այլ համալսարանների գիտական խորհուրդները հունիսի 3-ին նամակներ են հղել Ֆրանսիայի Սենատի նախագահ Ռընե Մոնորիին, որպեսզի Սենատում կանխվի քանաձևի ընդունումը:

«Թուրքիե» լրագիրը հողված է զետեղել «Ֆրանսիա, վերադարձիր սխալ ուղուց» վերտառությամբ: Հողվածում ասվում է, որ Էրզրումի Աթաթուրքի անվան համալսարանում բողոքի հանրահավաք է անցկացվել, իսկ մի քանի այլ համալսարաններ բողոքի հայտարարություններ են հրապարակել:

Թուրքիայի արտգործնախարարությունում ցուցադրվել է հայերի ցեղասպանությանը վերաբերող պատմական փաստաթղթերի մի մասը: Արտգործնախարարության մամուլ քարտուղար Ութկանը հայտարարել է, թե օրինագիծը տխուր փորձ է, քանի որ «Ֆրանսիան Թուրքիայի դեմ թշնամաբար տրամադրված երկիր չէ: Նախագգուշացնելով Ֆրանսիային, նրան կոչ ենք անում անհապաղ ուղղել սխալը»:

«Ջումհուրիեթ» թերթը գրում է, որ Թուրքիան շարունակում է նախաձեռնություն դրսևորել, որպեսզի հայերի ցեղասպանության մասին Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած օրինագիծը Սենատում չհաստատվի: Թերթը կոչ է արել բոյկոտել ֆրանսիական ապրանքները և միաժամանակ նշել է, թե ֆրանսիացիներն էլ ցեղասպանություն են կատարել Աֆրիկայում:

«Ենի մուսավաթ» թերթը գրել է, որ Ֆրանսիայում հավանության արժանացած հայկական նախագիծը համարձակություն է հաղորդել ահաբեկչությանը: Թերթը կոչ է անում ուժեղացնել թուրք դիվանագետների պաշտպանությունը:

«Աղշամ» թերթը գրել է. «Եվրոպան հանդուգն որոշում է ընդունել: Այն օրը, երբ Ֆրանսիայի խորհրդարանում քննարկվում էր հայ-

կական նախագիծը, գաղթականների գործերի Եվրամիության հանձնաժողովում «հիմար» որոշումներ են ընդունվել Թուրքիայի հարավ-արևելքի վերաբերյալ, ըստ որոնց՝ Առաջին, Եվրամիության հանձնաժողովը պահանջել է կազմացրել ինքնապաշտպանության այն ջոկատները, որոնք կազմվում են տեղական բնակչությունից և մեծ ավանդ ներդնում Բրդական աշխատավորական կուսակցության դեմ մղվող պայքարում:

Երկրորդ, պահանջվում է, որ Թուրքիայի հարավ-արևելքում ստեղծվեն առանձին մարզեր: Դա ամենաանընդունելի որոշումներից մեկն է: Հանձնաժողովը պահանջում է փոխել Թուրքիայի վարչական կառուցվածքը: Այդ որոշման համաձայն, Թուրքիայի հարավ-արևելքը պետք է բաժանվի փոքր մարզերի:

Երրորդ, պահանջվում է, որ ահաբեկչության պատճառած վնասը հատուցի Թուրքիան: Հանձնաժողովը պահանջում է, որ գյուղերի վրա Բրդական աշխատավորական կուսակցության ահաբեկիչների հարձակման և կանանց ու երեխաների սպանությունների դեպքում վնասը հատուցվի Թուրքիայի կողմից:

Չորրորդ, պահանջվում է, որ Բրդական աշխատավորական կուսակցությանը ներկայացուցչության իրավունք տրվի»:

«Չաման» թուրքական թերթը տեղեկացնում է, որ նախագահ Սուլեյման Դեմիրելը շատ է անհանգիստ Հայոց ցեղասպանության «պնդումների» առթիվ: Նախագահը գոհունակություն է հայտնել, որ Թուրքիայի բոլոր խավերը բավականաչափ ուժեղ հակազդեցություն են ցույց տվել Ֆրանսիայի խորհրդարանի կայացրած հայանպաստ որոշման դեմ, սակայն հարցը դրանով չի ավարտվել:

Օրերս, ընդունելով Թուրքիայի խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի անդամներին, Դեմիրելն իր այդ մտա-հոգությունները փոխանցել է նրանց: Նախագահը թվարկել է երկրի արտաքին վտանգները և նշել, որ դրանց կիզակետում գտնվում է Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի խորհրդարանի կողմից:

Թուրքական «Չունհուրիեթ» թերթը գրում է, թե Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի դեմ ցեղասպանություն կատարելու մեղադրանքով պաշարված է Կանադայից մինչև Ավստրալիա ընկած երկրների միջև: Երբ մի կող-

մից Ֆրանսիան Հայոց ցեղասպանության օրինագիծն է վավերացնում, Բելգիան, Ռուսաստանը, Ավստրալիան և Հունաստանը Թուրքիայի հողերը որակում են որպես «Արևմտյան Հայաստան»:

Թերթը ներկայացնում է պաշտոնական այն որոշումները, որոնցով որոշ երկրներ ճանաչել են Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության փաստը.

«ՌՈՒՄԱՍՏԱՆ – 1995թ. ապրիլի 14. Ռուսաստանի Դաշնության Պետական դուման, հենվելով այն պատմական տեղեկությունների վրա, որոնք փաստում են, թե հայերը 1914-1922 թվականներին Արևմտյան Հայաստանում բնաջնջման են ենթարկվել, պախարակում է դրա կազմակերպիչներին: Ռուսաստանն այս առթիվ հայ ժողովրդին է հայտնում իր ցավակցությունը և 24 Ապրիլ թվականը արժևորում որպես «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

ԿԱՆԱԴՒԱ – 1996թ. ապրիլի 23. Խորհրդարանը ճանաչում է 1915թ. ապրիլի 24-ից հետո մեկուկես միլիոն հայերի բնաջնջման ողբերգության 81-րդ տարեդարձը: Խորհրդարանը մի էթնոսի կողմից մեկ ուրիշ էթնոսի նկատմամբ ճնշման հիշատակության օրեր է հռչակում ապրիլի 20-27-ը և հաստատում որպես մարդկության դեմ գործված հանցանքի հիշատակման օր:

ԲԵՆԳԻԱ – 1998թ. մարտի 26. Բելգիայի Սենատը, նկատի առնելով Օսմանյան կայսրությունում թուրքաբնակ հայերի ցեղասպանության մասին Եվրոպայի խորհրդարանի «Հայկական հարցի քաղաքական լուծում» որոշումը (18 հունիս 1987թ.), առանց տարակուսելու, որ հայերը հետևողական ձևով և ծրագրված կոտորածների են ենթարկվել թուրքական կառավարության կողմից, պահանջում է ճանաչել Օսմանյան կայսրությունում 1915թ. հայերի դեմ ցեղասպանության իրագործման փաստը:

ԱՎՍՏՐԱԼԻԱ – 1997թ. ապրիլի 17. 1997թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 82-րդ տարեդարձի առթիվ Խորհրդարանն ընդունում է, որ XX դարի սկզբին հայերը մեկուկես միլիոն զոհ են տվել: Խորհրդարանը շեշտում է այդ կետի կարևորությունը և առաջարկում, որ մարդկության դեմ նմանօրինակ հանցանքներ այլևս չգործվեն: Խորհրդարանն ընդունում է, որ այս դարասկզբին մեկուկես միլիոն հայերի հիշատակության օրը նշվի Նյու Մաուք Վելսում:

ՀՈՒՆԱՍՏԱՆ – 1996թ. ապրիլի 26. Ապրիլի 24-ի կապակցու-

թյամբ Հունաստանի նախկին արտգործնախարար Սամարասն իր կուսակցության անունից պատրաստել էր օրինագիծ, որը 1994թ. հոկտեմբերի 4-ին հղվել է Խորհրդարան: Օրինագիծը 1994թ. նոյեմբերի 23-ին ընդունվել է միաձայն»:

Հունիսի 5-ին Թուրքիան սպառնաց, որ ֆրանսիական ընկերություններին կզրկի Թուրքիայի պաշտպանության բնագավառի արդյունաբերական գործարքներին մասնակցելուց, եթե Մենատը հաստատի խորհրդարանի մայիսի 29-ի որոշումը: Թուրքիայի պաշտպանության նախարար Սեզգինը երկրի հեռուստատեսությամբ հունիսի 5-ին ասաց, թե զենքերի գործարքը կախված է Թուրքիայի նկատմամբ դրսևորվող վարքագծից, իսկ Թուրքիայի ռազմական արդյունաբերության փոխքարտուղար Բուրչակն ասել է, թե Ֆրանսիան ամենայն հավանականությամբ դուրս կնդվի այդ գործարքներից, եթե Մենատը հաստատի որոշումը:

Ինչպես տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը, Ֆրանսիան Թուրքիային զենք մատակարարող գլխավոր երկիրն է: 1997թ. նրանց միջև զենքերի գործարքը կազմել է 1 մլրդ դոլար: Ֆրանսիական ընկերություններն այժմ նպատակ ունեն իրականացնել համատեղ արտադրության երկու ծրագիր, որը կկազմի 9 մլրդ դոլար:

Ֆրանսիան զենքի արտահանման գծով աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը: Դա նրա տնտեսության ամենից շատ գիտատարողունակ ոլորտներից մեկն է: Վերջին տարիներին Ֆրանսիայում զենքի արտադրությունն ու վաճառքը շատ դժվարություններ են կրել՝ կապված սպառազինության համաշխարհային շուկայի սահմանափակումների հետ:

Իսկ ի՞նչ էր պատրաստվում գնել Թուրքիան Ֆրանսիայից: Նախ խոսվում էր հակատանկային «Էրիքս» հրթիռների մի ամբողջ խմբաքանակի մասին՝ 10 հազար հատ՝ 450 միլիոն դոլար արժողությամբ: Բացի դրանից «Թոմսոն» ընկերակցությունը երկի արդեն չի կարող մասնակցել Թուրքիայի ռազմածովային նավատորմի ավիացիայի մատակարարումներին, իսկ այդ պատվերը 150 միլիոն դոլար արժեր: Ըստ երևույթին, ֆրանսիացիները կկորցնեն նաև նավատորմի իր և այլ տեխնիկայի մատակարարման 500 միլիոն դոլարի պայմանագրերը: Հօդս են ցնդում նաև ֆրանս-գերմանական

«Եվրակոսպտեր» ընկերության հույսերը՝ թուրքերին նոր եվրոպական ռազմական «Վագր» ուղղաթիռների վաճառելու վերաբերյալ: Խոսվում էր նաև 145 ուղղաթիռի մասին, որոնց ընդհանուր արժեքը 3,5 միլիարդ դոլար է:

Ֆրանսիացիները ստիպված կլինեն նաև մոռանալ թուրքական բանակի տանկային հավաքակալայանի վերազինման վերաբերյալ իրենց ծրագրերը: GIAT ընկերությունը բանակցություններ էր վարում՝ Թուրքիային 1000 նոր ֆրանսիական «Լեկլերկ» մակնիշի տանկ վաճառելու վերաբերյալ: Այս պայմանագրի ծավալը նույնպես աստղաբաշխական էր՝ 6 միլիարդ դոլար: Սպառազինության թուրքական շուկան աշխարհում ամենահեռանկարայիններից մեկն է համարվում: Առաջիկա 25 տարիների ընթացքում Անկարան բանակի վերազինման համար նախատեսում է 150 միլիարդ դոլար:

Ազգային ժողովի կողմից օրինագիծն ընդունելուց անմիջապես հետո Փարիզը փորձեց թուրքերի համար մի քիչ քաղցրացնել այդ դառը հաբը: Ֆրանսիայի պաշտոնատար անձինք անընդհատ հայտարարում են, թե օրենքն ամենևին էլ ուղղված չէ այսօրվա Թուրքիայի դեմ, որը ոչ մի ընդհանրություն չունի նախկին կայսրության հետ: Սակայն նման մեկնաբանություններն Անկարային չեն բավարարում:

Մենատն այս հարցի քննությամբ պետք է զբաղվի այս տարվա աշնանից ոչ շուտ: Այնպես որ գինագործները ժամանակ ունեն լծակներ գտնելու և ազդելու Մենատի որոշման վրա այնպես, որպեսզի այդ որոշումը և Թուրքիայի սրտով լինի, և ռազմական գործարանների բաժնետերերի:

Եթե դա տեղի չունենա, ապա հնարավոր է, որ արդեն առաջիկա ամիսներին պայքար սկսվի գենքի շուկայում Ֆրանսիայի ազատած տեղը զբաղեցնելու համար: Չի բացառվում, որ այդ դեպքում թուրքական պատվերների մի մասը կարող է բաժին հասնել ռուսական պաշտպանական ընկերակցություններին:

Թուրքիայի Իզմիրի քաղաքապետարանը Ազգային ժողովի որոշման հրապարակումից անմիջապես հետո մերժեց ֆրանսիական երկու ընկերությունների մասնակցությունը բազմամիլիոն դոլար արժողությամբ մետրոյի շինարարության նախագծին:

Հունիսի 11-ին Փարիզում կայացավ Թուրքիայի խորհրդարան-

նական պատվիրակության հանդիպումը Ֆրանսիայի սենատորների հետ:

Ըստ «Ֆիզգարոյի» հրապարակման, թուրքերի նպատակն է արգելել՝ Հայոց ցեղասպանության մասին Ազգային ժողովի ընդունած բանաձևի վավերացումը Սենատում:

Հունիսի 26-ին թուրքական «Պրիմա» հեռուստաալիքի «Սպիտակ էկրան» ծրագրով ելույթ ունեցավ թուրք հայտնի լրագրող և վիպասան Ահմեդ Ալթանը, որը իրականությունը ճշմարտացիորեն լուսաբանելու լուրջ հայտ ներկայացրեց:

Իր ելույթում, դիմելով հեռուստադիտողներին, Ալթանն ասաց.

«Մենք տարօրինակ ձևով ենք մոտենում Հայկական ցեղասպանության հարցին: Նախևառաջ ինչու՞ ենք օգտագործում «Ենթադրյալ» կամ «չհիմնավորված» բառերը (ցեղասպանություն բառից առաջ): Դրանք ինձ խիստ զայրացնում են: Ցեղասպանությունը ամբողջ աշխարհի կողմից հաստատված փաստ է: Մենք գրքեր ունենք գրված Կամուրան Գյուրունի նման մարդկանց կողմից, որը դեպքան է եղել: Ճիշտ է, մի կողմը գտնում է, որ ընդամենը մի քանի հարյուր հազար հայեր են մահացել, իսկ մյուս կողմը պնդում է, որ 2 մլն զոհեր են եղել, հարցն, այնուամենայնիվ այն է, թե ինչ է տեղի ունեցել ի վերջո: Ճիշտ է նաև, որ հայերը ապստամբել են Օսմանյան կայսրության դեմ, բայց կայսրությունն ընտրել է հայերին վերաբնակեցնելու աճեմասարյունալի ճանապարհը: Այդ տեղահանության ընթացքում, բնականաբար, կոտորածներ են տեղի ունեցել: Դրանց ժխտումը ոչ մի նպատակի չի ծառայի: Կարո՞ղ ես թաքցնել ամբողջ աշխարհից: Մեր դեկավարները կարող են թաքցնել (այդ փաստերը) մեր ժողովրդից: Բայց, ի վերջո, ինչու՞ պետք է մենք վախենանք: Փաստ է, որ նման դեպքեր տեղի են ունեցել օսմանյան շրջանում: Գերմանացիները 6 մլն հրեաների կոտորեցին: Ինչու՞ ոչ ոք գերմանացիների դեմ չի բողոքում: Ինչու՞ ֆրանսիական Ազգային ժողովը որոշում չի ընդունում գերմանացիների դեմ: Որովհետև գերմանացիներն ափսոսանք ու ցավ հայտնեցին կատարվածի համար: Վերջ:

Գոյություն ունեն երկու տեսակի երկրներ: Երկրներ, որոնք իրենք իրենց անսխալ են համարում և ըստ այդմ գործում, և երկրներ, որոնք ընդունում են, որ սխալ են գործել: Անսխալական երկրներ չկան աշխարհում: Մենք երկրորդ խմբին ենք պատկանում: Մենք չենք ընդու-

նուն մեր սխալները և կարծում ենք, որ անսխալական ենք»:

Երբ հեղինակավոր թուրք գրողն անկեղծորեն նման հրապարակային խորհրդածություններ է կատարում Հայկական ցեղասպանության հարցի շուրջ և տեղն ու տեղը չի ձեռքակալում, նշանակում է հույսեր կան, որ ի վերջո Յեղասպանությունը կընդունվի և կհանձնվի նաև թուրք հասարակության և կառավարության կողմից:

Ահմեդ Ալթանի ելույթի իսկական արժեքն այն է, որ հարյուր հազարավոր թուրքեր առաջին անգամ ծանոթացան Հայկական ցեղասպանության հարցին առնչվող ոլորտ փաստերի: Եվ առավել կարևոր է, որ նրանց այդ վկայությունները լսեցին ոչ թե ինչ-որ «մոլեռանդ հայի», այլ հարզված թուրք մտավորականի բերանից:

Թուրքական ամենատարածված թերթերից «Հյուրիյեթի» Անկարայի թղթակիցը «Թուրքիայի անելը» խորագրով է բացատրում Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման գործընթացը՝ այն ներկայացնելով իբրև Թուրքիայի դիմագրաված ամենակարևոր կնճիռներից մեկը: Թերթի օգոստոսի 4-ի համարում թղթակիցն անդրադառնում է Թուրքիայի արտգործնախարարության հովանու ներքո գործող Ռ-ազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի (Թյուրք դիշիշլերի բաբանլիդի ստրատեժիկ արաշտիյումալար մերքեզի) վերջերս հրատարակած մի տեղեկագրին, որի վերնագիրն է՝ «Հայերի պնդումները և պատմական իրականություններ» (Էրմենի իդրիալարի վե թարիհի գերչեքլեր): Ըստ թղթակցի, սա սկիզբն է «թուրքական հակաքարոզչական» նոր արշավի, որը ղեկավարվելու է արտգործնախարարության կողմից, և որի նպատակն է հակազդել և հնարավոր չափով չեզոքացնել հայերի կողմից սփռվող տեղեկությունները և գործունեությունը: Թղթակցի կարծիքով, գլխից մեկ առ մեկ հերքում է հայկական «պնդումները», որոնք առնչվում են թուրքական զուլումներին, ջարդերին և ցեղասպանությանը:

Այսուհանդերձ, թուրք թղթակիցը զարմանալի հանդգնությամբ, եթե ոչ քաջությամբ, խնդրո առարկա է դարձնում թուրքական այս նոր ձեռնարկը: Նա իր հողվածի ենթավերնագիրն է դարձրել՝ «Հայկական ցեղասպանությունը դեռևս չընդունող Թուրքիան զբաղված է իր հակաթեզերը պատվիրված տեղեկագրերով փաստարկե-

լով: Հրապարակված վերջին փաստերը Թուրքիայի ողբերգակատակերգական վիճակում գտնվելը ցույց տալուց այն կողմ չեն կալու գնալ»:

Թղթակիցը հատկապես անդրադառնում է 1985թ. մայիսի 19-ին ամերիկյան կարևորագույն երկու թերթերի՝ «Նյու Յորք թայմսի» և «Վաշինգտոն փոստի» էջերում լույս տեսած 69 այսպես կոչված «մասնագետ» ակադեմիականների կողմից Միացյալ Նահանգների Կոնգրեսին ուղղված ուղերձին: Նրանց ստորագրած այդ դիմումը փորձում էր կասկածի ենթարկել Հայոց ցեղասպանության փաստերը, 1915-16թթ. իրադարձությունները նմանեցնել 1970-ական թթ. Լիբանանում ծայր առած քաղաքացիական պատերազմի դեպքերին և ամերիկյան կոնգրեսականներին կոչ էր անում մերժել Հայկական ցեղասպանության ճանաչմանը միտված բանաձևը:

Առանց բառերը ծամծմելու, «Հյուրիյեթի» թղթակիցը հարցականի տակ է դնում այդ ակադեմիականների բողոքի արժեքը և վկայակոչելով ամերիկյան մամուլի տեղեկությունները՝ նշում, որ նրանցից ոմանք մեծ գումարներ էին ստացել այդ դիմումը ստորագրելու համար: Ըստ թուրք լրագրողի, ամերիկյան այդ «գիտնականների» (չակերտներն իրենն են) հայտարարությունը և պատրաստած տեղեկագրերը «պատվիրված» էին:

* * *

Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Արմենայրես գործակալության խնդրանքով արտահայտելով իր վերաբերմունքը Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, ասել է. «Ողջունում եմ Ֆրանսիայի Ազգային Ժողովի որոշումը և իմ երախտագիտությունն եմ հայտնում այն մարդկանց, ովքեր իրենց ձայնը բարձրացրին հանուն պատմական արդարության: Հայոց ցեղասպանությունը ոչ միայն մեր Ժողովրդի, այլև համայն մարդկության ողբերգությունն է և բոլորիս պարտքն է հասնել այդ դեպքերի դատապարտմանը: Վրեժխնդրությունը չէ, որ առաջնորդում է հայ Ժողովրդին, այլև անցյալի ճիշտ գնահատումը, որը թույլ կտա կանխել մարդկության դեմ հնարավոր նոր ոճիրները: Վստահ եմ, որ Ցեղասպանության ճա-

նաչունը կծառայի տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատմանը»:

Ֆրանսիայի Համրապետության Ազգային ժողովի միաձայն որոշումը՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, Հայաստանում գնահատվեց ըստ արժանվույն: 1998թ. հունիսի 2-ին ՀՀ Ազգային ժողովի խոսնակ Խոսրով Հարությունյանը լրագրողներին ներկայացրեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Լորան Ֆաբիուսին հղված շնորհակալական իր ուղերձը, ուր երախտագիտության և հարգանքի հետ մեկտեղ՝ հայաստանյան խորհրդարանի նախագահը կարևորում է պատմական արդարության հաղթանակը. «Ֆրանսիան ևս մեկ անգամ հիշեցրեց աշխարհին, որ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները չսլետք է մնան շղատապարտված: Ցեղասպանության դատապարտումը պետք է ոչ միայն հայ ժողովրդին, այն պետք է համայն մարդկությանը՝ ապագայում դրանից խուսափելու համար: Վստահ եմ, որ պատմական ճշմարտության ճանաչումը բոլոր քաղաքակիրթ պետությունների բարոյական պարտքն է, և այդ տեսակետից պատահական չէ, որ Ֆրանսիայի Ազգային ժողովում նման որոշում ընդունվեց: Հույս եմ հայտնում, որ այս օրերն ընդունումն ըմբռնումով կընկալվի բոլորի կողմից և կնպաստի տարածաշրջանում խաղաղության և կայունության հետագա ամրապնդման գործընթացին», – գրում է Խոսրով Հարությունյանը:

Ընդդիմակալական ուղերձի հրապարակումից հետո Խոսրով Հարությունյանը պատասխանեց լրագրողների հարցերին: Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղիների վերաբերյալ ԱԺ խոսնակը նշեց, որ այստեղ կուտակվել են երկկողմանի պատմական, ազգային և հոգեբանական բարդույթներ. «Թուրքիայի հետ մեր հարաբերությունները պետք է վերախմաստավորվեն»: Խոսրով Հարությունյանն իրատես էր: «Մետ ապագայում անհնար է պատկերացնել Հայաստան-Թուրքիա բնականոն հարաբերությունների համալիր հաստատումը: Առաջընթացը տեղի կունենա քայլ առ քայլ, և յուրաքանչյուր հաղթահարված բարդույթ կնպաստի կովկասյան տարածաշրջանում անվտանգության համակարգի ձևավորմանը»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը Ֆրան-

սիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթով մայիսի 30-ին Նյու Յորքից շնորհակալական նամակ հղեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Լորան Ֆաբիուսին, արտահայտելով իր գոհունակությունը ընդունված որոշման համար. «Մեծ հրճվանքով և խոր գոհունակությամբ իմացանք, որ ֆրանսիական Հանրապետության Ազգային ժողովը 1998-ի մայիսի 29-ին ձեռնախագահությամբ կայացած նիստին պաշտոնապես ճանաչեց 1915-ին կատարված հայերի ցեղասպանությունը:

Հայ եկեղեցու Հոգևոր Պետի հանգամանքով, հանուն թեմական արքեպիսկոպոսների և համայն հայ հավատացյալների ի Հայաստան, ի Լեռնային Դարաբաղ և ի սփյուռս աշխարհի, ձեռք ենք ներկայացնում մեր խոր երախտագիտությունը և բարձր գնահատանքը Ազգային ժողովի պատմական որոշման համար, որն արտահայտում է ճշմարտության վկայելու իմաստությունն ու քաջությունը, հոգուտ արդարության դատին:

Ազգային ժողովի որոշումը ուրախացրեց ոչ միայն հայկական ծագում ունեցող ձեռք բաղաձայններին, այլև ամբողջ հայ ազգին, որը երախտապարտ է Ազգային ժողովի արդար և արժանի որոշման համար: Խնդրում ենք ներկայացնել մեր ջերմագին շնորհակալությունները Ազգային ժողովի անդամներին և մեր աղոթքներն ու օրհնությունները՝ ձեռք կատարած ազնիվ գործի համար, ի բարգավաճումն ու հառաջադիմությունը Ֆրանսիայի, որ միշտ մոտ է եղել մեր՝ հայերի՝ քրիստոնեական հավատքով և եվրոպական ոգով թաթախված հոգուն:

Հաճեցեք ընդունել, պր. նախագահ, մեր աղոթքներն ու բարձր գնահատությունը, մեր լավագույն մաղթանքները Ազգային ժողովին և ֆրանսիացի ժողովրդին»:

* * *

Ֆրանսիական սահմանադրության համաձայն, Ազգային ժողովի որոշումները, որպեսզի օրենքի ուժ ստանան, հաստատում է վերին պալատը՝ Սենատը, վավերացնում է կառավարությունը:

Ազգային ժողովի մայիսի 29-ի որոշումից մեկ ամիս անց՝ հունիսի 29-ին, նախատեսվում էր բանաձևի քննարկումը Սենատում:

Սակայն այն հետաձգվեց անորոշ ժամանակով:

Համոզված կարելի է ասել, որ պատճառը դարձյալ թուրքական ահաբեկչությունն է՝ Հայոց ցեղասպանությունը չընդունելու նրանց պահանջները:

Ցավով պետք է նշել, որ ի հակակշիռ Թուրքիայի դիրքորոշման, միանգամայն անտարբեր ու երկչոտ դիրք գրավեցին սփյուռքահայ համայնքները և Հայրենիքում գործող կազմակերպությունները, որոնք լուրջամբ շրջանցեցին ստեղծված իրավիճակը և իրենց ձայնը չբարձրացրին հանուն պատմական արդարության հաղթանակի:

Ստորև մենք հրապարակում ենք Ֆրանսիայի Ազգային ժողովի պատմական նիստի ամբողջական սղագրությունը, որը ֆրանսերենից թարգմանել է Գրիգոր Ջանիկյանը և առաջին անգամ լույս է տեսել «Երկուշաբթի» շաբաթաթերթի էջերում (1998թ. թիվ 21/24-30/33):

**ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ 1998թ. ՄԱՅԻՄԻ 29-ի
ՆԻՍՏԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մայիսի 29-ն է, ժամը ուղիղ 9.00-ը: Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Ժիլ դը Ռոբիենը հերթական նիստը հայտարարում է բացված: Օրակարգում հայերի ցեղասպանության օրենքի նախագծի քննարկումն է:

ՆԱԽԱԳԱՀ – Նիստը հայտարարում են բացված:

Ըստ օրակարգի, մենք քննարկելու ենք պարոն Դիդիե Սիգոյի և իր մի շարք գործընկերների օրենքի նախագիծը՝ հայերի 1915 թվականի ցեղասպանությունն ընդունելու վերաբերյալ:

Խոսքը տրվում է արտաքին գործերի հանձնաժողովի խոսնակին:

ՌԸՆԵ ՌՌԻՔԵ (արտաքին գործերի հանձնաժողովի խոսնակ) – Պարոն նախագահ, պարոն նախկին մարտիկների պետական քարտուղար, սիրելի գործընկերներ, ազգի ներկայացուցիչներն այսօր սեփական նախաձեռնությամբ հավաքվել են, որպեսզի առաջին անգամ հրապարակայնորեն քննարկեն հայերի՝ 1915 թվականի ցեղասպանության օրենքի ընդունման առաջարկը:

Շատերն են կիսում մեր հուզմունքն այն վճռական քայլի պահին, որ Ֆրանսիան պարտավոր է ձեռնարկել դարի առաջին ցեղասպանության զոհերի հանդեպ: Մենք բոլորս կանխագգում ենք մեզ շնորհված պատմական բարեբախտությունը՝ ներքին համոզվածությամբ ցեղասպանություն ենք որակելու քսաներորդ դարի պատմության ամենամռայլ էջերից մեկը և հենց դրանով գոհացում ենք տալու հայ ժողովրդի սպասումներին, որի հիշողությունն արդեն ութսուներեք տարի ոտնահարման, մոռացման, ուրացման պատճառով վիրավորված է:

Այս պահին ես մտածում եմ այն բարեկամ ժողովրդի մասին, որը մարդկային բարբարոսության հետևանքով տարտղնված է, որը պահանջում է, որ վերջ տրվի իր նկատմամբ գործադրվող անարդարությանը և այդպիսով փակվի դարասկզբին բացված վերքը, երբ Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության երկու երրորդը երիտթուրքերի կառավարության հրամանով բնաջնջվեց կամ բռնագաղթեց:

Ես մտածում եմ նաև նրանց մասին, ովքեր նվիրվել են Հայ դատի պաշտպանությանը, ծանոթացել համայնքի պատմությանը,

հայերի հետ շփվել, հայերին հարգել ու սիրել, ջանք չեն խնայել նրանց բարգավաճման, այն բանի համար, որ ամրապնդվի մեզ Հայաստանին միացնող եղբայրության կամուրջը:

Նրանք բոլորն այսօր ցեղասպանության ընդունմամբ ակամատես կլինե՞ն իրենց պայքարի բարեհաջող ավարտին՝ ցեղասպանության ընդունում, որը բազմիցս արծարծվել է նման սրահներում, որի կապակցությամբ հաճախ խոստումներ են տրվել, բայց երբեք չեն կատարվել:

Ուստի թե՛ ցեղասպանություն բառի ոգեկոչումը, որը մենք պարտական ենք ինչպես երեկվա մեռածներին, այնպես էլ այսօրվա ողջերին, թե՛ ոճրի հրապարակային ընդունումը, սիրելի՛ գործընկերներ, կախված է մեզնից:

Բայց մինչ այդ, խոսնակ լինելու հանգամանքը ինձ դրդում է պատմաբանների աշխատությունների օգնությամբ լուսաբանել Օսմանյան կայսրության հայերի բնաջնջումը:

Իմ գրավոր զեկուցագիրը ներկայացնում է պատմական միջավայրը, ուր տեղի է ունեցել ողբերգությունը, որն սկսվել է դեռևս 1894 թվականից, երբ սուլթանի հրամանով ավելի քան երկու հարյուր հազար հայ սպանվեց, ավելի քան հարյուր հազարն աքսորվեց:

1908 թվականին, նվաճելով իշխանությունը, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երիտթուրքերը շարունակեցին բռնությունները, որոնք 1915 թվականի դեպքերի նախափորձերը դարձան. 1909-ին նրանց հրամանով Կիլիկիայում երեսուն հազար հայ կոտորվեց:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունը հայերին է վերագրում 1914 թվականի ձմեռվա իր ծանր պարտությունն ու նախաձեռնում է նրանց ջարդը, բռնագաղթը, բնաջնջումը: Հայ մտավորականության շուրջկալը, որին միջազգային հանրային կարծիքը արթնացնելու միտում էին վերագրում, տեղի ունեցավ 1915 թվականի ապրիլի 24-ին և, ըստ էության, ցեղասպանության սկիզբը դարձավ:

Անկախ բնակավայրից, իրադարձությունները միակերպ էին զարգանում. բռնագաղթը հանգամանորեն նախապատրաստվում է, քարավանները հետզհետե նվազում են թալանի ու համընդհանուր ջարդերի միջոցով: Ուլքեր հասնում են գաղթակայանները, ասենք,

Հալեպ, կուտակվում են՝ մինչև քաղցից ու ուժասպառությունից մեռնելը:

Ըստ տարբեր աղբյուրների՝ 1916 թվականի վերջին ցեղասպանության զոհերի թիվը հասել է մեկուկես միլիոնի, որը կազմում է հայ ազգաբնակչության երկու երրորդը:

Ինքներդ էլ կարող եք ծանոթանալ՝ պատմաբանների աշխատությունները, վերապրողների, այլազգիների, ռազմական թրթալիցների, դիվանագետների վկայությունները ներկայացնում են միևնույն՝ հետևողական, կազմակերպված և ծրագրված բնաջնջման իրողությունը: Ամերիկյան դիվանագետ Մորգենթաուն դեռևս 1915-ին գրել է. «Թվում է, թե գոյություն ունի հայ ցեղը բնաջնջելուն միտված որոշակի ծրագիր»:

Ունիոնիստների դատավարության փաստաթղթերը, դատավարություն, որը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում, 1919-ին և հեռակա կարգով մահվան դատապարտեց հայերի նախճիրի գլխավոր պատասխանատուներին, հաստատում են ցեղասպանության փաստը: Դատավճիռը ութ հարյուր հազար զոհ է նշում և ընդունում, որ «բռնագաղթը սոսկ ջարդերի պատրվակ էր»:

Այս դեպքերի մասին Ուինստոն Չերչիլն իր հուշերում կգրի. «1915-ին թուրքական կառավարությունը սկսեց և վերջնական ավարտին հասցրեց մի նողկալի մտահղացում՝ Փոքր Ասիայի հայերի սպանոն ու համընդհանուր բռնագաղթը»:

Նման փաստերի լույսի ներքո է, որ «ցեղասպանություն» որակումը, այնպես, ինչպես 1943 թվականին բնորոշել է Լենկինը, այսինքն՝ «կանխամտածված ձևով մի ժողովրդի կամ էթնիկական խմբի բնաջնջումը», կարելի է վերագրել 1915-ին հայերի դեմ գործադրված ոճրագործությանը:

Հենց այս ամենից ելնելով է, որ միջազգային հանրությունը կարողացավ, ես դրան անդրադարձել եմ իմ զեկուցագրի երկրորդ մասում, ցեղասպանություն կոչել Օսմանյան կայսրության իրադարձությունները և հետամուտ լինել ընդունմանը: Եվ այսպես, 1984 թվականի ապրիլին ժողովուրդների մշտական ատյանը փաստեց ցեղասպանության իրողությունը: Նույն կերպ վարվեցին ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովը՝ 1985-ին և Եվրախորհրդարանը՝ 1987-ի հունիսին:

Իմ սիրելի գործընկերներ, եկել է ժամանակը, որ Ֆրանսիան նույնպես հրապարակայնորեն, պատմության և օրենքի տեսանկյուններից, ընդունի 1915 թվականի հայերի ցեղասպանությունը:

Ֆրանսիան մինչև այժմ անփոփոխ արտահայտել է իր համերաշխությունը զոհերի հետևողների նկատմամբ, որոնց ընդունել է և ամեն տարի, ապրիլի 24-ին, վերադաս մարմինների ներկայությամբ բազմաթիվ քաղաքներում կամ Հաղթականարի ներքո տեղի ունեցող արարողություններով հարգում է նահատակների հիշատակը:

1996 թվականի հարցաթերթիկի արդյունքները ցույց տվեցին, որ մեր քաղաքացիները գիտեն Հայոց ցեղասպանության մասին և ցանկանում են, որ Ֆրանսիան պաշտոնապես ընդունի: Ցեղասպանությունը դատապարտել են ամենաբարձրաստիճան պաշտոնյաները, բայց ոչ մի կառավարական որոշում կամ օրենսդրական փաստաթուղթ չի վավերացրել արդարամիտ հայտարարությունները:

Ֆրանսուա Մյտերանը ֆրանսիական առաջին պետական գործիչն էր, որը 1915 թվականի նախճիբը բնորոշելու համար 1984-ին օգտագործեց ցեղասպանություն բառը: Մեջբերում են. «Անհնար է սրբել ձեզ պատուհասած ցեղասպանության հետքը: Այն պետք է արձանագրվի մարդկանց հիշողություններում, ձեր զոհողությունները օրինակ հանդիսանան երիտասարդությանը, այնպես, ինչպես վերապրելու կամքը, որպեսզի ժամանակի ընթացքում ամենքն իմանան, որ այս ժողովուրդը չի պատկանում անցյալին, այլ ապրում է ներկայում և ունի ապագա»:

Հանրապետության նախագահ Ժակ Շիրակը նախագահական վերջին ընտրությունների նախօրյակին, 1915 թվականի նախճիբին անդրադառնալով, հաստատեց իր կամքը՝ «արժանին հատուցել ցեղասպանության զոհերին, որը դեռևս մերժում են վերապրողներին»:

Ինչ վերաբերում է վարչապետ Լիոնել Ժոսպենին, նա 1995 թվականի ապրիլին որոշակիորեն հայտարարեց, որ «ցեղասպանության ընդունումը կվկայի թուրքերի և հայերի միջև երկարատև խաղաղություն հաստատելու ցանկությունը»:

Ամեն նստաշրջանի հանրապետական տարբեր քաղաքական խմբակցության մեծ թվով պատգամավորներ հանդես են գալիս օրենքի նախագծի առաջադրմամբ կամ հարցապնդում են ուղղում կառավարությանը:

Ի վերջո, այս ապրիլի 22-ին ընկերվարականների խմբի անու-
նից Ժան-Պոլ Բրետը ազդարարեց սլատմական մախաճեռնության
գործադրումը, իսկ մի քանի օր անց, օգտվելով մեր օրենսդրական
հնարավորություններից, ներկայացրինք սույն մախազիծը, որի
քննությունը վճռել ենք հասցնել մինչև վերջ:

Հեղինակները պարզության, հստակության և արդյունա-
վետության համար այդ նուրբ ու բարդ նյութին առնչվող մախազիծն
օժտել են կշռադատված, տրամաբանված բնագրով, որը հավաս-
տիորեն պարզաբանում է պատմական ճշմարտությունը:

Ֆրանսիան՝ մարդու իրավունքների հայրենիքը, այսօր
հնարավորություն ունի իրագործել այդ առաջընթացը, ցուցաբերել
իր վերաբերմունքը համաշխարհային արժեքների նկատմամբ,
որոնց գնահատմանը միշտ նպաստել է:

Այսպիսով, սիրելի՛ գործընկերներ, հանուն նրանց, ովքեր այդ
պահին են սպասում մեր սրահում և նրա պատերից դուրս, ես ցան-
կանում եմ, որ առաջադրվող օրենքի քվեարկությանը բացարձակ
միասնականությունն ուղեկցի: Զվեարկությունն օրինակ հանդիսա-
նալու դեր կխաղա և հույս կխորհրդանշի: Հայերի ցեղասպանության
Ֆրանսիայի ընդունման, միջազգային ասպարեզում արձագանք
գտնելու, ալյսինքն՝ մեր մախաճեռնած հանդուգն քայլին այլ
երկրների ևս միացած տեսնելու հույսը: Վերջապես, թուրքերի և հա-
յերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը նպաստելու,
փոխադարձաբար նրանց երկրների ժողովրդավարությունն ամրա-
պնդելու, մարդու իրավունքներն արմատավորելու հույսը:

Յեղասպանությունն ընդունելով, Ֆրանսիան ոչ թե Թուրքիայի
դեմ, այլ հանուն նրա, նրա հետ հանդես կգա, կնպաստի մեր բարե-
կամական կապերի ու համագործակցության շարունակմանը,
որոնք, իմ կարծիքով, կայող են ամրապնդվել միայն այն դեպքում,
եթե ունենան կայուն հիմք, որը հարզում է այդ կոչմանն արժանի
խկական ժողովրդավարությունն ու մղում տեղ գրավել եվրոպական
ժողովուրդների համանվագում:

Այս պահին ես ակամա հիշում եմ բազում բարեկամական դեմ-
քեր, բազմապիսի փոխադարձ խոստումներ, որոնք հավաստում էին,
որ մի օր մեր ընդհանուր պայքարը պիտի հասնի իր նպատակին:

Ես մտածում եմ Գեղեցիկի մասին, որը 1939 թվականի Սենայի

ու Մարնի գետախառնարանը Փարիզի արվարձանային քաղաքը հասավ և դռները լայնորեն բացված գտավ, ընդ որում, այն բանից հետո, երբ ինքը, ինչպես իրենից առաջ շատ-շատերը, Սիրիայի անապատում տարիներով գաղթականի դժոխային կյանք էր վարել: Այո, չենգիլերցի փոքրիկ աղջիկ, դու, որ ապրել ես մեր դարը, ընդմիջտ չանդովող վերքի պես պահելով «Առանց հետ դառնալու իրավունքի» մակագրությունը կրող փաստաթուղթը, այս օրը նաև քո օրն է:

Սիրելի գործընկերներ; ես կուզեի ձեզ համար կրկնել այն բաները, որ Ժան Ժորեսն արտասանել է դարասկզբին. «Այն անձանց հետ, ովքեր հավատում են մարդուն, արժե մտածել ու գործել, մարդկային ջանքերը, որոնք արդարության ու իրավունքի են ձգտում, երբեք զուր չեն անցնում: Պատմությունը մարդկանց ուսուցանում է մեծ նպատակների դժվարությունը, իրագործման երկարատևությունը, բայց և ամրապնդում է հույսի անհաղթահարելիությունը»:

Այսօր այդ հույսը մեր իրավասությանն է պատկանում:

Միասին գրենք, ուրեմն, 1915 թվականի հայկական ցեղասպանության Ֆրանսիայի հրապարակային ընդունման պատմությունը (*ծափահարություններ բոլոր տեղերից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է նախկին մարտիկների պետական քարտուղարին:

ԺԱՆ-ՊԻԵՐ-ՍԱՍԵՐԵ (*նախկին մարտիկների պետական քարտուղար*) – Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, կառավարությունը միանում է ջարդերի գոհերի հիշատակին տրված հարգանքին:

Հայերի բռնազաղթն ու կոտորածները, որոնք Օսմանյան կայսրությունը գործադրեց 1915 և 1916 թվականներին՝ հոգեվարքի վերջին պահին և որի պատասխանատվությունը ներկա Թուրքիան չի կարող կրել, մեր դալի սմենասահավոր ողբերգություններն են: Փաստերը կան, փաստերն անժխտելի են: Ձեր խոսնակը հիշատակեց: ‘Դրանք մեզ բոլորիս են ուղղված:

Մենք պետք է մեր մտքերում այդ ազգաբնակչության ճանապարհների դեգերման, դժվար պայմաններում կտտանքների ենթարկման, սպանդի պատկերները պահպանենք: Մենք չպետք է մոռանանք այդ ամենը, «Մուսա լեռան քառասուն օրը», որ նկարագրել է ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը, որի վերապրողներին ի վերջո

Ֆրանսիական նավատորմիդն է փրկել:

Կառավարությունն առանձնահատուկ վերաբերմունք ունի խնդրի նկատմամբ այն պատճառով նաև, որ ֆրանսիացի ժողովուրդն էլ է ներքուստ պահպանում ողբերգության հիշատակը: Հիրավի, Ֆրանսիան նախճիրի ենթարկված ժողովրդին ընդունող ամենամեծ երկրներից մեկն է: Մենք մեր տարածքներում տեղ ենք տվել դեպքերի զոհերին և զոհերի զավակներին, որոնց, հավանաբար, մինչ այժմ էլ հետապնդում են անցյալի հուշերը:

Ֆրանսիայի՝ ծագումով հայ համայնքը մեր երկրին շնորհել է ունեցած լավագույնը: Նրա ներկայացուցիչները անձնագոհաբար պայքարել են ազատության և մարդկային արժանապատվության համար, որոնք մեր հանրապետության գլխավոր արժեքներն են:

Եվ քանի որ ես զբաղեցնում եմ պաշտպանության նախարարության պետքարտուղարի պաշտոնը և զբաղվում եմ նախկին մարտիկներով, շատ լավ գիտեմ այն նպաստը, որ իր սեփական արյան գնով ծագումով հայ համայնքը ներդրել է նման պայքարում:

Դեռևս Առաջին աշխարհամարտի ընթացքում նախճիրից վերապրած հայերը զինվորագրվեցին ֆրանսիական բանակին, որպեսզի ազատագրեն հայրենի տարածքները: Պեր-Լաշեզի հուշակոթողը, ինչպես շատ ուրիշներ, մեզ հիշեցնում է այդ մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծագումով հայ ֆրանսիացիները դարձյալ առաջին շարքերում էին և դիմագրավում էին բռնազավթիչներին: Ուզում եմ այստեղ հիշատակել, բազմաթիվ այլ անձանց թվում, Միսաք Մանուշյանին՝ Կարմիր որմազդի Մանուշյանին:

Ծագումով հայ համայնքին հաջողվել է կարողությունները ծավալել բոլոր բնագավառներում, մեր երկրի զարգացմանն ու առաջընթացին այնպիսի անուրախի մասնակցություն ունենալ, որը ձեզ բոլորիդ հայտնի է, որին չեմ անդրադառնա:

Տիկնայք, պարոնայք պատգամավորներ, կառավարությունը գիտակցում է ձեր ժողովի քաղաքական միտումը: Նախաձեռնությունը ձերն է: Պատասխանատվությունը դուք եք ստանձնել: Կառավարությունը պատկերացնում է այն խորունկ զգացումները, որ համակել են ձեզ:

Բոլոր դեպքերում, ամենամեծ հարգանքը տաժելով հանդերձ

այդ զգացումների նկատմամբ, մտքով ու սրտով ընկալելով դրանք հարուցող ողբերգության չափերն ու արհավիրքը, ելնելով մեր Սահմանադրությունից, ուզում եմ հարցնել, թե արդյո՞ք օրենքն իրավասու է սլատակյան գնահատումներ կատարել:

Կառավարությունը, ելնելով Սահմանադրության 20-րդ և 34-րդ հոդվածներից, որոշակիացնում և իրագործում է Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը: Սա իր բացառիկ իրավասությունն է, չնայած գործունեությամբ պատասխանատու է խորհրդարանի առջև:

1915, 1916 թվականների ջարդերին կառավարությունն անդրադարձել է բազմիցս, որոնք, ինչպես արդեն ասացի, առնչվում են վշտին ու հիշողությանը:

Դուք չեք մոռացել նաև, որ նախագահ Մլտերանը, 1980 թվականի սկզբին, մի իրավիճակում, որը ձեզ քաջ հայտնի է, որը խոսնակը հիշատակեց, արտահայտել է իր վերաբերմունքը ցեղասպանության նկատմամբ:

Արտաքին քաղաքականության ուղղվածությունը, կառավարության պատասխանատվությունն իրենց առանձնահատուկ պարտադրանքներն ունեն: Սա վերաբերում է ինչպես Ֆրանսիային, այնպես էլ մյուս երկրներին: Այդ քաղաքականությունն, անշուշտ, պետք է նկատի ունենա պատմությունը, նրա ողբերգություններն ու պատգամը, բայց ճգնաժամերը հաջողությամբ հաղթահարելու համար նաև հաշվի առնի ներկա իրականության բոլոր բաղադրատարրերը:

Պարոն խոսնակ, դուք կոտորածների, նրանց բնորոշման կապակցությամբ հիշատակեցիք պատգամավորների կամ պատգամավորական խմբակցությունների մի ամբողջ շարք գեկուցումներ, եզրահանգումներ, առաջարկներ, արձանագրեր, բայց մեծ մասամբ, մասնավորապես Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, նույնիսկ մեզ ամենամոտիկ երկրում՝ Բելգիայում, գործադրողն է ստանձնում ամբողջ պատասխանատվությունը:

Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, երկրի արտաքին քաղաքականությունը վարելիս Ֆրանսիան առաջնորդվում է երկու սկզբունքով՝ խաղաղության ու կայունության հասնել ժողովուրդների, պետությունների միջև համերաշխությունը ամրապնդելու միջոցով և երբեք այնպիսի

ներքին երևույթների չմիջամտել, որոնք ուղղակիորեն մեզ չեն առնչվում:

Հենց այդպես ենք մենք վարվում աշխարհի այն մասում, որը տարածվում է Միջերկրական և Կասպից ծովերի միջև, տարածաշրջան, որը դեռևս ցնցվում է ճգնաժամերից, որտեղ դեռևս արյուն է հոսում, և ուր ողբերգություններ միշտ էլ կարող են վերսկսվել:

Մեր այսօրվա բանավեճը մնան համայնապատկերում պիտի դիտարկել:

Ուզու՞մ եք արդյոք նայաստել այդ երկրների կայունությանը, Թուրքիայի և Հայաստանի և մյուս հարևանների հաշտեցմանը: Եթե մենք ձգտում ենք աջակցել այդ գործընթացին, պետք է ուշադիր լինենք՝ չդիմելու համար լարվածություն, անցյալի վերարժարծում, դիմադարձություն հրահրելու ռիսկին:

Ֆրանսիան Հայաստանի բարեկամն է: Ֆրանսիան Թուրքիայի, տարածաշրջանի մյուս երկրների բարեկամն է: Հենց այդ պատճառով նա խաղում է, կոչված է խաղալու ծավալվող ճգնաժամերը կարգավորողի դեր:

Ձեզ հայտնի է Հայաստանի հետ մեր կապերի բազմազանությունն ու տարողունակությունը: Ֆրանսիան առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Մեր երկիրն ամեն միջոցի դիմում է այդ երկրի խաղաղությանը, ապահովությանը, կայունությանը, զարգացմանը սատարելու համար: Մինչև վերջերս, ինչպես դուք գիտեք, Հայաստանը չէր հավակնում, որ կոտորածները ցեղասպանություն որակվեն: Երկար ժամանակ ի վեր այդ երկրին անհրաժեշտ է հարևանների հետ հաստատել համագործակցության և փոխըմբռնման կապեր, որոնց շնորհիվ միայն հնարավոր կդառնա ժողովուրդների մերձեցումն ու տնտեսության, ժողովրդավարության զարգացման ապահովումը:

Ինչ վերաբերում է Թուրքիային, մեր բոլորի շահերը պահանջում են, որ Բալկանների, Մերձավոր և Միջին արևելքի, Կովկասի ճգնաժամային աղեղի խաչմերուկում գտնվող այս երկիրը շարունակի իր բարեփոխումներն արդիականացման ու կայունացման ասպարեզներում: Մեր բոլորի շահերը դրսևում են խթանել մարդու իրավունքների ապահովման, ժողովրդավարության զարգացումը: Դարասկզբի ջարդերը վիճարկելի չեն, և նրանց պատմական

իրողությունը չենք վիճարկել ոչ մենք, ոչ Թուրքիան...

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Թուրքիան վիճարկում է:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – ...Ինչ խոսք,

այդ դեպքերը ձեռք են բերել որոշակի զգացմունքային բեռ: Մեր պարտքն է անհրաժեշտ ժամանակ ընձեռել, որպեսզի թուրք ժողովուրդը համակերպվի իր իսկ պատմության հետ: Մենք երբեք չենք դադարել ժամանակակից Թուրքիայի ղեկավարներին թելադրել, որ ավելի ու ավելի ծավալեն այն սահմանափակումների վերացումը, որ սկսել են գործադրել՝ պատմաբաններին թույլ տալով կատարել իրենց աշխատանքը, անկողմնակալ ու ճշմարտացի աշխատանքը վերոհիշյալ իրադարձությունների լուսաբանման վերաբերյալ: Թուրքական արխիվները, բացի պաշտպանության նախարարության տնօրինածներից, այժմ բաց են:

Թուրքերեն լեզվով սկսում են հրատարակվել աշխատություններ, որոնք ենթարկվում են արդարության այդ պարտադրանքին: Վերջերս Թուրքիայում առաջին անգամ լույս տեսավ Վերֆելի գիրքը: Անկարան դրական որոշումներ է կայացրել, որոնց նպատակը Հայաստանի հետ հարաբերությունների կանոնավորումն է: Դա մասնավորապես վերաբերում է հաղորդակցությանը՝ օրինակ, օդային միջանցքին, գործարար շրջանների կապերին, բարձրաստիճան պաշտոնյանների առաքելություններին: Անհրաժեշտ է խթանել այն շարժումը, որը դեպի ապագա է միտվում, և ոչ թե խոչընդոտել: Դրանից ո՞վ կշահի:

Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, գործունեությունը, որ մենք ծավալում ենք ի նպաստ այդ տարածաշրջանի կայունացման, ինչպես արդեն ասացի, կախված է բարեկամական կապերից, որոնք նախաձեռնում ենք ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմի հետ: Դրա արդյունքն է հենց ամերիկացիների ու ռուսների հետ մեկտեղ, այսպես կոչված, «Միմսկի խմբում» համանախագահելը, որը ստեղծված է ԵԱՀԽ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում ու պարտականություն ունի կանոնավորելու Կովկասի, առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի ողբերգական հակամարտությունը:

Այս տարածաշրջանում հնարավոր են նոր ողբերգություններ:

Ազգայնականության դեր խաղում է իր դերը: Փոխվրեժի մտայնությունը վերացած չէ:

Աշխարհամասի հավասարակշռությունը նույնպես դեռևս կայուն չէ: Հյուսիսային և Հարավային Կովկասում վեց հարյուր կիլոմետր լայնությամբ ձգվող տարածության վրա տեղական հզոր պետություններով շրջապատված երկու հարյուր ժողովուրդ է ապրում, որն իրենից ներկայացնում է անկախ պետականությունների, ավելի կամ պակաս չափով պառակտված ինքնավարությունների, չճանաչված անջատողական խմբավորումների խառնուրդ՝ բախումների բազմազանությամբ, պատմական հակամարտություններով:

Ձգտենք ամեն ինչ անել, որպեսզի խուսափենք այնպիսի քայլերից, որոնք, որքան էլ հիմնավոր նկատառումներով առաջնորդվեն, կարող են անկանխատեսելի հետևանքների հասցնել, շիկացնել լարվածությունը: Ձորակցենք ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի նախաձեռնություններին:

Պարոն նախագահ. պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, ահա՛ կառավարության նկատառումները: Մեկտեղենք մեր ջանքերը, որպեսզի պահպանենք տարածաշրջանի խաղաղությանն անհրաժեշտ առկա հնարավորությունները: Ինձ թվում է, այդ մտահոգությունը բոլորդ էլ կիսում եք: Դա նաև Ֆրանսիայի արտաքին քաղաքականության պարտադրանքն է, որին կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով հավատարիմ կմնա:

ՊԻԵՌ-ԼԵՆՈՒՇ – Ուրեմն՝ համարձակ գործի անցնենք:

Սկսվում է մտքերի փոխանակությունը:

ՆԱԽԱԳԱՀ – Սկսում ենք մտքերի փոխանակությունը, ձայնը տրվում է պարոն Ժան-Պոլ Բրետին:

ԺԱՆ-ՊՈՒԼ ԲՐԵՏ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, 1948 թվականի դեկտեմբերի 9-ին մարդկությունը պաշտոնապես ընդունել է «ցեղասպանություն» բառը, որպեսզի բնորոշի ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակ մի խումբ անձանց՝ ազգային, ցեղային կամ կրոնական հավաքականությունների ոչնչացնելու միտումը:

Այդ օրը Միավորված ազգերի կազմակերպության լիազումար նիստը միաձայն ընդունել է ցեղասպանության ոճիրը կանխելու և

դատասպարտելու համաձայնագիրը և բացառիկ ճշգրտությամբ սահմանել է գործադրությունները, որոնցով որակվում է շարագործությունը:

Սահմանումը կազմված է հինգ կետից՝ սպանություն, ֆիզիկական կամ մտավոր առումով անհատի վրա ծանր հարձակում, միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ընդհանուր կամ մասնակի ոչնչացման են հասցնում, ձեռնարկումներ, որոնց հետևանքով խոչընդոտվում է ծննդաբերությունը, երեխաները բռնությամբ տեղափոխվում են:

Հայերի ցեղասպանությունը համընկնում է այս բոլոր կետերին: Փաստերն անվիճելի են, կասկածի տեղիք ամենևին չեն տալիս: Մի ազգային փոքրամասնություն բնաջնջելու համար գոյություն է ունեցել կանխամտածված ծրագիր, ոճրածին միտում, ստեղծվել է հատուկ կազմակերպություն:

Մինչդեռ արդեն ութսուներեք տարի է, որ այս փաստերը լռության են մատնվում: Առկա են դահիճների լռությունը, որոնք երբեք չեն ընդունել իրենց հանցանքը, պետությունների լռությունը, որոնք հանուն դիվանագիտության չեն դրել մարդու իրավունքների պաշտպանության և որպես նախապայման՝ հիշողության պարտքի խնդիրները, զոհերի լռությունը, որոնք տարիներ շարունակ չեն ցանկացել պատմել իրենց ողիսականը:

Դահիճները, պետությունները, զոհերը, յուրաքանչյուրը յուրովի ցեղասպանությունն անուշադրության են մատնել:

Դահիճներն ու նրանց հետնորդները ժխտում են՝ Թուրքիայում տեղի է ունենում այն, ինչն ընդունված է կոչել պետական ուրացում:

Կառավարությունները թուրքական իշխանություններից չեն պահանջում, որ դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ վերանայվի:

Ջոհերը նախընտրում են համր մնալ, որպեսզի շարունակեն ապրել:

Ըստ էության լռությունն է այս ցեղասպանության առանձնահատկությունը: Մեր խորհրդարանն այսօր հենց այդ լռությունը պիտի պաշտոնապես իզի:

Այո, հայերի ցեղասպանությունը պետք է ընդունել:

Հայերը, որոնք Ֆրանսիա հասան քսանական թվականներին, 1915-ի ցեղասպանությունից անմիջապես հետո, ուզում էին անցյալը մոռանալ: Նրանք տեղավորվեցին Փարիզից Մարսել ձգվող աշխարհագրական գծի վրա և սկսեցին աշխատել: Շատերը ընտանիք ստեղծեցին, քիչ խոսեցին հեռվում՝ պատմական Հայաստանում իրենց հետ կատարվածի մասին, նրանց մասին, որոնց ընդմիջտ թողել էին այստեղ-այնտեղ՝ սպանդանոցում, Եփրատի ջրերում, սիրիական Դ-եր Ջոր անապատի ողջակիզման խարույկներում:

Հայ համայնքն ասես ուզում էր ամեն ինչ մոռանալ, որ խաղաղ ապրի:

Իրականում, սակայն, ոչինչ էլ չէր մոռանում: Տներում պահպանվում էր մահվան հիշողությունը, չնայած այդ մասին կամ խոսում, կամ լռում էին: Բոլոր դեպքերում հուշը կար, մնում էր. մեծան անցյալը հեշտությամբ չի մոռացվում: Այն դիմադրում է երկար, ծանրանում է բեռի մեծան, փոխանցվում է հորից որդուն, մորից՝ դստերը:

Ժամանակ անցավ, ծնվեց երկրորդ սերունդը, հետո՝ երրորդը, որն ընդվզեց: Եվրոպայում և Միացյալ Նահանգներում ծագումով հայ տղամարդիկ ու կանայք գենը վերցրին, սպանություն կատարեցին, որպեսզի ցեղասպանությունը, որին զոհ էր գնացել իրենց ժողովուրդը, ընդունվի: Սառնասրտորեն նրանք պատուհասեցին դահիճների հետնորդներին, քանի որ լռությունն անտանելի էր դարձել:

Թուրքական պետության ներկայացուցիչները բռնաբարքների զոհ էին դառնում:

Ութսունական թվականների սկզբին էր՝ 1983-ին: Օռլում, քույրական օլագնացության ընկերության հաշվառման սեղանի առջև ռումբ պայթեց, ամենդ զոհեր եղան:

Յոթանասուն տարի անց բռնության պատասխանը բռնությունը եղավ, որն ասես նախազգուշացնում էր մեզ, թե ինչի կարող է հասցնել ցեղասպանության լռությունը:

Բոլոր դեպքերում զենքի կրակոցն, ըստ երևոյթին, դիպել էր միջազգային հանրության սրտին ու մտքին: Միավորված ազգերի կազմակերպությունը, այնուհետև Եվրախորհրդարանը ընդունեցին Հայոց ցեղասպանությունը:

Այդ ամենը, սակայն, դեռևս բավական չէ: Պետք է ավելի առաջ գնալ:

Այն պահին, երբ Թուրքիան ցանկանում էր անդամակցել Եվրոպական Միությանը, յուրաքանչյուր պետություն պետք է ընդունի ցեղասպանությունը, որովհետև Եվրոպան արժեքներ ունի, որովհետև ամեն մեկը, այսինքն ամեն պետություն պարտավոր է դրանք իմաստավորել ու տարածել: Խոսքը մարդու նկատմամբ հարգանքի, ցեղասպանության ոճրի դատապարտման ու անժամկետանցության, ուրացման դեմ պայքարի մասին է:

Չի կարելի բույլ տալ, որ բուրք, այսպես կոչված, պատմաբաններն ու դիվանագետները վերածնեն իրենց պատմությունը:

Ընդամենը մի քանի օր առաջ էր, որ նահանգային մի լրագիր որպես հայերի ցեղասպանությանն ի նպաստ իմ հրատարակած հոդվածի պատասխան, տպագրեց Լիոնում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի արձագանքը: Այն, ըստ էության, ճարպկորեն քողարկված ուրացում էր: Ինչ ձևով էլ որ ցեղասպանությունը ժխտեն, ուրացողները շատ շուտ են բացահայտվում, որովհետև նույնն են կրկնում:

Նրանք միշտ ասում են, որ զոհերը զոհեր չեն, այլ նախահարձակներ, որոնք փորձել են տապալել տվյալ ժամանակվա օրինական իշխանությունը:

Նրանք միշտ ասում են, որ բռնագաղթը ոչնչացման նպատակի հետապնդել, ամեն ինչ արվել է խիստ մարդասիրաբար:

Նրանք միշտ ասում են, որ զոհերի թիվը չափազանցված է: Եվ չնայած ակնհայտ իրողություններին, ավելի ու ավելի շատ փաստեր են վկայակոչում:

Ոչ անհատները, ոչ էլ ժողովուրդները ցեղասպանությունից չեն ապաքինվում, չեն ձերբազատվում: Չէ՞ որ ընդմիշտ ոչնչացված է մշակութային մի շերտ. ճարտարապետական կոթողներ, գրքեր:

Ցեղասպանությունը անշիրիմ մեռելներն են, բացակա ու այնքան ներկա մեռելները: Անուղղելի գործված է մեկընդմիշտ:

Այժմ Թուրքիայում կանայք ու տղամարդիկ, մտավորականներ, հետազոտողներ, հրատարակիչներ ու գրողներ հայտարարում են ճշմարտությունը: Նրանք թուրք են և հետևողականորեն հակադրվում են հայերի պատմության կեղծումներին:

Մի քանի շաբաթ առաջ մի երիտասարդ թուրք կին, որն անցնում էր մեր երկրով, հատուցում պահանջեց իր հայ եղբայրների

համար, մինչդեռ այդ նույն պահին Ֆրանսիայում նրանք, ովքեր թուրքամետ են համարվում, հանուն ժողովուրդների բարեկամության ոչինչ չեն ուզում անել:

Քանի որ բարեկամության զգացումն իր պարտադրանքներն ունի, որոնց թվում է բարեկամներին դեպի արդարություն և իրավունքի պաշտպանություն առաջնորդել կարողանալը, ուստի չի կարելի հանդուրժել պատմության աղավաղումները:

Հայերի ցեղասպանությունն ընդունել՝ նշանակում է ոչ թե թուրքերի դեմ, այլ նրանց ընդառաջ գնալ, ովքեր Թուրքիայում պայքարում են հիշողության, արդարության, իրավունքի համար:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Ոմանք ուզում են մեզ հավատացնել, որ հայերի ցեղասպանության ընդունումը կարող է վնասել Կովկասի խաղաղությանը: Բայց արդյո՞ք այն պահպանելու համար անհրաժեշտ է լռության դատապարտել ճշմարտությունը: Խաղաղությունը ոչ թե համրության, այլ այնպիսի տարածքում է հաստատվում, ուր յուրաքանչյուրը գտնում է իր իսկական տեղը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ լավ ասացիր:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Կեղծիքի վրա կառուցված խաղաղությունը խիստ անկայուն է...

ԺԱՆ-ՊԻԵՌ ԲԼԱՋԻ – Իհարկե:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – ... քանի որ այն ժողովուրդը, որի պատմությունը քողարկված է, անընդհատ ձգտում է բացահայտման, այդ դեպքում է հաճախ պատերազմին խաղաղությունը հաջորդում: *(Ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթոռներից բացականչում են՝ «Շատ ճիշտ է»):*

Տարիներ շարունակ Ազգային ժողովի բոլոր բազկաթոռներից հայերի ցեղասպանությունն ընդունել տալու բազմաթիվ առաջարկներ են եղել, որոնք ուղեկցել են Ֆրանսիայի հայ համայնքի պահանջատիրությանը:

Այսօր պատգամավորների քվեարկմանն է ներկայացվում ընկերվարականների խմբի օրենքի առաջարկությունը: Մարտին Դավիթն ու Դիդիե Միգոն քիչ անց կիսուսն այդ մասին: Ես կուզեի հիշատակել նաև Միշել Ռիվազին, Ժան-Պիեռ Բլազին և Դանիել Մարկովիչին, որոնք տարբեր փուլերում մասնակցել են նախագծի

մշակմանն ու հասել այն բանին, որ տեղ գտնի մեր խորհրդարանի օրակարգում:

Նման գաղափարի իրագործումը նախադեպ չունի: Այն ազգային ու միջազգային ասպարեզում չափազանց լայն արձագանք կգտնի: Մենք Արևմտյան Եվրոպայի մեծ տերություններից միակ այդպիսի քայլ կատարած երկիրը կլինենք: Անտարակույս, շատ-շատերը մեզ կհետևեն:

Մի քանի տարի առաջ «Երկիր և մշակույթ» ընկերակցությունը Փարիզում՝ Դեֆանսի սրահում, այնուհետև նահանգներում հայերի պատմության և ցեղասպանության վերաբերյալ լուսանկարների ցուցահանդես էր կազմակերպել: Ես ուզում եմ տպավորությունների գրքից մեջբերում կատարել, հիշատակել Լիոնել Շոսպենի խոսքերը. «Ճշմարտությունը պետք է միշտ փնտրել ու արտահայտել»: Մեր խորհրդարանը և խորհրդարանի միջոցով Ֆրանսիան հենց դա այսօր պիտի անեն՝ մեկընդմիջտ արտահայտեն ճշմարտությունը *(ծափահարություններ բոլոր բազկաթոռներից)*:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ռուլան Բլյումին:

ՌՈՒԼԱՆ ԲԼՅՈՒՄ – 1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքերի կառավարությունը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի դրոճամբ իրագործում է քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որի ահազանգը հայ մտավորականության գլխատումն է դառնում: Այնուհետև, Օսմանյան կայսրության՝ հայերով բնակեցված բոլոր նահանգներում կրկնվում է նույն սցենարը՝ արքայ, կտտանք, զանգվածային բնաջնջում և բռնագաղթ դեպի Միջագետք ու Սիրիայի անապատներ, ուր իր վախճանին է հասնում դեպի մահ ընթացող երկար ուղին: Այսպիսով, ամենադաժան պայմաններում ոչնչանում է մեկ ու կես միլիոն տղամարդ, կին ու երեխա:

Երիտթուրքերի կառավարությունն ի վերջո հասնում է իր նպատակին, որի բուն էությունը կանխամտածված, կազմակերպված և ծրագրված ձևով Արևելյան Անատոլիան հայաթափ անելը, այսինքն՝ այդ քրիստոնյա ցեղը վերացնելն էր:

Ամեն տեսակ վկայությունների համընկնումը, որին դժվար է հակադրվելը, հավաստում է թուրք ոճրագործների՝ ցեղասպանություն հղանալու, իրագործելու փաստը:

1915 թվականից ութսուններեք տարի է անցել և մինչև այժմ

հայ ժողովրդին չի վերադարձվել ճշմարտությունը: Ինչ խոսք վիտակերի՝ ՍԱԿ-ի 1985-ի գեկուցագիրը, ինչպես նաև Եվրախորհրդարանի 1987-ի որոշումը անդրադարձել են հայերի՝ 1915-ի ցեղասպանությանը, օտարերկրյա մի շարք խորհրդարաններ պաշտոնապես ընդունել են, բայց Ֆրանսիան՝ մարդու իրավունքների պաշտպանության, բազմաթիվ վերապրողներ հյուրընկալած երկիրը, դեռևս դիրքորոշումը չի հստակեցրել: Ուստի, չի կարող չուրախացնել այն հանգամանքը, որ անուշադյության մատնված բազմաթիվ առաջարկներից հետո, ի վերջո, սկսում ենք քննարկել «Հայերի՝ 1915 թվականի ցեղասպանության ընդունումը» կոչվող օրենքի նախագիծը, որը կրում է 895 համարը:

Ինչ խոսք, մենք ընդունում ենք օրենքի առաջարկի միակ հողվածի բառակապակցությունների բուն արժեքը, օրենք, որը խորհրդանշական մեծ իմաստ ունի. «Ֆրանսիան իրապարակայնորեն ընդունում է 1915-ի ցեղասպանությունը»: Այնուամենայնիվ, եթե ձևակերպումը հավանության արժանանա, կուզեինք, որ օրենքի նախագծի ընդունումից հետո համապատասխան հետևանքներ ունենար:

Դ-ա է այն բարեփոխումների նպատակը, որոնք իմ բարեկամ Ֆրանսուա Ռոշերլուան ու անձամբ ես ներկայացրել ենք արտաքին գործերի հանձնաժողովին: Հենց այդ մտայնությամբ էլ, ընդ որում առանց վիճաբանության ու լարվածության տեղի տալու, դիմում են գործընկերներին, մանավանդ կառավարությանը: Իմ կարծիքով, հայկական դատը այնպիսի վեհություն ունի, որ անհնար է ամբողջավարտությամբ տարվելը:

ՖԻԱՆՍՈՒԱ ՌՈՇԵՐԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ՌՈՒԼԱՆ ԲԼՅՈՒՄ – Քվեարկության հետևանքները, որոնք իրապարակելու ենք, անհրաժեշտ է վերլուծել ինչպես դիվանագիտական, այնպես էլ իրավաբանական առումով: Եվ իրոք, միջազգային ասպարեզում մեր կառավարությունը Թուրքիայի նկատմամբ պիտի այնպիսի դիրք գրավի, որպեսզի վերջինս ցեղասպանությունն ընդունի, վերջ տա ուրացման քաղաքականությանը: Եթե այդ երկիրն ուզում է անդամակցել Եվրոպական միությանը, անհրաժեշտ է, որ 1915-ի ցեղասպանության պատասխանատվությունն ստանձնի, ընդունի իր անցյալը:

ԺԱՆ-ՊԻԵՐ ԲԼԱՋԻ – Շատ ճիշտ է:

ՌՈՒԱՆ ԲԼՅՈՒՄ – Գերմանիան իսկույն և եթ խոստովանեց հրեական ողջակիզման մեղասկցությունը և, եթե այդպես չվարվեր, Եվրոպան այնպիսին, ինչպիսին այսօր է, չէր կայանա. այդ աստիճանի նշանակալի էին ֆրանս-գերմանական հաշտության հետևանքները: Նույնը կարող է Թուրքիայի հետ կատարվել, եթե, իհարկե, ապագայում ձգտում է լիարժեք խաղալ աշխարհառագմավարական այն դերը, որին հավակնում է:

Ինչ վերաբերում է իրավաբանական ուղղվածությանը, լավ կլինի, եթե օրենքի նախագիծը կարողանար դիմադարձել հայերի ցեղասպանությունը վիճարկող դրույթներին: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, որ կառավարությունը առաջարկի վերափոխել 1990-ի հուլիսի 13-ի օրենքը, որը, դժբախտաբար, խիստ սահմանափակ է, քանի որ առնչվում է միմիայն Երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարդկության դեմ գործադրված ոճիրներին: Այս օրենքը պետք է շատ արագ տարածել հայերի ցեղասպանության վրա ևս, որպեսզի Բեռնար Լևիսի նման ուրացման դրույթների հեղինակներին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն ընձեռի, թույլ չտա աճալարարությունների դիմել, որոնք քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածի պատճառով, դատական գործ հարուցելիս, սուկ քաղաքացիական պատիժներով են սահմանափակվում:

Որպես եզրահանգում պետք է ավելացնել, որ սույն օրենքի անգամ ոչ կատարյալ նախագիծը նպաստում է պատմական ճշմարտության բացահայտմանը և հենց դրանով Ֆրանսիայի հարգանքն է ներկայացնում ցեղասպանության զոհերին, վերապրողներին և նրանց զավակներին, որոնք այսօր մեր հասարակության անդամներն են: Այս ամենի պատճառով «ժողովրդավարական միության» խմբակցությունը օրենքին կողմ կքվեարկի (*ժամահայրությունն էր բոլոր բազկաթռոններից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խորապես հասկանալով հանդերձ զգացումը, որը կարող է համակել ամբիոն բարձրացած անձանց, հարկ են համարում հիշեցնել, որ ներկաները պետք է ձեռնպահ մնան վերաբերմունքի բացահայտ դրսևորումներից: Խոսքը տրվում է պարոն Գ.ի Հերմիեին:

Գ.Ի ՀԵՐՄԻԵ – Պարոն նախագահ, պարոն քարտուղար,

տիկնայք և պարունայք պատգամավորներ, մեր խորհրդարանում լինում են բացառիկ կարևոր պահեր և որոշումներ, որոնք պատիվ են բերում ոչ միայն մեզ, այլև մեր ամբողջ երկրին:

1998 թվականի մայիսի 29-ի այս ուրբաթն, առանց որևէ կասկածի, հենց այդպիսի պահերից մեկը կդառնա, քանի որ ութսուներեք տարիներ երկար, չափազանց երկար և, պետք է հատուկ նշել, երեսպաշտ լուսթյունից հետո մեր խորհրդարանը վերջապես կկարողանա քվեարկությամբ պաշտոնապես ընդունել և դատապարտել այն ցեղասպանությունը, որի զոհը 1915-ից մինչև 1922 թվականը դարձել է հայ ժողովուրդը: Հիյրավի, պատմությունն անուղղելի է: Մայրամուտն ապրող Օսմանյան կայսրությունում, որտեղ հայերի ազգային ինքնագիտակցությունը թուրքական ազգայնականության վերելքին զուգընթաց ամրապնդվում էր, ժամանակի երիտթուրքերի կառավարությունը սանձազերծում է մի ամբողջ ժողովրդի սպանող:

Դեռևս XIX դարի վերջին ահավոր կոտորածները 300.000 զոհ են խլում, սկզբնավորում արտագաղթի անդրանիկ ալիքը: 1915 թվականին, Առաջին աշխարհամարտի հենց սկզբնական շրջանում, երիտթուրքերի կառավարությունը կատարում է անուղղելին: Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ձերբակալվում է Կոստանդնուպոլսի հայության ընտրանին: Դրան հաջորդում են զանգվածային բռնագաղթն ու ազգաբնակչության ջարդը:

Ուրացողները պնդում են, որ հայ ժողովրդին բնաջնջելու միտումնավոր ցանկություն չի եղել, որը նշանակում է փոքր-ինչ շուտ մոռանալ 1915-ի մայիսի 27-ի հրամանը, որն օրինականացնում էր բռնագաղթը: Այն մեծ ընդգրկումներով, հետևողականորեն կազմակերպվում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում և հնարավորություն ընձեռեց ակնհայտորեն կանխամտածված, միտումնավոր կերպով համընդհանուր նախճիրի ենթարկել հայրուր-հագարավոր հայերի: Ահա ահավոր հանրագումարը, որը, եթե հարկ լինի, կարող է պարզաբանել վերոհիշյալ վիաստը: Ըստ հայկական աղբյուրների, մեկ ու կես միլիոն մարդ է զոհվել բռնագաղթի ընթացքում կամ վերջնական հանգրվանում: Միայն ութ հարյուր հազարն է փրկվել, որի մեծ մասն արտաքսվել է: Դրանով է բացատրվում հայկական սփյուռքի զանգվածայնությունը: Վեց-յոթ միլիոն հայության կեսից ավելին Հայաստանի Հանրապետության

սահմաններից դուրս է ապրում, որի մոտ կեսը նախկին ԽՍՀՄ երկրներում է, մոտ երկու միլիոնը սփռված է հինգ աշխարհամասերում, մասնավորապես Հյուսիսային Ամերիկայում, Մերձավոր և Միջին արևելքում, Եվրոպական միության երկրներում: Այսպիսով, երեք հարյուր հիսունից չորս հարյուր հազար ծագումով հայ ֆրանսիացի քաղաքացի է ապրում փարիզյան շրջանում, Լիոնում, Մարսելում, Նիցցայում, մեր երկրի այն բնակավայրերում, որոնք 1915-ից ի վեր ջարդերից խույս տված, բռնությամբ արքայազնության տալարտվածների հիմնական հյուրընկալողների շարքն անցան:

Յեղասպանության ոճիրը կանխելու և դատապարտելու Միավորված ազգերի կազմակերպության լիագումար նիստի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի միաձայն ընդունված համաձայնագրի, ինչպես նաև ֆրանսիական օրենսդրության՝ ցեղասպանությունը բնորոշող օրենսգրքի 211-1 հոդվածի դրույթները ոչ մի կասկած չեն թողնում, որ 1915-ին հայ ժողովուրդը դարձել է մոր ժամանակների առաջին ցեղասպանության զոհը: Այս ամենով հանդերձ, անցել է արդեն ութսուներեք տարի, բայց Ֆրանսիան պաշտոնապես ցեղասպանությունը չի ընդունել: Ավելի վատթարը կա, չպետք է ճշմարտությունը թաքցնել, տարիներ, տասնամյակներ շարունակ, չնայած բոլոր կողմերից ուղղված կոչերին, իրար հաջորդող կառավարությունները, ասես ամաչելով, համապատասխան նախագիծը մերժել են: Մինչդեռ հակառակը պիտի լիներ, նպաստեր համարձակություն, արդարամտություն դրսևորելուն:

Նախ և առաջ, դա իհարկե, հարգանք է այդ ողբերգության անթիվ զոհերի, ինչպես նաև նրանց հանդեպ, ովքեր, ճիշտ է, կարողացել էին փախչելով փրկվել, բայց ամեն ինչ կորցրել էին: Յեղասպանությունը ամենադաժան ձևերով կորստի մատնեց որոշակի հասարակություն, կենսաձև, մշակույթ, քաղաքակրթություն: Բոլոր վերջնական լուծումների հետևում թաքնված էր մի աշխարհ ու հիշողություն, մարդկության որոշակի մաս ոչնչացնելու ցանկությունը, որը նաև մերն է, չնայած պաշտոնական Ֆրանսիան երկար ժամանակ մոռացել էր: Ապա հաջորդում է մեր երկրի՝ մարդու իրավունքների պաշտպանության հայրենիքի՝ քսաներորդ դարի առաջին ցեղասպանության հանդեպ հիշատակի պարտքը կատարելու պարտականությունը: Ընդունել, հիրավի, նշանակում է ամեն

ինչ անել, որպեսզի մարդկության դեմ գործված այդ ոճիրը գրվի մեր հանրության խղճի մատյանում և դաս դառնա նման նկրտումները կանխելու համար: Հիշողության այդ պարտքը հրատապ անհրաժեշտություն է, քանի որ մեր ավարտվող դարը մինչև օրս ուրիշ ցեղասպանությունների էլ է ականատես եղել: Հայտնի է, որ նույնիսկ հինավուրց Եվրոպայի շենին մենք բարբարոսության վերադարձից ապահովված չենք:

Ի վերջո, այն դերի ընդունումը, որ հայ համայնքը խաղացել է մեր երկրում: 1915 թվականի կտորածներից փախչողները, ապա նրանց հետնորդները կարողացան լիովին միաձուլվել մեր ազգային համայնքին՝ շարունակելով հանդերձ ապրեցնել իրենց լեզուն, մշակույթը, «հայկականությունը»: Այն Ֆրանսիայի համար եղել և մնում է հարաշարժության ազդակ, ընկերային, մշակութային հարստության աղբյուր: Չոռռանաք, իհարկե, նաև ծագումով, հայ բազում ֆրանսիացիներին, ովքեր պատմության ամենամռայլ պահերին մեր ազատության համար մղվող պայքարին իրենց մասնակցությունը բերեցին՝ հանձին, օրինակ, Միսաք Մանուշյանի և իր Կարմիր ազդագրի մարտախմբի, որի անդամները, ինչպես Արագոնն է երգել. «ժամանակից առաջ իրենց սիրտը» տվեցին, «Ֆրանսիա գոչելով» մարտնչեցին:

Հիրավի, մի՞թե կարելի է անտարբեր մնալ հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի հանդեպ, որն այս դարում ցեղասպանություն, աքսոր, ստալինյան փորձություններ տեսավ, ԽՍՀՄ փլուզումից հետո ապրեց Դարաբաղի արյունոտ հակամարտությունը, շրջափակումը, չխոսելով արդեն 1988-ի սարսափելի երկրաշարժի մասին:

Ուրեմն երկար ժամանակ ի վեր Ֆրանսիան հայ ժողովրդի ցեղասպանությունն ընդունելու ծանրակշիռ պատճառներ ուներ: Հենց դրա համար համայնավարների խումբը, պետք է նշել նրանց հետևողականությունը, մասնավորապես Գի Դյուբոյոնեի միջոցով, ամեն տարի պահանջել է ընդունումը, բայց արդյունքի չի հասել: Ուրիշները Ֆրանսիայից առաջ են անցել: Խոսքը Միավորված ազգերի կազմակերպության 1985 թվականի օգոստոսի 29-ի որոշման, Եվրախորհրդարանի 1987-ի հունիսի 18-ի բանաձևի, ազգային բազմաթիվ խորհրդարանների մասին է: Դիշտ է, 80-ական թվականնե-

րին մեր պետության ու կառավարության ամենաբարձր պաշտոնյաները որոշակիորեն անդրադարձել են ցեղասպանությանը, բայց խորհրդարանին թույլ չեն տվել քննարկման դնել և ընդունումն արձանագրել հանրապետության օրենսգրքում:

Հասկանալի է, որ անհրաժեշտությունը մեծացել է վերջին տարիներին՝ մասնավորապես այս ապրիլի 24-ին, հանձին այն արարողությունների, որոնցով նշվեց ցեղասպանության 83-րդ տարեդարձը: Սրան գումարվում է հարցապնդումը, որը 1996 թվականին Հայրիսի ինստիտուտը կատարել է «Լե նուվել դ'Արմենի» պարբերականի համար, որով և բացահայտվել է, որ ֆրանսիացիների մոտ 70 տոկոսը գիտի հայերի ցեղասպանության մասին, և բացարձակ մեծամասնությունը ցանկանում է, որ Ֆրանսիան պաշտոնապես ընդունի որպես մարդկության դեմ գործված ոճիր:

Վերջերս, ապրիլի 23-ին, Մարսելում հայ համայնքի նախաձեռնած հանրահավաք – բանավեճի ժամանակ, որին մասնակցում էին քաղաքական բոլոր կուսակցությունների պատգամավորները կամ ներկայացուցիչները, մեզ շատ հարցեր տվեցին: «Ի՞նչու, – ասում էին հայերը, – այդքան խորհրդարանական արտահայտվում է ցեղասպանության ընդունմանն ի նպաստ, սակայն Ազգային ժողովում գործը քվեարկության չի հասնում: Բնականաբար, արժարժվեց նաև կառավարության դիրքորոշման խնդիրը: Ես, ինչպես ուրիշները, նկատել տվեցի, որ խորհրդարանականների կազմած նախագիծը կարող է քննարկվել ու քվեարկվել Ազգային ժողովում: «Խորհրդարանականների ատյանի» նման հնարավորության բացահայտումը բուռն հետաքրքրություն հարուցեց: Ահա թե ինչու համայնավարների խմբի անունից ես մայիսի սկզբին դիմեցի բոլոր պատգամավորներին, առաջարկելով այն օրենքի օգտին քվեարկելու պարտականությունն ստանձնել, որը պատրաստ էինք ձևակերպել մեր «ատյանում»:

Մենք շնորհավորում ենք ընկերվարների խմբին այն բանի համար, որ հենց այսօրվանից մեզ ընձեռում է այդ հնարավորությունը: Ինչ խոսք, մենք կքվեարկենք հայ ժողովրդի ցեղասպանությունը Ֆրանսիայի կողմից ճանաչելու օգտին, ձգտելով նպաստել վճռի ընդունմանը, որին այդքան երկար սպասում է հայ համայնքը: Եվ ոչ միայն հայ համայնքը: Ուստի ցանկանում ենք, որ

որոշումը լինի լիարժեք, ազդեցիկ, միանշանակ, դրա համար էլ հարկ ենք համարում վիճարկման ներկայացվող առաջարկը հարստացնել երեք հիմնական լրացումներով:

Առաջին հերթին, մեր Ազգային ժողովը ոչ միայն պիտի ընդունի, այլև դատապարտի այն ցեղասպանությունը, որին զոհ գնաց հայ ժողովուրդը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է...

Գ.Ի ՀԵՐՄԻՆ – Եվ մանավանդ՝ անհրաժեշտ է որոշակիորեն մատնանշել մարդկության դեմ գործված այդ ոճրի պատասխանատուներին...

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Իհարկե:

Գ.Ի ՀԵՐՄԻՆ – ... Այսինքն, Օսմանյան կայսրության օրոք այդ տարիներին իշխանությունը նվաճած երիտթուրքերի կառավարությանը: Ես այն տպավորությունն ստացա, որ արտաքին գործերի հանձնաժողովը դեմ է դրան, այն պատճառաբանությամբ, որ նման մոտեցումը կարող է խանգարել ինչպես Ֆրանսիայի և Թուրքիայի ներկա, այնպես էլ Թուրքիայի և Հայաստանի ապագա փոխհարաբերություններին:

ԺԱՆ-ՊՈԼ ԲԲԵՏ – Ամենևին:

Գ.Ի ՀԵՐՄԻՆ – հակառակն է հավանականը: Ճշմարտությունն աղավաղելը Թուրքիային ծառայություն մատուցել չի նշանակում: Իսկ ճշմարտությունն այն է, որ 1915 թվականից մինչև մեր օրերը թուրքական բոլոր կառավարությունները չեն ընդունում ցեղասպանությունը: Ավելին, տարիների ընթացքում նրանք հետևողականորեն ձգտում են վերացնել Թուրքիայի հայկական պատմական տարածքների հայկականության բոլոր հետքերը: Այս կապակցությամբ անկյուններ հարթեցնել նշանակում է պարզապես ավելի խորացնել պատճառները, որոնք Թուրքիային խանգարում են եվրոպական միասնականությանն անդամակցելուն...

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է...

Գ.Ի ՀԵՐՄԻՆ – ... և հայերի, բուրքերի միջև տևական խաղաղություն հաստատելուն, ինչպես նաև, իհարկե, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը ամրապնդելուն, ինչին 1995 թվականի ապրիլի 4-ին, նախագահական ընտրարշավի ժամանակ հայ համայնքին ուղղված նամակում անդրադար-

ծել էր Լիոնել Ժոսպենը: Բացի դրանից, անկյուններ հարթեցնելը չի բխում Ֆրանսիայի շահերից:

Երկրորդ՝ բանաձևը, որ մենք ընդունելու ենք, պիտի որոշակիորեն պարտավորեցնի կառավարությանը, մեր երկրում ամեն տարի նշել ցեղասպանության տարեդարձն ու նպաստել միջազգային ընդունմանը:

Ուրեմն, մեր խորհրդարանի վճիռը ոչ թե անհետևանք քայլ պիտի լինի, այլ պարտականությունների ստանձնում: Ստանձնում հանուն այն բանի, որ մարդկության դեմ գործված հանցանքը պիտի հիշողություններում, որին նպաստում են, մասնավորապես, ամեն տարի ապրիլի 24-ի կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները: Ստանձնում հանուն նաև այն բանի, որ միջազգային հանրությունն ընդունի ցեղասպանությունը: Այս հանգամանքն առանձնահատուկ կարևորություն է ստանում, որովհետև քարոզչական ծավալում արշավ է սկսվել՝ հակադրվելու համար ցեղասպանության ընդունմանը հակված ազգային ու միջազգային կարծիքին: Նամակները, որ մեր քվեարկության վրա ճնշում գործադրելու համար մեզնից շատերին ուղարկել են ուրացողները, երկար բանախոսություններից ավելի դիպուկ են հավաստում Ֆրանսիայի՝ հստակ ու որոշակի գործունեություն ծավալելու անհրաժեշտությունը:

Ի վերջո, հայ համայնքի օրինական պահանջին գոհացում տալու համար լավ կլիներ, եթե Գեյտյի 1990 թվականի հուլիսի 13-ի օրենքը ամբողջացվեր ու ուղղված լիներ ամեն տեսակի ցեղասպառության, հակահրեական, օտարաշայջության դրսևորումների դեմ:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵՐԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է...

ԳԻ ՀԵՐՄԻՇ – Նախ և առաջ այն բանի համար, որ նույն դատապարտությանն արժանանան բոլոր նրանք, ովքեր վիճարկում են որևէ այլ ցեղասպանության գոյությունը: Լիոնել Ժոսպենն իր արդեն հիշատակված մամակում նշում է, որ օրենքի նախագիծ է ներկայացվելու, և որ «ինքն անձամբ հետևելու է, որ քննարկման դրվի, ընդունվի լավագույն տարբերակը»: Այսօր դա անելու առիթն է, ինչու՞ հետաձգել: Հենց այդ նույն մտայնությամբ էլ կարելի է ընդարձակել Գեյտյի օրենքի նախնական ընդգրկման սահմաններն ու պաշտպանել ամեն տեսակ ցեղասպանության վերապրողների, Դ-իմադրության շարժման մասնակիցների բարոյական շահերը:

Ի սրտե ցանկանում եմ, որ այս առաջարկներն անուշադրությամբ չմատնվեն, մեր խորհրդարանը քվեարկի հայ ժողովրդի ցեղասպանությունն ընդունելու և դատապարտելու օրենքի լավագույն ձևակերպման օգտին: Մենք հանուն հայ համայնքի, որի նկատմամբ տաժում ենք բարեկամական համակրական զգացումներ, պարտավոր ենք կատարել այդ պատմական քայլն ու հենց դրանով ամրապնդել Ֆրանսիայի, Հայաստանի համագործակցությունը, խաղաղությունը: *(Արմատականների, Քաղաքացիների, Կանաչների խմբակցությունների բազմաթիվ բազկաթռոռներից ծափահարություններ են լսվում):*

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Պատրիկ Դեեջանին:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Գիշտն ասած, ես երկար տատանվում էի նախքան քննարկմանը մասնակցելու որոշում կայացնելս: Նախ, որովհետև խորը, նույնիսկ չափազանց խորն են զգացումները, որ համակել են ինձ, բացի դրանից, ես հասկանում եմ, որ իմ ելույթը դժվարությամբ կհմաստավորվի, որն անխուսափելիորեն անհրաժեշտ է օրենքի բանաձև ընդունելիս: Ամենակարևորը՝ ես չեի ուզի, որ բարոյական բարձր ոգին, որ մեզ առաջնորդում է ցեղասպանությունն ընդունելիս՝ ազդեցությունների ենթարկվելու պատճառաբանությամբ ճղճիմ մեղադրանքների արժանանա:

Ինչ խոսք, վերջին երկու օրերին, ելնելով այն բանից, ինչ թուրքական մամուլը գրում է մեր բոլորի մասին, ֆրանսիական բազմաթիվ ընկերակցություններ ձեռնարկում են, զգացի, որ իմ մտավախությունն անհիմն չէ: Այնուամենայնիվ, կարծում եմ, գոյություն ունի գերագույն պատճառաբանություն, որը վեր է ինձնից, որն ստիպում է, որ վերապրողների զավակների դյուրաբեկ ծայնն այս ամբիոնից լսվի: Գիշտ է, իմ անձը սոսկ պատահականություն կարող է համարվել, բայց առայժմ մեր խորհրդարանում ծագումով հայ ուրիշ ֆրանսիացի պատգամավոր չկա: Դրա պատճառներին կաշխատեմ անդրադառնալ:

Այս առավոտ, այս քննարկման պահին ինձ համար աջեր ու ձախեր չկան, կա հավերժական Ֆրանսիան (*ծափահարություններ*): Հենց այդ մասին եմ ես ուզում խոսել: Ես ուզում եմ խոսել թուլուզի արքեպիսկոպոսի՝ կարդինալ Սալիեթի մասին, որի քարոզը գերմանական բռնազավթիչներն արգելեցին, որովհետև պնդել էր.

«Հրեաները տղամարդ են, հրեաները կին են»: Ըստ էության, սովորական արտահայտություն է, բայց բարձրաձայն ձևակերպելն արգելված է եղել:

Այն մի բանի տողերը, որ մեզնից պահանջվում է քվեարկել այսօր, նույնպես շատ սովորական են, ինչպես հաճախ լինում է պարզ ճշմարտությունը: Բայց դրանք այստեղ արտաբերելու համար որքան երկար հարկ եղավ սալասել: Անգամ այս պատերից դուրս արտասանելու համար, չնայած շատ-շատերին, օրինակ Ֆրանսպրես գործակալությանը, դեռևս ահաբեկում են:

Երեկ քննարկվող օրենքի նախագծի կապակցությամբ մեր ազգային գործակալությունը պատմական իրադարձությունները հիշեցնելու համար երեսունվեց տողանոց հեռագրալուր էր տարածել, որտեղ նշված էր. «1915-ի ապրիլին ազգայնամոլ երիտթուրքերի կառավարությունը գործադրում է հայ ժողովրդին բնաջնջելու քաղաքականություն...»: Որոշ ժամանակ անց Ֆրանսպրեսը հեռագրալուրը փոխարինում է նորով, նշելով, որ նախկինը «սխալմամբ է ուղարկված եղել»: Խմբագրված տարբերակը նման է նախորդին, փոփոխված է մոտավորապես երեք բառ՝ բնաջնջման քաղաքականությունը դարձել է «բռնի ձուլման քաղաքականություն»:

Մնում է դրվատել նման մեղմասացությունն ու շնորհակալություններ հղել Օրսեյի առափնյան:

Հա՞րկ կար, իրոք, ամոթը մի կողմ դնել այնպիսի պահին, երբ մենք մեր ֆրանսիացի լինելուց այնքան հպարտ ենք, որ երջանկությամբ ենք համակվում: Նրանք, ովքեր դեռևս երեկ հարցնում էին. թե ինչ օգուտ է տալու օրենքի նախագիծը, այսօր արդեն գլխեն և հասկանալու համար նոր, հիանալի հնարավորություն ունեն:

Չուր են ձեռնարկվում խղճուկ, միտումնավոր մեքենայություններ, գուր են Զոլեժ դը Ֆրանսի թուրքագիտության ամբիոնը վստահում ժխտողականի՝ մեր երկրում ճշմարտությունն անընկճելի է: Այն երբեմն երկար ճանապարհ է կտրում, բայց, ի վերջո, աղբյուրի նման ժայթքում է այնպիսի տեղ և այնպիսի ժամանակ, որ ոչ ոք չէր սպասում: Ամեն դեպքում նա հագեցնում է բոլորի ծարավը, մի բան, որ այս առավոտ տեղի է ունենում մեզնից շատերի հետ:

Ֆրանսիան առանձնահատուկ երկիր է, դրա համար է նրա հողը հարազատ դարձել իմ ընտանիքին: Արևելքի քրիստոնյաների,

ինչպես նաև բոլոր փոքրամասնությունների, հալածվածների համար Ֆրանսիան երկար ժամանակ մեծագույն հովանավոր է եղել:

Մարդու իրավահավասարության հռչակագիրը ամբողջ XIX դարի ընթացքում բոլոր վայրերում, որտեղ խտրականությունն էր իշխում, լայն արձագանք գտավ: Այն մշակույթի շուրթակունը, որը նպաստում էր ընկալել ընդհանրականը, շատ ընտանիքների դրոշեց բարձր գնահատել ֆրանսերեն լեզուն, հետևողականորեն տանը գործածել: Այո, Ֆրանսիան մեծ հույս է եղել աշխարհում, այդ պատճառով է, որ նրա զավակներից շատերը դժվար արտասանվող անուններ ունեն:

Հենց Ֆրանսիան սիրելու, Ֆրանսիայի խոսքին հավատալու համար է նաև, որ հայերը հալածվել են իրենց արյանը ծարավի արևելյան աշխարհում:

Յեղասպանությանը նախորդել են բազում նախճիրներ, որոնք սանձազերծելու համար պատերազմի պատրվակն անհրաժեշտ չի եղել: Մեծ տերությունները հանդես էին գալիս որպես միջնորդներ, և դիվանագիտական խաղը, միշտ նույն խաղը, հանգում էր որոշ զիջումների, որոնց վերամբարձ արտահայտությամբ «հաշտություն» էին կոչում: Չոհերը հաճախ այնպիսի շահերի բախման պատրվակ էին դառնում, որ իրենք էլ չէին հասկանում:

Այն աստիճանի, որ Օսմանյան կայսրությունն ի վերջո վճռեց վերացնել նրանց, ովքեր միջազգային միջամտությունների մշտական առիթներ էին ստեղծում:

Առաջին աշխարհամարտի վերջում Ֆրանսիան Ազգերի լիգայից նախկին Օսմանյան կայսրության երեք տարածքների՝ Սիրիայի, Լիբանանի ու Կիլիկիայի կառավարման հանձնագիրն ստացավ, որոնք իր բանակը գրավել էր 1916 թվականից ի վեր: Ըստ էության, Կիլիկիան, որը բառարանները նաև «Փոքր Հայաստան» էին կոչում, ոլորվիտև մեծ թվով հայեր էին հաստատվել այնտեղ, շատ-շատերը մոռացել էին: Այս ժամանակ հայերի մեծ մասը հավատաց ազատագրությանն ու Ֆրանսիայի դրոշին ապավինեց: Նախճիրի ընթացքում ֆրանսիական նավատորմիչը, երբեմն ի հեճուկս կառավարական հրամանների, խարխիս էր նետում, փրկում հազարավոր հայերի: Գուք արդեն նշեցիք, պարոն պետքարտուղար, Ֆրանց Վերֆելն այդ դեպքերը ոգեկոչել է հռչակավոր, հրեաների

ցեղասպանությունն ախտանշող «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

Սակայն բուլճարի կյան հեղափոխությունը, Վերսալի հաշտության պայմանագիրը չվավերացնելը, ինչպես նաև միջազգային քաղաքականության առանձնահատկությունները ստիպեցին Ֆրանսիային 1921 թվականին լքել Կիլիկիան և ազգաբնակչությանը:

Ես այդ ամենն ասում եմ առանց դառնության, ստեղծված իրավիճակը համաշխարհային ողբերգության հետևանքն էր, չնայած հայկական ցեղասպանության օրենքն ընդունելիս մեր երկիրը չպետք է մոռանա, որ մոտիկից առնչվել է այդ իրադարձություններին, որ այնտեղ զենքի եղբայրակցություն է գոյություն ունեցել՝ այլ կերպ ասած, ութսուներեք տարի անց, որոշ իմաստով, ուղղի անցյալի սխալները:

Ես այդ մասին ասում եմ նաև առանց Թուրքիայի նկատմամբ որևէ թշնամական մտայնության, քանի որ լավ գիտեմ՝ ներկա ղեկավարներն անցյալի ոճրի հետ կապ չունեն: Բայց երբ կարդում եմ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության խոսնակի վերջին հայտարարությունները մեր քննարկման կապակցությամբ, որոնցով սպառնում է Ֆրանսիային ու արդարացնում է հայկական ցեղասպանությունը, այն տպավորությունն եմ ունենում, որ այդ ղեկավարները ոչինչ չեն յուրացրել:

Ուզում եմ հիշեցնել, որ անցյալից ձերբազատվում եմ միմիայն նրան շիտակ նայելուց հետո, և որևէ ազգ գարգանում է սեփական սխալներն ընդունելով:

Ճիշտ է, որ հարկ եղավ սպասել 1995-ին, որպեսզի մեր հանրապետության նախագահը վերջապես ճշգրիտ բառեր ասի Վիլ դ'Իվի շուրջկալի մասին: Բայց այդ օրը Ֆրանսիան անհամեմատ լավը, անհամեմատ մեծ դարձավ:

Իսկ Թուրքիային ես ամենայն լռությամբ ուզում եմ ասել՝ անսացեք Ֆրանսիայի խոսքին, դա խաղաղության խոսքն է, որը հնչում է նաև ձեր ինքնաբուժման համար: Հայկական ցեղասպանությունն ընդունելով դուք կձերբազատվեք ուրիշի նկատմամբ էլ նույն կերպ վարվելու գայթակությունից: Ես նկատի ունեմ քրդերին, նկատի ունեմ Կիպրոսն ու ամոթի վերջին պատը, որը, ինչպես Բեռլինում, երկու մասի է բաժանում եվրոպական մայրաքաղաքը: Եթե

Թուրքիան ուզում է մուտք գործել Եվրոպա, թող սկսի արժեքները որդեգրելուց:

Հայկական ցեղասպանության ընդունումը Թուրքիայի համար փրկություն կլինի, որովհետև միայն այդ կերպ կսրբի ձեռքերի արյունը: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, այսուհետև բոլոր ճնշվածներին կարելի է ասել, որ վերածնունդ է ապրում և նրանց ձայները կիլացնեն առևտրականների և փերեզակների ձայները:

Դիվանագիտական կյանքի ինչպիսի՞ պարզեցում, պարոն պետքարտուղար: Ֆրանսիայի բոլոր գալիք կառավարությունները պետք է մեկընդմիջտ վերջ տան մանվածապատությանը, այլախոսությանն ու համանունությանը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – այլապես բոլոր ցեղասպանությունները կարելի է վկայակոչել, բացի հայկականից:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Այո, այդպես է:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Միջազգային հարաբերություններն էլ պետք է պարզեցվեն: Մինչդեռ ձեզ լսելիս, պարոն պետքարտուղար, ես դա ասում եմ բարյացակամությամբ, որովհետև ձեզ ճանաչում ու հարգում եմ, այն զգացողությունն ունեցա, որ կառավարությունը չի ցանկացել ըստ արժանվույն գնահատել մեր այս քննարկումն ու ուղարկել է կառավարական պաշտոնակարգության ամենացածր աստիճանի ներկայացուցչին: Ես չեմ դժգոհում, պարոն պետքարտուղար, ձեր տաղանդը կարողացավ լրացնել այդ բացը: Բոլոր դեպքերում առաջին անգամ է, որ մենք տեսնում ենք, թե ինչպես է նախարարը առանց ծափահարությունների իջնում ամբիոնից: Դրա պատճառն այն էր, որ դուք ստիպված եղաք այնպիսի զգուշավորությամբ պատրաստված մի տեքստ ընթերցել, ուր տեղ չէի գտել «ցեղասպանություն» բառը: Մենք բոլորս դա նկատեցինք ու ունկնդրեցինք, պարոն պետքարտուղար, այնպես որ չենք մոռանա:

«ՀԱՄԱԽՄՔՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» ԽՄԻԱԿՅՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԹԻՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ – ճիշտ է, այդպես է:

ՍԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Իսկ առա՞ջ ինչպես էր:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Դուք բավարարվեցիք սոսկ Ազ-

գային ժողովի նկատմամբ կամքի դրսևորումով: Իրականում դուք ոչ թե մեզ, այլ Թուրքիայի հետ էիք խոսում: Ձեր ելույթը խորհրդարանին ուղղված չէր, նպատակ ուներ թուրքական պետության նկատմամբ հանդեպ կառավարության ներողամտությունն արտահայտել: (Ճափահարություններ «Համախմբում հանուն Հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների մի քանի բազկաթոռներից):

Պարոն պետքարտուղար, մենք սպասում ենք, որ բանաձևը մեր խորհրդարանում քվեարկելուց հետո անցնի սենատ: Հույս ունենք, որ այն չի կորչի Ունիվերսիտե և Վոժիրայի փողոցների արանքում: Դա կախված է ձեզնից, ձեր կառավարությունից:

Մենք հույս ունենք նաև, որ կառավարությունն ի վերջո համարձակություն կունենա: Համարձակություն, որը համեմայն դեպս, երկու հոգի գոնե արդեն ունեցել են: Խոսքը Ռ-ընե Ռ-ուքեի և Ժան-Պոլ Բրետի մասին է, ես լավ եմ հասկանում, թե ինչ վճռականություն, գիտակցականություն են դրսևորել նրանք, որպեսզի վիճարկեն ակնհայտորեն կառավարությանը դեմ այս բանաձևը: Ես մեծ հայրգանք ու ակնածանք եմ տաժում նրանց արածի նկատմամբ:

Նկատի ունեցեք մանավանդ, որ ցեղասպանության ընդունումը ձերբազատում է ծագումով հայ ֆրանսիացի քաղաքացիների համար: Այն նրանց ինքնության ընդունումն է, նրանք ցեղասպանության զավակներ են և այդպիսի համարում ունեն: Ու նաև արագատների բարոյական վերջին շիրիմը, որովհետև ուրիշը երբեք չեն տեսել, այսօր պետքարտուղար: Այն նրանց թերևս ի վերջո թույլ տա բուժվել չհասկացված լինելու ծանր բարդությից, որովհետև ողբերգությունը, որ ապրել են նրանք, անհնար է մեկուսացված կրելը: Այն իմաստով հայկական ցեղասպանության ընդունումը համակեցության և, ես չեմ վարանում բառն օգտագործելուց, սիրո վերջին դրսևորումն է, որը Ֆրանսիան կարող է ուղղել իր որոշ դժբախտ զավակների տառապանքները մեղմելուն:

Այս առավոտ ես «Համախմբում հանուն Հանրապետության» խմբի պատգամավորների հետ, որոնք կողմ են քվեարկելու օրենքի նախագծին, ուզում եմ երկու կայր բառ արտաբերել, որ հաճախ չի հնչում այս ամբիոնից և այսօր վերստանում է իր ամբողջական արժեքը. «Կեցցե Ֆրանսիան»: (Ճափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժորժ Սարրին:

ԺՈՐՇ ՍԱՐՐ – Պարոն նախագահ, պարոն պետքաքստուղար, սիրելի գործընկերներ, այսօր ելույթ ունենալով այս ամբիոնից, Ազգային ժողովի կիսաբոլոր սրահում ակամա հիշում եմ Մելինե Մանուշյանին, որն ապրում էր 11-րդ թաղամասում, որտեղ ընտրվել եմ ես ու ճանաչել նրան, ում հետ եղել եմ բազմաթիվ ցույցերի, Իվրիի գերեզմանատանը, Վալերիենի բարձունքում, մի շարք ժողովների, ինջուրների: Այո, ես նրա մասին եմ մտածում, ում կորցրինք մի քանի տարի առաջ, ինչպես նաև քրոջը, որը նույնպես ինձնից հեռու չէր ապրում և ընդամենը մի քանի օր առաջ մահացավ: Ես մտածում եմ այդ կանանց մասին, որովհետև արտաքուստ դյուրաբեկ, բայց միաժամանակ ուժեղ ու համարձակ էին: Եվ իհարկե, մտածում եմ Մանուշյանի, Կարմիր որմազդի հերոսների մասին: Ես մտածում եմ այն բոլոր կանանց ու տղամարդկանց մասին, որոնք, ինչպես քիչ առաջ ասում էր Պատրիկ Դևեջյանը, Ֆրանսիա եկան, որովհետև ազատության երկիր էր, և որոնք, չնայած դժվարություններին, տառապանքներին, ցավոք, նաև բախումներին, մեր կողքին, մեզ հետ իրենց տանն զգացին:

Ուրեմն առանց չափազանցության կարելի է ասել, որ այս օրը նշանակալից է:

Ի՞նչ իմաստ է ստանում, սակայն, Ֆրանսիայի՝ 1915 թվականի հայերի ցեղասպանության հանդիսավոր ընդունումը, որի կապակցությամբ այսօր բոլորս էլ մեր կարծիքն ենք արտահայտելու:

Խոսքն ամենից առաջ վերաբերում է պատմական ճշմարտության վերականգնմանը:

Երբ ես Կրեոզում, Գերեի Պիեռ-Բուրդան լիցեյում սովորում էի, մեր փոքրիկ դասընկերներից մեկը, որը ծագումով հայ էր, մի օր մեզ պատմեց պատմական հակամարտության՝ հայկական ցեղասպանության մասին: Երբ նա բացատրեց, որ այդ ցեղասպանությունը դեռևս ընդունված չէ, մենք ոչ միայն անհավանական, այլև անհնարին համարեցինք: Մանավանդ պատմական փաստերը համար եմ, փաստերը միշտ էլ փաստ են մնում:

Հրապարակայնորեն ընդունելով 1915 թվականի դեպքերը, ըստ էության նրանց տալով պատշաճ ձևակերպում, ինչպես, մասնավորապես, վարվել են 80-ական թվականներին ՄԱԿ-ի մարդու

իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովը և Եվրախորհրդարանը, մենք այսօր հնարավորություն ունենք միանշանակ ցուցաբերելու մեր կապվածության ուժը հիշողության հրամայական պարտքին, որը բացահայտում է ժողովրդավարությունների, հանրապետությունների, եթե նրանք իրոք այդպիսին են, և, մասնավաճառ, ժողովուրդների մեծությունը:

Այսպիսով, խորհրդանշականորեն արտահայտելով մեր նվիրվածության խորությունը մարդու և բաղաձայն իրավունքների, ինչպես նաև համընդհանուր արժեքների նկատմամբ, որի, ավելի քան որևէ այլ բանի կրողն է անկասկած, մեր Հանրապետությունը, մենք կարող ենք նշանակալի մպաստ բերել հանրային մոռացման և ուրացման դեմ անընդհատ վերսկսվող պայքարին: Ցեղասպանություն²ն, այո՛, բնականաբար, և սա պետք է ասել առանց ողջակիզման բացառիկությունը չնչին չափով իսկ նվազեցնելու:

Հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը Ազգային ժողովում ընդունելով, մենք ծագումով հայ մեր հայրենակիցներին հանդիսավորությամբ հավաստած կլինենք մեր բարեկամությունը, համագործակցությունը, եղբայրությունն ու երախտագիտությունը: Այդ ընդունելով Ֆրանսիան կնպաստի հայերի և թուրքերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը, հավաստելով փոխադարձ ժողովրդավարության ամրապնդմանը մասնակցություն բերելու իր վճռականությունը:

Այս բնագավառներում անցյալի բողոքները պարզապես կարգելակի առաջընթացի իրագործումը, որին մենք անդրադառնում ենք մեր ցանկությունները ձևակերպելիս:

Հայացքը, որ ժամանակակից Թուրքիան ուղղում է իր իսկ պատմությանը, բավականաչափ բարեփոխված չէ: Պետք է էլ ավելի բարեփոխվի: Թուրքիան գտնվում է Եվրոպայում, եվրոպական կառույցներում: Մենք ցանկանում ենք, որ երբ պահը հասնի, նա մեզ միանա Եվրոպական միությունում:

Թուրքիայի և Հայաստանին կապված լինելով բարեկամության, համագործակցության սլատմական կապերով, որոնք ամրապնդվելու հեռանկար ունեն, Ֆրանսիան, կարծում են, այս նկատառումով ընդունելով հայերի 1915-ի ցեղասպանությունը, կարող է նպաստել երկու երկրների հարաբերությունները նոր հիմքերի վրա

կառուցելուն, որը Եվրոպայի հարավ-արևելքում, ալեքսիսլովո Կովկասից ոչ հեռու գտնվող տարածաշրջանի կայունացման կարևոր գործոնն է:

Ահա նման մտայնությամբ է, որ ես, սիրելի՛ գործընկերներ, ցանկանում եմ, որ մենք միաձայն ընդունենք հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը:

Այն խմբակցությունը, որի մաս են կազմում «Քաղաքացիական շարժման» պատգամավորները, մեծագույն վճռակա-նությամբ միանում է ընկերվարականների խմբի նախաձեռնու-թյանը, չնայած ինքն էլ, այլ խմբավորումների հետ, համամասն օրենքի նախագիծ ներկայացրել էր:

Սակայն, քանի որ ես արտահայտվում եմ ներքին բացարձակ ազատությամբ, ուզում եմ կառավարությանն էլ ողջունել, որովհետև զաղտնիք չէ՝ եթե մենք ուզում ենք օգտվել մեր պատգամավորական իրավունքից, որպեսզի կյանքի կոչենք մոզական դարձվածքը, կառավարությունը պետք է մեզ համամիտ լինի: Եվ ես չեմ պատկե-րացնում, այս մասին Պատրիկ Դ-Լեջյանին ասում եմ ամենայն ան-կեղծությամբ ու սրտաբացությամբ, որ քննարկումը Ազգային ժողո-վում կատհամանափակվի:

ՊԻԵՌ-ԼԵՆՈՒՇ – Երանի ձեր ձայնը լսելի դառնա:

ՇՈՐՇ ՄԱՐՐ – Կառավարությունը երկու երես չունի: Ես հա-մոզված եմ, որ այս դեպքում խաբկանք չի կարող լինել:

Այո՛, սիրելի՛ գործընկերներ, մենք հանդիսավորությամբ ընդունում ենք պատմական հակամարտությունը՝ ցեղասպանու-թյունը, որպեսզի վաղը թուրքերի ու հայերի հարաբերությունները նույնքան պարզ ու բնական լինեն, որքան մերն են, օրինակի համար, մեր անգլիացի կամ գերմանացի բարեկամների հետ:

Հետևաբար մենք քվեարկում ենք ներքին համոզումով և միևնույն ապրումներով:

Այսօր առավոտյան, ձայնասփյուռով, Շարլ Ազնավուրը մի միտք արտահայտեց, որն ուզում եմ հիշատակել: Համառոտ նա հետևյալն ասաց. «Ամեն ինչ լավ է, իհարկե, բայց ես ցանկանում եմ, որ մի օր որևէ պաշտոնյայի, ասենք, Փարիզում Թուրքիայի դես-պանի հետ ինչ-որ բան կարողանայինք անել, որպեսզի ընդունվեր պատմական հակամարտությունը»:

Ես քվեարկում եմ, ուրեմն, այս մտայնության օգտին: Եվ ես քվեարկում եմ, որովհետև, այլափոխելով Լեոն Բլումի դարձվածքը, ուզում եմ ասել՝ հավատում եմ, հույս եմ փայփայում, իսկ հույս փայփայում եմ, քանի որ հավատում եմ (*ժափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Դիդիե Միգոյին:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է հայերի 1915 թվականի ցեղասպանությունը»: Ես ուզում եմ արտահայտել պատիվը, հպարտությունը, հաճույքը, որ զգում եմ Ազգային ժողովի ամբիոնից այդ բառերն արտասանելիս, և պաշտպանել ընկերվարականների խմբի, հարողների օրենքի նախագիծը:

Երկար տարիներ հայերի ցեղասպանությունը ընդունել տալու նպատակ ունեցող բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել մեր ժողովին, բայց առաջին անգամ և լա, շնորհիվ ընկերվարականների խմբի և հարողների հետևողականության, մեկը հրապարակայնորեն քննարկվում է: Այս կապակցությամբ ես խիստ բարեկամաբար, բայց նույնքան վճռական կուզեի ասել Պատրիկ Դևեջյանին, որ սիրով կպաշտպանեմ այն կառավարությանը, որը մեզ լռության չի դատապարտում և ձգտում է, ինչպես նշեց Ժան-Պոլ Բրետը, որ ճշմարտությունը բացահայտվի ու վերահաստատվի: Ի վերջո խորհրդարանական բանավեճերը բավական երկար ժամանակ է արդեն նախաձեռնվում են հենց այն բանի համար, որ որոշ տարածայնություններ սպառիչ ճշգրտումներ ստանան (*ժափահարություններ ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթոռներից*):

Ի՞նչն է մեզ մղել մման քննարկման: Նախ՝ պատմական փաստերը բացահայտելու ցանկությունը: Փաստը մնում է փաստ՝ դեռևս 1981-ին ասում էր Կլոդ Շեյտունը: Իսկ տվյալ դեպքում փաստն այն է, որ Օսմանյան կայսրությունում ապրող հայերը իսկական ցեղասպանության զոհ են դարձել: Այս նույն ճշմարտությունը 1984թ. Իզեր կատարած ուղևորության ժամանակ Վիեննում, ուր գտնվում էր Լուի Մերմազի հրավերով, արտահայտել է Ֆրանսուա Մյուտերանը: Ֆրանսիայի՝ եվրոպական առաջին խոշոր երկրի ցեղասպանության ընդունումը Հունաստանի խորհրդարանից, Բելգիայի սենատից,

Եվբախորհրդարանից հետո համահունչ է մեր պատմությանը, մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքների հռչակագրի երկիրը մնալու ձգտմանը, որի գլխավոր նախապայմանը հարգանքն է անձի նկատմամբ:

Դրան հաջորդում է մեզ վրա ծանրացած հիշողության պարտքը դրսևորելու ցանկությունը: Յեղասպանության ընդունումը մոռացման դեմ ուղղված քայլ է: Հիրավի այդ ահավոր ոճիրը մոռանալ նշանակում է յուրովի շարունակել և ըստ էության վիրավորանք է գոհերի, նրանց ընտանիքների հիշատակին:

Վերջապես այն մարդկային բանականությանն ուղղված կոչ է, որպեսզի նման նախճիրները, ցեղասպանությունները չկրկնվեն: Պատմությունը հավաստում է մեզ, որ ունակ է նաև շղթակրատանքի, այնպես որ ուրացման փոյժերն ու ճիգերը չսփազանց բացահայտ են, մենք իրավունք չունենք մեր համոզմունքները չարտահայտել:

Եթե դիվանագիտությունն օգտակար է, չափից ավելի դիվանագիտությունը մեղսակից է դառնում այն պահից, երբ սկսում է հասարակացնել արհավիրքն ու ոճիրը:

ՄԻՇԵԼ ՌԻՎԱԶԻ – Շատ ճիշտ է:

ԳԻՂԻՆ ՄԻԳՈ – Այս ասպարեզում էլ պետք է կարողանալ պատմությունից դասեր քաղել և դրանք բացատրել ամբողջ աշխարհի դիվանագետներին: Նախագիծը, որ ներկայացված է ձեզ, ենթարկվում է քննադատության. այն ներկա Թուրքիայի դեմ ուղղված բռնաճնշում է համարվում: Արդեն ասվեց՝ նման մտայնությունը բացարձակապես անհիմն է:

Մենք ցանկանում ենք մասնակցել, մեր նպաստը բերել թուրքերի և հայերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը: Մենք արժևորում ենք այն կապերը, որ մեզ միացնում են Թուրքիային և նրա ժողովրդին, թույլ ենք տալիս հուսալ, որ վաղը դրանք ավելի ամուր կլինեն, այնպես, ինչպես ուզում ենք մի անգամ ևս ի ցույց դնել առնչակցությունները, որ մեզ միավորում են Հայաստանին, հայ ժողովրդին:

Ձեզ ներկայացված օրենքի նախագծի հեղինակներից ոչ մեկը որևէ ձևով չի հավակնում պատասխանատվության ենթարկել այսօրվա թուրք ժողովրդին կամ պաշտոնեությանը, վիճարկել

պայմանագրերով, միջազգային օրենսդրությամբ ընդունված սահմանները: Պարզապես մենք ուզում ենք Թուրքիային, նրա ներկա կառավարողներին ասել, որ տվյալ դեպքում երկրի նկարագիրը բնութագրվում է մաս Օսմանյան կայսրության հրահրած պատմականորեն ապացուցված փաստերն ընդունելու կարողությամբ, որի դեմ ընդվզել է նույնիսկ թուրքական հանրապետությունը: Մենք ձգտում ենք որոշակիորեն նշել, որ պատմությունը ժխտել նշանակում է ինքն իրեն չհարգել (*ժափահարություններ ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթռոռներից*):

Ճշմարտությունը միշտ էլ ի վերջո հաստատում է իրեն, այնպես որ ավելի լավ է հնարավորին չափ արագ այն ընդունել:

ՄԻՇԵԼ ՌԻՎԱՋԻ – Շատ ճիշտ է:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Այո, այդպես է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Ցեղասպանությունը ընդունելով՝ մենք փորձում ենք հասնել այն բանին, որ ներկա Թուրքիայի կառավարությունը փոխի իր պաշտոնական դիրքորոշումը:

Օրենքի նախագիծը ոմանք էլ այլ տեսակետից են քննադատում՝ բավարար չեն համարում: Մինչդեռ այն հսկայական քայլ կլինի հայ ժողովրդի՝ ոճիրներն ու ցեղասպանությունն ընդունել տալու համար մղած պայքարի պատմության մեջ, ոճիրներ ու ցեղասպանություն, որոնց գոհն է եղել ինքը:

ԺՈՐԺ ՄԱՐԲ – Շատ ճիշտ է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Իհարկե, լրացումներ կարող են լինել, բայց թույլ տվեք ինձ նկատել տալ, որ պարզ ձևակերպումները երբեմն լավագույնն ու ամենաազդեցիկն են:

ԱԼԵՆ ԿԱԼՄԱ – Անշուշտ:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Ուրեմն այնպես չանենք, որ օրենքի նախագիծը խճողվի: Ամենակարևորը՝ պահը բաց չթողնենք: Այս դահլիճում բոլորս էլ լի ենք հայկական ցեղասպանությունն ընդունելու ցանկությամբ ու անհրաժեշտության գիտակցումով: Աշխատենք պահպանել այն վավերական հայտարարության անկողմնակալ բնույթը, որը քվեարկման է ներկայացված մեզ: Այն է՝ «Ֆրանսիան հրապարակաճանաչում է հայերի 1915 թվականի ցեղասպանությունը» (*ժափահարություններ բազմաթիվ բազկաթռոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Ֆրանսուս Ռոշերլուանին:

ՅՐԱՆՍՈՒԿ ԱՌՇԵԲԼՈՒԿԱՆ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, ակնհայտ գոհունակությամբ ու խոր հուզմունքով ենք մենք այսօր ձեռնամուխ լինում ընկերվարականների խմբի ներկայացրած՝ հայերի ցեղասպանությունն ընդունելու օրենքի նախագծի քննությանը: Իրոք, բանաձևի ընդունումը, ինչպես վկայում են վերջին տարիների ընթացքում ներկայացված տարբեր առաջարկները, ցանկալի է խորհրդարանի բոլոր պատգամավորների համար: Այն մեր մեծ թվով հայրենակիցների սպասմանն արձագանքող առաջին դրական պատասխանը կլինի:

Թող թույլ տրվի ինձ, ուրեմն, իմ ելույթի սկզբում հարգանքի տուրք մատուցել նախճիրի հարյուր-հազարավոր զոհերի հիշատակին, որը XX դարի առաջին ցեղասպանությունը պիտի դառնար:

Ես միանում եմ այն ապրումներին, որ այսօր զգում են մեր՝ ծագումով հայ հայրենակիցները, որոնց համար 1915 թվականի ջարդերի սկզբից 83 տարի անց կայանալիք ընդունումը աննախադեպ և ներհուն իրադարձություն է: Օրացուցային պատահականությամբ այն ժամերի տարբերությամբ համընկնում է 1918-ի մայիսի 28-ի Հայաստանի առաջին անկախության տարեդարձի օրվան: Մեր կառավարությունը համաձայնելով, որ բանաձևի քննարկումը տեղ կգտնի խորհրդարանի՝ նիստի լրացուցիչ օրակարգում, կարևոր և, հարկ է խոստովանել, փոքր-ինչ անսպասելի քայլ կատարեց, մասնավորապես, եթե դատելու լինենք պարոն վարչապետի վերջին՝ ապրիլի 24-ի հայտարարության ձևակերպումներից կամ մեր գործընկերներին՝ Ժանին Ժամբուի, Ժան-Պոլ Բրետի և Գի Թեյսիեի, իմիջիայրոց, վերջինս ներողություն է խնդրում արտասահմանում գտնվելու համար, հարցապնդումների՝ հենց իրենց կառավարության անդամների այստեղ տրված պատասխաններից:

Իհարկե, չի կարելի ասել, որ ներկա կառավարության դիրքորաշունը զգալիորեն տարբերվում է նախադրյալներից, մանավանդ որ քննարկվող հարցի կապակցությամբ մենք երկարատև սպասումներ ենք ունեցել...

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ցավալի է, բայց այդպես է:

ՅՐԱՆՍՈՒԿ ԱՌՇԵԲԼՈՒԿԱՆ – Ի վերջո, բոլորն էլ հետևողականորեն ու համառորեն խուսափել են «ցեղասպանություն»

բառն օգտագործելուց:

Ֆրանսիան Հայաստանին կապված է պատմական առնչություններով ու դարավոր բարեկամությամբ, մանավանդ 1915-ի ողբերգությունից հետո, երբ տասնյակ հազարավոր հայեր այս երկիրը ապաստարան դարձրին և մեծապես նպաստեցին, որ մեր հայրենակիցները չափազանց զգայուն դառնան ցեղասպանության ընդունման նկատմամբ:

Ուստի Ֆրանսիան՝ մարդու իրավունքների օրրանը, կարող էր երկար ժամանակ լռություն պահպանել, կարող էր չանստը մի ամբողջ ժողովրդի ձայնին, այն դեպքում, երբ աշխարհով մեկ ուրիշ ժողովուրդներ արձագանքում էին: Ֆրանսիայի հայ համայնքը, որի այս դահլիճում գտնվող ներկայացուցիչներին ուզում են ողջունել այս առավուտ, բացի իր օրինակելի միաժողովուրդից, մեզ մասնակից դարձրեց ցեղասպանության միջազգային ընդունման պայքարին, որն արտահայտվում է չափազանց ծավալուն, պատմականորեն վիճարկելի հարցի հեռահար հետապնդմանն անհամեմատ գերազանցող գործունեությամբ:

Խոսքը, եկեք չսխալվենք, վերաբերում է համընդհանուր ընդգրկմամբ պայքարին, քանի որ XX դարի ցեղասպանությունները անբակտելի ամբողջություն են դարձել:

Ես հասկանում եմ արտաքին գործերի հանձնաժողովի տարակուսանքը, քանի որ, ինչպես իր հիանալի զեկուցագրում ընդգծեց Ռ-ընե Ռուբեն, նախնական ձևակերպումը երկար ժամանակ մի կողմ էր դրվել, հետո ենթարկվել կամայական խմբագրման: Ակնհայտորեն յուրաքանչյուր բառ «կշռադատվել» ու «հիմնավորվել» էր:

Հիրավի, չի կարող կասկած չհարուցել այն բանաձևի ներգործությունը, որ կանոնակարգող նշանակություն չունի, սահմանափակվում է սուկ խորիդրախմաստային բնույթի սովորական հայտարարությամբ, որի խմբագրողները, հենց քեկուզ ըստ արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ժակ Լանգի խոստովանության, առաջնորդվել են դիվանագիտական նկատառումներով:

Բայց Ֆրանսիան կարող է արդյուք երկար ժամանակ այսպես բողոքել հայկական ցեղասպանությունն իրագործած մեղապարտ պետության պատասխանատվության հարցը: Պատասխանատվու-

թյան հասկացությունն ընդհանուր է իրավաբանական բոլոր համակարգերում, և առնվազն տարօրինակ կլիներ մի այնպիսի ուղի գտնել, որն այն շրջանցեր:

Այս առումով էլ հնարավոր է և անընդհատ հրաժարվել ոճրագործության հեղինակներին մատնացույց անելուց:

Տասը տարի է արդեն, ես այս ամբիոնից իմ տարբեր ելույթների ընթացքում պարբերաբար անդրադառնում եմ հայկական ցեղասպանությանը մասնավորապես, մարդկության դեմ գործված մյուս ոճիրներն ընդհանրապես ընդունելու անհրաժեշտությանը, ինչպես նաև այնպիսի կազմակերպություն ստեղծելու անխուսափելիությանը, որը ուրացման նկրտումներից պաշտպանի այդ հանցագործությունների բոլոր զոհերի հիշատակը:

Ինչպես XX դարի ցեղասպանության լմբռնման իր հիանալի վերլուծականում շատ ճիշտ բացահայտել է դոկտոր Իվ Տերնոնը, հայկական ցեղասպանության բոլոր փուլերը կրում են ուրացման դրոշմը: Մինչդեռ փաստերն ուրանալ նշանակում է ուրանալ նույնիսկ զոհերի գոյությունը: Մա ընդհանրական ուրացում է, որը միաժամանակ հիմնված է պատասխանատվությունը թոթափելու, ինչպես նաև ցեղասպանության նպատակները ժխտելու վրա: Այս դեպքում զոհը հանցավոր է դառնում, նա պիտի ապացուցի, որ բռնության է ենթարկվել, այլապես ջարդերը պատերազմի պատահականության հետևանք կարող են համարվել:

Ահա այդպես, արդեն ութսուներեք տարի է, որ Թուրքիան, հույսը դնելով ժամանակի մոռացկոտության, ներողամտության, անտարբերության ներգործության վրա, հետևողականորեն ու բացահայտորեն ձգտում է վերացնել 1915-ից մինչև 1922 թվականը պատմականորեն իրագործված ոճրի բոլոր հետքերն ու վկայությունները: Մեզնից ամեն ոք, ելնելով վերջին օրերին ստացած փոստից, կարող է պատկերացնել անբարեխղճությունն ու ավատեղեկատվության ծավալը, որ տիրում է այդ ասպարեզում: Հնարավոր է և անտարբեր մնալ մման ահաբեկչական նկրտումների նկատմամբ:

Իրոք, եթե ոչ մի խորհրդարան պատմությունը սրբագրելու, պատմաբանների ճշգրտելու վճռականությունը չունի, արդարադատ երկրում, ճիշտ հակառակը, օրենսդրի պարտքը պետք է լինի ամեն ինչ անել զոհերին, նրանց հիշատակը պահպանելու, մման ոճիրները

կանխարգելելու համար: Ի վերջո, հենց դա է այն բանաձևի իմաստը, որը քննարկվող հարցի առնչությամբ իմ գործընկերներ Ռուլան Բլյումի և Պատրիկ Դևեջյանի հետ ձևակերպել ենք, այս առավոտ ներկայացրել ձեր ուշադրությանը:

Պարոն պետքարտուղար, բանաձևի ընդունումը, այսպիսով, առաջին փուլն է, պիտի հաջորդի մեր իրավունքի վերանայումը և հնարավորություն ընձեռի այսօր դեռևս անտեսվող իրավաբանական սկզբունքի իրագործման համար: Բանաձևը մեզ պարտադրում է մոռացության չմատնել այս ցեղասպանությունը և միջազգային ատյանների միջոցով նպաստել Հայաստանի ու Թուրքիայի մերձեցմանը, խաղաղության հաստատմանը:

Այն պահին, երբ մեր Ազգային ժողովը Ռուսաստանի Դումայից, Հունաստանի խորհրդարանից ու Բելգիայի սենատից հետո հանդիսավոր կերպով արտահայտվելու է ի նպաստ հայերի ցեղասպանության ընդունման, պետք է նկատի ունենանք, որ մենք միշտ ենք հետևողականորեն ձգտել դրան և, մի կողմ դնելով քաղաքական տարակարծությունները, միակամ հաստատենք օրենքի բանաձևը, շնայած այն ունի ակնհայտ թերություններ, մասնավորապես՝ քսաներորդ դարի առաջին ցեղասպանության սանձազերծողներին չհիշատակելու առումով:

Ահա թե ինչու ես պիտի քվեարկեմ ի նպաստ այն նախագծի, որը մեզ է ներկայացված այսօր (*Ճակահայություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Պիեռ Լելուշին:

ՊԻԵՐ ԼԵԼՈՒՇ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, հարցը, որ խորհրդարանական նախաձեռնությամբ մեզ զբաղեցնում է այս առավոտ, այնքան հիմնարար է պատմության, արդի իրադարձությունների՝ ես մտածում եմ Ռուանդայի, Կոսովոյի մասին, միջուկային մրցավազքի, որին այս օրերին մենք ականատես ենք լինում Հնդկական մայրցամաքում, ազգային ու կրոնական հակամարտությունների, որոնք առկա են մեր հաստատություններում, վերջապես, մեր արժեքների, ժամանակակից Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների առումով, որ ինձ հատկացված մի քանի րոպեները ճշմարտությունը ըստ էության բացահայտելուն չեն բավականացնի:

Թույլ տվեք ուրեմն ինձ, առանց անդրադառնալու ցեղասպանության և այն իրադարձությունների բնութագրմանը, որ տեղի են ունեցել դարասկզբում, որոնք արդեն արժարժեցին բազմաթիվ գործընկերներ, կարճ, բայց իմ կարծիքով ոչ ծեծված մտահանգումներով բացատրել են մեր քվեարկության իմաստը:

Այս քվեարկությունը, սիրելի պարոն Միգո, Պատրիկ Գևեջյանը հենց նոր շատ ճիշտ նշեց, ոչ աջակողմյան է, ոչ էլ ձախակողմյան: Այն մի ամբողջ ժողովրդի հիշողության նկատմամբ սրբազան պարտականության հիմնավոր արտահայտություն է, ժողովուրդ, որին մենք ներկայացնում ենք այստեղ: Ես նկատի ունեմ թե՛ հայերին և թե՛ մեր արժեքներն ու ազգային պատմությունը:

Քվեարկելիս ես, կարծում եմ նաև անկախ կուսակցական պատկանելությունից դուք բոլորդ, այն ներհուն գիտակցությունը պիտի ունենան, որ մեր հանրապետության հիմնաքարը հանդիսացող ընդհանրական գաղափարների պաստառին, գաղափարներ, որոնք արդեն երկու դար է իմաստավորում են Ֆրանսիայի կարգախոսը, գրում ենք ազատության, խաղաղության, ժողովուրդների իրավահավասարության բացառիկ պատգամը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Լավ ասացիք:

ՊԻԵՌ-ԼԵԼՈՒՇ – Մեր քվեարկությունը չպետք է թշնամանքի, առավել ևս դատապարտման արտահայտություն համարվի 1998 թվականի Թուրքիայի նկատմամբ:

Այս հանգամանքը պարզ է ու որոշակի: Ես բավական ծանոթ եմ ներկա Հայաստանին, Թուրքիային և սառը պատերազմի ավարտից հետո մեր աշխարհամասի ապագան չեմ կարողանում պատկերացնել առանց Թուրքիայի ու Եվրոպական միության սերտ, բարեկամական կապերի:

Ժամանակակից Թուրքիան, որը մահմեդական, բայց աշխարհիկ երկիր է, որը վաղը, չեմ կասկածում, ազատ ու ժողովրդավարական կղառնա, ըստ իս, արժանի է Եվրոպական մեծ ընտանիքի անդամը դառնալու: Մենք բոլորս ճակատագրական սխալ գործած կլինենք, եթե մեր խաղաղասիրության ու ժողովրդավարության սկզբունքներին հավատարիմ մնալով հանդերձ, Էլնելով ցեղային, կրոնական պատճառաբանություններից, Թուրքիայի առջև փակենք Եվրոպական միության դռները:

Դրա փոխարեն մենք Թուրքիայից, ինչպես անդամակցել ցանկացող մյուս երկրներից, իրավունք ունենք պահանջելու, որ իրագործի որոշ տնտեսական սկզբունքներ, այնպիսի հիմնական քաղաքական պայմաններ, ինչպիսիք են հարգանքը ժողովրդավարության և ազգային փոքրամասնությունների նկատմամբ, խաղաղության պահպանումը, այդ թվում և մանավանդ՝ Հայաստանի հետ, որը, ինչպես հայտնի է, շրջափակման գոհ է:

Հայաստանի հետ խաղաղության հաստատումը անխուսափելիորեն պիտի իրականացնի հիշողության վերարժարժմամբ, որը թուրքերն ու հայերը միասին պիտի կատարեն այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունեցել 1915-ին:

Հնարավոր է մի պահ նույնիսկ պատկերացնել, որ ֆրանսգերմանական հաշտությունը կկայանար, Եվրոպական միությունը որպես այդպիսին գոյություն կունենար, եթե հետպատերազմյան Գերմանիան հիշողության հիմնարար աշխատանք չկատարեր Երկրորդ աշխարհամարտում գործված ոճիրների ընդունման ուղղությամբ:

Ահա այս է մեր քվեարկության իմաստը:

Եվ վերջապես երրորդը՝ ես գիտեմ, մեզ մման մեղադրանքներ կուղղվեն, քվեարկությունը ֆրանսիական պատգամավորների քաղաքական նպատակներ հետապնդող շնորհը, նվերը չէ որևէ՝ տվյալ դեպքում Ֆրանսիայի հայ համայնքին: Սիրելի գործընկերներ, մեր երկրում, իր օրինակելի միաձուլումով, ազգի ու հանրապետության նկատմամբ ցուցաբերած նվիրվածությամբ, այստեղ հասնելուց առաջ ապրած ողբերգական պատմությամբ այս համայնքը վաղուց ի վեր արժանացել է մեր ժողովրդի հարգանքին ու մեծարանքին:

Բայց գոնե, ըստ իս, դա չէ մեր այսօրվա քվեարկության գլխավոր պատճառը: Նույնը հանրապետության նախագահի 1995 թվականի հունիսին Վել դ'Իվում արտասանած ճառին է վերաբերում, որով իր հարգանքն էր մատուցում Ֆրանսիայի հրեական համայնքին՝ Վիշիի վարչակարգի ոճիրների, մեր երկրում իրագործված ցեղասպանության մեփսակցության համար:

Ժողովուրդների հիշողության պահպանման դժվարին աշխատանքը չի կատարվում այս կամ այն համայնքին «հաճույք» պատ

ճառելու կամ բարոյական օրինակելի վարքագիծը բարձր գնահատականների արժանւոցներու միտումով: Պետական այրերը դա արել են, օրենսդիրն այսօր անում է, որովհետև անհնար է կիսա-ճշմարտության կամ կեղծիքի վրա խաղաղություն, ժողովուրդների ապագա կերտել: Բարեբախտաբար քաղաքականությունը երբեմն միանում է բարոյականությանը: Այս առավոտ հենց դա է տեղի ունենում: Սիրելի գործընկերներ, մի ուրիշ ժողովրդի մատյան, որը շատ է տանջվել պատմության ընթացքում, ավետում է «Հետ նայել՝ նշանակում է նախքան ապրելը ապագան տեսնել»:

Սառը պատերազմն ավարտվեց և նրա հետ՝ անցնող դարի գաղափարական երկու համակարգերի թշնամանքը, ընդ որում, երկուսն էլ եվրոպական էին: Աշխարհը բուժում է իր հին վերքերը՝ ցեղային ատելությունն ու կրոնական մոլեռանդությունը, ուժային հավակնոտությունները, հասարակական-տնտեսական հակամարտությունները, և այս ամենը, ցավոք, փոխարինվում է զանգվածային ոչնչացման զենքի ծավալումով...

Ասիայում Բալկաններից մինչև Հնդկական մայրցամաքը, Աֆրիկայից Մերձավոր արևելք մենք անընդհատ պատերազմների, ցեղային զտումների ու նույնիսկ ցեղասպանությունների ենք ականատես լինում: Կոֆի Անանը վերջերս, հունիսի 11-ին, հայտարարում էր. «Ամբողջ մի ժողովրդի բնաջնջումը ցեղային, ազգային պատճառներով մեր օրերի երևույթ է և այնպիսի դաժան իրողություն, որը պատմական պատասխան է ակնկալում»: Սիրելի գործընկերներ, ասվածին վճռականորեն կավելացնելի՛ այդ իրողությունը ակնկալում է նաև Ֆրանսիայի պատասխանը, որը և մենք ձևակերպում ենք այսօր, ուստի, ես ինձ, որպես պատգամավոր, հայարտ եմ զգում, որ նպաստում եմ ճշմարտության ընդունմանը (*Ժափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳ.ԱՀ – Չայնը տրվում է տիկին Մարտին Դավթին:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – 1915 բվականի ապրիլի 24-ի Կոստանդնուպոլսի շուրջկալը հայ ժողովրդի համար՝ տարիներ տևած, մանրամասնորեն նախապատրաստված բնաջնջման, բռնագաղթի, կոտորածների սկիզբը դարձավ, որոնք շարունակվեցին մինչև 1922-ը և մի ամբողջ ազգության երկու երրորդի սպանդի պատճառը դարձան: Սակայն դարի առաջին ցեղասպանությունը աննկատ անցավ

Եվրոպայի հզոր պետությունների համար, քանի որ նրանք ամբողջովին կլանված էին համաշխարհային առաջին հակամարտությամբ: Ուրեմն՝ ի սկզբանե հիշողության՝ տարտղնված ու անդամահատված ժողովրդի, համայն մարդկությանը ցնցած բարբարոսության, բայց նաև այսպանված հիշողության խնդիրը, քանի որ ոմանք ձգտում էին ժխտել բացահայտ իրողությունը, այն «պատմության հայկական վարկած» կոչել, ծառացած էր:

Հայերը, երբ քսանական թվականներին Ֆրանսիա հասան, ամեն ինչ կորցրել էին՝ իրենց ընտանիքը, ունեցվածքը, արմատների մեծ մասը: Նրանցից շատերը վերջնականապես հաստատվեցին մեր երկրում, վերակառուցեցին իրենց կյանքը: Սա հատկապես վերաբերում է երրորդ սերնդին, որը հանդես եկավ այդ ժամանակաշրջանի վրա ծանրացած լռության քողը բարձրացնելու վճռականությամբ:

Այժմ Ֆրանսիայի հայ համայնքը միաձուլման օրինակ է, որն աչքի է ընկնում մեր հասարակության բոլոր բնագավառներում ի հայտ եկած գործուն ակտիվությամբ, միաժամանակ հարուստ ու հիանալի մշակույթը պահպանելու համար ներդրած նկատելի ջանքերով:

Ուստի, կարելի է ցավել, որ Ֆրանսիան, որը նման հյուրընկալություն է ցուցաբերել վերապրողների և նրանց հետնորդների նկատմամբ, ցեղասպանությունն ընդունելը այսքան ուշացրել է: Երկար ժամանակ դա բացատրում էին դիվանագիտական անխուսափելի պարտադրանքներով, չնայած ժամանակին երիտթուրքերի իշխանության սանձազերծած ցեղասպանությունն ընդունելը չի նշանակում մեղադրել թուրք ժողովրդին կամ նրա ներկա կառավարությանը, ճիշտ այնպես, ինչպես նացիզմը դատապարտել չի նշանակում գերմանացիներին փնովել:

Ընդհակառակը, ժողովուրդները և պետությունները մեծապես կշահեն, եթե իրենց հարաբերությունները կառուցեն որոշակիության և անցյալի համարձակ վերլուծման հիմքի վրա: Այդ է վկայում ֆրանս-գերմանական ներկա անկեղծ բարեկամությունը: Բացի դրանից, ինչպես 1984թ. հունվարից ի վեր նշում էր Ֆրանսուա Միտերանը, պատմությունը ուսուցողական բնույթ պիտի կրի: Յեղասպանությունը, ովքեր էլ լինեն հեղինակները, ինչպիսին էլ

եղած լինի իրավիճակը, ժամանակաշրջանը, անընդունելի է: Նրանք, ովքեր ժխտում են նման ոճիրներ, ոչ թե մեղմում, այլ ընդհակառակը՝ բորբոքում են ատելության կրակը: «Պատմության հայկական վարկած» գոյություն չունի: Փաստերն անժխտելի են, ողբերգական:

Հայերի ցեղասպանությունն առաջինն էր մեր դարում, որը, դժբախտաբար, պատմության ընթացքում հրեաներից մինչև գնչուները, Կամբոջայից Հարավսլավիա ու իննսունական թվականների Ռուանդան ձգվող ահավոր շարունակությունը ունեցավ: Ուստի և մենք մեզ թույլ ենք տալիս մտածել, որ եթե 1919-ից ի վեր միջազգային հանրությունը վճռականորեն պահանջեր դահիճների դատապարտումն ու պատժումը, թերևս այսօր ստիպված չլինեինք այդ արհավիրքին անդրադառնալ, կեղծիքի դեմ պայքարել:

Ուրեմն Ֆրանսիան պիտի վերջնականապես վճռականություն ի հայտ բերի, պաշտոնապես ընդունի հայկական ցեղասպանության իրողությունը: Շուտով դա, իհարկե, տեղի կունենան, և մեզնից յուրաքանչյուրն օրինական հպարտություն կզգա, քանի որ քայլը, որ մենք կատարելու ենք այսօր, որքան կարևոր, նույնքան էլ անխուսափելի, ավելին՝ արժանապատվության խնդիր է: Ես չեմ կասկածում՝ Ֆրանսիան, քանի որ ամենից շատ է ջատագովում ազատությունը, իր նման, համարձակ կեցվածքին հետևող բազմաթիվ երկրներ կունենա:

Ցեղասպանության ընդունումը, մի քանի առումներով, բարոյական պարտականություն է՝ նախ մարդկության հանդեպ, որպեսզի, ինչպես արդեն ասացի, նման ոճիրներ այլևս չկրկնվեն, և ապա՝ Ֆրանսիայի հայ համայնքի, որը չտրվելով հիշաչարության կամ համակերպության, համբերատար, հետևողականորեն նշանակալի աշխատանք է կատարում, որպեսզի մարդկության հիշողությունն այն շիրիմը դառնա, որն ինքը հաճախ չի կարողացել շնորհել իր նախնիներին: Այլ կերպ ասած, այսօր ես ներքին խռովքով ուզում եմ հարգանքս մատուցել մի համայնքի՝ կանանց ու տղամարդկանց խիստ օրինակելի, համախմբված միասնականությանը, որը տալավորիչ պայքար է մղում, մաքառում հանուն արժանապատվության:

Մի րեւի գործընկերներ, բանաձևը քվեարկելիս ինքներս մեզ հպարտ զգանք, որ մարդկային իրավունքների պաշտպանության

երկրի քաղաքացիներն ու ընտրյալներն ենք (ծափահարություններ բազմաթիվ բազկաբողոններից):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Ժան-Պիեռ Ֆուշեին:

ԺԱՆ-ՊԻԵՐ. ՖՈՒՇԵ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, երկար տարիներ ի վեր ես ու գործընկերս՝ Անդրե Սանտինին չենք կարողանում անտարբեր մնալ ծագումով հայ ֆրանսիացիների այն կոտորածները ցեղասպանություն համարելու ձգտման նկատմամբ, որոնց 1915 թվականին զոհ գնացին իրենց հարազատները: Այսօր մենք բախտավոր ենք մեզ զգում, որ վերջապես այս պատերի ներսում այդ թեման քննարկելու հնարավորություն ունենք:

Ես պատկանում եմ սրահում նստած բավական մեծաքանակ անձանց թվին, ովքեր ծանոթ են հայ ժողովրդի կրած տառապանքներին: Մեզնից շատերն են ունկնդիր եղել ծերունիների, ովքեր պատմել են իրենց ապրած ամենաճակատագրական դրվագները՝ հալածված, կոտորակված, արտոյի ճամփաները քշված ամբողջական գերդաստանների մասին, որոնց յուրաքանչյուր անդամ վերապրել է այնպես, ինչպես կարողացել է՝ փրկելու համար իր սեփական կյանքն ու իր ժողովրդին: Բայց եթե մենք բոլորս պատկերացնում ենք նման իրավիճակի ծանրությունը, պիտի գիտակցենք նաև, որ հայերը, որոնք տառապել են իրենց մարմիններով, այժմ մտքով են տառապում, որովհետև արդարության չեն հասնում: Հիրավի շատ քչերն են բարձրաձայն պնդում, որ այն, ինչի զոհ են նրանք դարձել, ցեղասպանություն է:

Այսօր հնարավորություն տանք, ուրեմն, հայերին, որպեսզի վերագտնեն հոգեկան անդորրը, քանի որ նրանք Ֆրանսիայից, այն երկրից, որը բնակության համար ընտրել են իրենք կամ իրենց հայրերը, ակնկալում են, որ ընդունի Օսմանյան կայսրության օրոք տեղի ունեցած ցեղասպանությունը և ոչ թե, պարոն պետքարտուղար, ուզում եմ ծանոթանալ Ազգային ժողովի ներքին գործունեությանը:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ, ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊԻԵՐ. ՖՈՒՇԵ – Այժմ, երբ Եվրոպայում խաղաղություն է տիրում, և եվրոպական կազմակերպությունը իրավացիորեն ձգտում է տևական խաղաղության ասպիտովման, ցեղասպանության

բնորոշումը, որը նշանակում է որոշակի ժողովրդի հետևողականորեն կազմակերպված բնաջնջում, մեր գիտակցությանը գրեթե անհասանելի է: Մենք ավելի հեշտությամբ հասկում ենք անցյալն անտեսելուն, որովհետև հույս ենք փայփայում, որ նման երևույթ այլևս տեղի չի ունենա ո՛չ հայերի, ո՛չ էլ որևէ այլ ժողովրդի կյանքում:

Ծագումով հայ ֆրանսիացիները ամեն օր հավաստում են, որ հաջողությամբ միաձուլվում են ֆրանսիական իրականությանը: Նման միաձուլումը իրավացիորեն օրինակելի կարելի է համարել: Բայց դա նշանակում է նաև, որ մենք պետք է հասկանանք, ընդունենք, իմանանք նրանց պատմությունը: Հենց այդ պիտի անենք այսօր՝ առանց ամբոխավարության ընդունելով փաստերը, միաժամանակ այն, որ աշխարհը, կառավարությունները, մտայնությունները փոխվում են, և այսօրվա մարդիկ երեկվանները չեն:

1915 թվականի ողբերգական իրադարձություններից ցեղասպանության երևույթը առավել քան անհրաժեշտ է դատապարտել, և, ըստ իս, դատապարտումը պետք է կատարվի անկախ պատմական իրավիճակից, զոհից, այլ տարբեր պատճառաբանություններից:

Ահա թե ինչու Կլամարի, որի քաղաքապետն էմ ես, քաղաքային խորհուրդը հայերի ցեղասպանությունն ընդունելու ցանկություն ուղեգրեց: Եվ եթե որևէ քաղաքային խորհուրդ է նման ձգտում արտահայտում, կարելի՞ է պատկերացնել, որ մի ամբողջ երկիր, տվյալ դեպքում Ֆրանսիան՝ մարդկային իրավունքների և ազատության հայրենիքը, անտարբեր մնա:

Հենց այդ պատճառով ես մեկն եմ նրանցից, ովքեր ամեն ապրիլի 24-ի հայ համայնքի հետ ոգեկոչում են ողբերգական իրադարձությունները: Այդ պատճառով նաև 1996 թվականի ապրիլին, իմ բազմաթիվ գործընկերների նման, ստորագրել եմ ցեղասպանության ընդունման ֆրանսիական կոմիտեի կոչը:

Այս ընդունումը արտասահմանում դանդաղ է առաջ ընթանում: Միայն մի քանի կառավարություններ կան խորհրդարաններ են քննարկվող հարցի նկատմամբ հստակ դիրքորոշում դրսևորել, ընդ որում, տարբեր ձևերով, սովորական հայտարարությունից սկսած, մինչև բանաձևի ընդունումը: Ռուտի, Ֆրանսիայի համար պատմվի խնդիր է ոչ միայն պատկանել այդ ոճիսը պաշտո-

նապես ընդունած փոքրաքանակ երկրների թվին, այլև ազգային օրենսգրքում արձանագրել ընդունումը:

ՄՈՐԻՍ ԱԳԵՎԱ-ՊԵՌՖ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊԻԵՐ ՖՈՒՇԵ – Հայերի երկար սպասումը զուր չի անցնի, և բոլոր ցեղասպանությունները, անհանդուրժողականությունները, մի ժողովրդի՝ մի ուրիշի բռնաճնշելու, բնաջնջելու փորձ կատարելու իրողությունները նկատի ունենալով է, որ ես «Ֆրանսիական ժողովրդավարական միություն» խմբակցության հետ քվեարկելու եմ բանաձևի օգտին (*ժախսհարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն պետքարտուղարին:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Դուք նախաձեռնություն եք հանդես բերել, բանալիճել, վերլուծել, ձեր պահանջները ձևակերպել և այժմ քվեարկելու եք: Սա է ժողովրդավարությունը: Բնականաբար, կառավարությունը նույնպես հավատարիմ կմնա ընդունված ընթացակարգին՝ սենատի նախագահական նիստում կքննարկվեն բանաձևը բարձրագույն ժողովի աշխատանքային օրակարգ մտցնելու պայմանները: Այն, ինչ սկսվեց այս առավոտ, պետք է շարունակվի:

ՌԸՆԵ ՌՈՒՔԵ (խոսնակ) – Շատ ճիշտ է:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Սա նույնպես ժողովրդավարություն է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Իրավացի եք:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Ժողովրդի ինքնիշխան լինելու իրավունքն իրականություն է մեր երկրում: Հիշողության պարտքը անհրաժեշտություն է: Մենք դա գիտակցում ենք Հաղթականարի ներքո տեղի ունեցած ոգեկոչման տարբեր արարողությունների ժամանակ կամ երբ մեր համայնքների հետ որոշակի իրադարձությունների մասնակցելու անհատական նախաձեռնություն ենք հանդես բերում:

Ձեր նպատակը պատմական ճշմարտությունը խաղաղության գործոն դարձնելն է մի տարածաշրջանում, որտեղ լարվածությունը բարձր է: Կառավարության նպատակն էլ է այնտեղ խաղաղություն հաստատելը: Սակայն մենք կարծում ենք, որ օրենքի քվեարկությունը բավական չի լինի դրան հասնելու համար: Ես ներկայացրի

իրավիճակը, ներդրված ջանքերը, հավասարակշռության, խաղաղության համար ջանքեր ներդնելու կամքի անհրաժեշտությունը: Մենք, բոլորս միասին, նախ պիտի ձգտենք, որ թուրքական կառավարությունը, երկրի բոլոր կոնսակցությունները, ազգաբնակչությունը վերահարմարվեն իրենց պատմությանը: Միայն այդ ձևով հնարավոր կլինի հաղթահարել առկա դժվարությունները:

Հանրապետության նախագահին այդպես վարվեց 1995 թվականի հուլիսին՝ Վելդիվի շուրջկալի կապակցությամբ: Ձեր նախաձեռնությամբ, ձեր ջանքերով ամբողջ երկիրը հասավ դրան: Երկար ժամանակ մենք խոսում էինք Հյուսիսային Աֆրիկայի դեպքերի մասին, ձեր շնորհիվ, այսինքն՝ նաև մեր շնորհիվ այսօր այն կոչում ենք ավփրյան պատերազմ (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Այո՛, իրավացի եք, ձեր շնորհիվ էլ:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Հանուն հիշողության տարվող աշխատանքն ավելի աննկուն է դարձնում անհատին:

Ուստի և բոլորս միասին պետք է հետևողական աշխատանք ծավալենք թուրքական կառավարության, քաղաքական կոնսակցությունների, ազգաբնակչության հետ: Այո, ժողովուրդը պիտի վարժվի իր պատմությանը: Բայց դրա համար միայն խորհուրդներ տալը բավական չէ: Փաստերը մատնացույց անելով, որոնք թերևս նպաստեն անցյալի իրավիճակների վերականգնմանը, մենք մեր նպատակին հասնել չենք կարող:

Այս առավոտվա քննարկումը ձեր նախաձեռնության արդյունքն է, որին պիտի քվեարկությունը հաջորդի: Բայց ամեն ինչ դրանով չի ավարտվում: Ինքներդ էլ եք երևի ընդունում, որ բանաձևի սոսկ քվեարկությամբ հարաբերություններ չեն կարգավորվում: Այլ պարտականություններ են դրան հաջորդելու: Ֆրանսիայի ձայնը պիտի շարունակվի լսելի դառնալ ամբողջ տարածաշրջանում: Մեր երկրի դերը մեծ տերությունների համակարգում, մասնավորապես Մինսկի խմբի հետ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության ծիրում որոշակի է, այդ թվում նաև ստանձնած երկկողմ նախաձեռնությունների առումով:

Ուրեմն Ֆրանսիայի կամքն անբեկանելի է: Համոզված եղեք,

որ հանուն խաղաղության և ապահովության ձեռնարկած ջանքերը համընկնում են Ֆրանսիայի կառավարության նպատակներին, որոնք հիմնված են արդարության սկզբունքների, հանրապետության գլխավոր դրույթների պահպանման վրա:

Այս ճանապարհով միայն, հիրավի, Ֆրանսիան ավելի հզոր կդառնա (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳ.ԱՀ – Ընդհանուր քննարկումը հայտարարում է մավարտված:

Այժմ, ելնելով մեր կանոնակարգի 91-րդ հոդվածի 9-րդ կետի դրույթներից, հրապարակում են հանձնաժողովի զեկուցագրի օրենքի նախագծի միակ հոդվածը:

ՆԱԽԱԳ.ԱՀ – Ահա միակ հոդվածը՝ «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը:

Բազմաթիվ ելույթ ունեցողներ ստորագրել են այս հոդվածի տակ:

Խոսքը տրվում է Ժան-Բեռնար Ռեմոնին:

ԺԱՆ-ԲԵՌՆԱՐ ՌԵՄՈՆ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը թուրքիայում մնում է մարդկային պատմության մեծագույն ողբերգություններից մեկը: Բնական է, մեր դարավերջին հայ ժողովուրդն ամբողջ հոգով ձգտում է, որպեսզի բազմաթիվ սերունդների անսահման տառապանքն ի վերջո Ֆրանսիան ընդունի: Թերևս ավելորդ չէ հիշեցնել, որ հայ ժողովուրդը, չնայած հոգեկան վեհությանը, հիմնավորք քաղաքակրթությանը, դարավոր պատմությանը, հաճախ է զոհ գնացել կամ հալածանքների, կամ ճակատագրական սխալների:

Չմոռանանք, որ Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Ֆրանսիայում բնակվող բազմաթիվ հայեր, հավատալով քաղաքական տեղեկատվությանը, մեկնեցին Խորհրդային Հայաստան: Պատահականության քերտմով, մասնավորապես, Մոսկվայում ինձ հաջողվել է օգնել նրանց մի մասին, նրանց, ովքեր ցանկանում էին վերադառնալ իրենց երկրորդ հայրենիքը, այսինքն՝ Ֆրանսիա:

Բայց ինչպիսի տառապանքներ էլ, որ հայերը կրած լինեն

Կովկասում, 1915 թվականի ցեղասպանությունը չեն կարող մոռանալ: Նրանցից շատ-շատերը ամեն տարի ապրիլի 24-ին հայրենակիցներով կամ քարեկամներով հավաքվում են, որպեսզի ոգեկոչեն ողբերգական օրերը, եթե ոչ տարիները: Ահա թե ինչու ամբողջ հոգով ես իմ ձայնն եմ տալիս օրենքի նախագծի օգտին, որը բոլոր խմբավորումների համառ ջանքերի արդյունքն է:

Ինքնին հասկանալի է, որ ժամանակակից Թուրքիան ոչ մի պատասխանատվություն չի կրում ութսուն տարի առաջ գործադրված բռնությունների համար: Ընդհակառակը, ես նույնիսկ համոզված եմ, որ եթե երբևէ համաձայնվի ընդունել իր անցյալի ահավոր ոճիրը, ինչպես, օրինակ, վարվում են ամենաբարձրաստիճան պաշտոնյաները՝ մի ժամանակաշրջանում, երբ գոջումը դառնում է պատմության վերագնահատման ձև, բազմաթիվ դռներ կբացվեն այնպիսի մեծ երկրի առջև, ինչպիսին կլինի 2000 թվականին Թուրքիան (*ծափահարություններ քազմաթիվ քազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ֆրանսուա Ռոշեր-լուանին:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Ես ելույթի համար արձանագրվեցի, որպեսզի անդրադառնամ օրենքի նախագծի ձևակերպման թերություններին: Ինքս, իմ գործընկերների ու քարեկամների՝ Ռոլան Բլյումի, Ժան-Պիեռ Ֆուշեի, Մորիս Լերուայի, Անդրե Սանտինիի և Գի Թեյսիեի հետ, արտաքին գործերի հանձնաժողովին եմ ներկայացրել վեց քարեփոխություն, որոնք, գոյություն ունեցող կարգին հակառակ, համատեղ քննարկվել ու մերժվել են, քանի որ զեկուցողը՝ Ռընե Ռուբեն, որոշակիորեն նշեց՝ չի ցանկանում փոփոխություն մտցնել առաջարկված բանաձևում:

Բարեփոխություններից երեքը առնչվում են Ռոլան Բլյումի օրենքի նախագծի հոդվածներին: Առաջինը որոշակիացնում է հայկական ցեղասպանության հեղինակներին, ժամանակաշրջանն ու ընդգրկված տարածքները: Երկրորդը՝ պատմական իրողությունը հարգելու առումով, վերաբերում է ապրիլի 24-ը ցեղասպանության պաշտոնական ոգեկոչման օր համարելուն, երրորդը՝ կառավարությանն առաջարկվում է միջազգային գործունեություն ծավալել ի նպաստ ցեղասպանության ընդունման ու մարդկության դեմ գործված այդ ոճրի հատուցման:

Մյուս երկու փոփոխությունները վերաբերում են օրենքի հենց այն առաջարկին, որը ներկայացրել ենք Պատրիկ Դ-Լեջյանն ու ես և միտում ունենք ծավալել Գեյտոյի օրենքի ընդգրկման շրջանակները, որպեսզի առնչվի բոլոր ցեղասպանություններին, մարդկության դեմ գործված ոճիրներին (ուստի և հայերի ցեղասպանությունը), լրացնի այդ ցեղասպանությունների ու ոճիրների վիճարկման դեմ ուղղված պաշտպանականի դրույթները՝ այլ ընկերակցությունների և շնորհիվով քաղաքացիական հայցվորի իրավասություն:

Վեցերորդ բարեփոխությունը Թուրքիայի Հանրապետության Եվրոպական միություն ընդունելը պայմանավորում է հայկական ցեղասպանության փաստի ընդունմամբ:

Ելնելով Խորհրդարանի արարողակարգից, մենք կարող էինք դարձյալ ներկայացնել այդ նույն բարեփոխումները, բայց առաջնորդվելով փոխադարձ համաձայնողականությամբ, իմ գործընկերներն ու ես որոշեցինք ձեր ուշադրությունը հրավիրել միայն մեկի՝ նորի վրա, որը, մեզ թվում է, թե ընդհանուր հավանության պիտի արժանանա, որովհետև սահմանափակում է ընդունման «պաշտոնական» բնույթը և ժամանակը որոշակիացնելով (*Ժափահարություններ «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության»* և «Համախմբում հանուն Հանրապետության» իմքակցությունների բազմաթիվ բազկաթռոններից):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Զրիստիան Էստրոգիին:

ԶՐԻՍՏԻԱՆ ԷՍՏՐՈՉԻ – Ճիշտ է, հայերը դեռևս XVI դարից էին գտնվում աշխարհագրական վտանգավոր շրջանում, սակայն XVIII դարում Բալկանների տարանջատումը, այնուհետև XIX դարում Օսմանյան կայսրության անկումը ավելի մեծացրին նրանց անապահովությունը:

Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում հայը երկրորդ կարգի քաղաքացի էր համարվում, և այս իրավիճակը, ինչպես ամենուր, ազգայնականության անակնկալի հայտ գալու համար բարենպաստ հող էր ստեղծել: Օսմանյան լուծն անտանելի էր դառնում: Սակայն, եթե առաջին ջարդերը տեղի էին ունենում 1894 և 1896 թվականներին, վճռական դերը 1914-ից խաղում է երիտթուրքերի բռնատիրական կառավարությունը: Գործի է դրվում այն ծրագիրը, որը գաղթի, ջարդերի, բնաջնջման է հասցնում մի ամբողջ ժողովրդի:

Ահա փաստերը:

Ի՞նչն է այսօր մեզ այնքան զգայուն դարձնում, խորհրդաբանին դրդում մման որոշման հանգել: Մի՞թե ֆրանսիացի ժողովրդյի ներկայացուցիչներին սոսկ պատմության ուսումնասիրությունն է ստիպում ընդունել, որ 1915 թվականին ցեղային, կրոնական, մշակութային տարբերությունների պատճառով տեղի է ունեցել հայերի ցեղասպանությունը:

Պատմական ճշմարտությունը, ինչ խոսք, ի վերջո ի հայտ է գալիս, սակայն տվյալ դեպքում առկա է մի ժողովուրդ, որն իր գոյության ամենահուսահատական պահին Ֆրանսիան իր ասպնջական երկիրը, ապաստանն էր դարձրել, որտեղ պիտի փորձեր բուժել վերքերը, բայց երբեք չմոռանար:

Վերապրողների առաջին սերունդներն իրենց հոգիներում, որքան էլ ահավոր լինեք, խորը, չափազանց խորը փորագրանկարել էին յուրայինների բնաջնջումը, միաժամանակ այդ ամենը փոխանցել էին հետնորդներին, ակնկալելով, որ իրենց նոր հայրենիքը՝ Ֆրանսիան, թերևս միակ կարող ուժը, հանդես գա Թուրքիայի և Հայաստանի միջև հաշտություն կնքելու, երկարատև, փոխշահավետ խաղաղություն կայացնելու համաձայնությամբ: Մի բան, որը, մենք միասին փորձում ենք անել այսօր:

Ես պատահականորեն չասացի «իրենց հայրենիքը՝ Ֆրանսիան», որովհետև բոլորս էլ հետզհետե ավելի ու ավելի լավ ենք պատկերացնում այն խորհրդանշանը, որն ստեղծում է հիշողության սուրբ պարտականությունը, քանի որ հայերը մեր հողը ոտք դրած առաջին սերնդից եղել են համաձուլման տիպար և չափազանց նպաստել են մեր հայրենիքի մտավոր ներուժի զարգացմանը, առաջընթացին ու բարեփոխումներին: Մենք մեր քաղաքներում, մարզերում, նահանգներում դրա բազմաթիվ օրինակներն ունենք:

Հայերն ամենուր համեստորեն, պարկեշտորեն, անաղմուկ, աննկատ, անպահանջկոտ են հաստատվել: Նրանք մախ ստիպված են եղել ապացուցել, որ ի վիճակի են օջախ ստեղծել, հանրապետության կրթական ոգով արժանի դաստիարակություն տալ գավակներին, ձեռնարկություններ, եկեղեցիներ, մշակութային կենտրոններ, ընկերակցություններ հիմնել: Համայնքը վերջին տասնամյակների ընթացքում Ֆրանսիայի առաջընթացին իր լուրջ ներդրումն է բերել:

Այժմ արդեն հայ ժողովրդի պատմությունը միախառնվում է մերին: Ահա թե ինչու առաջադրվող նախագծին ի նպաստ քվեարկելիս մենք ֆրանսիացի լինելու համար ավելի հպարտ պիտի զգանք մեզ: Միաժամանակ իմ շրջանի՝ Պրովանս-Ալպեր-Երկնագույն լողափի համայնքը նկատի ունենալով է, որ հաճախակի, հյուրընկալելիս, փոխադարձաբար հայ լինելու զգացողությունն է հաղորդվում ինձ, որ ես այսօր չափազանց հպարտ եմ ինձ զգում, այդ ժողովրդի ցեղասպանության ընդունմանն ի նպաստ քվեարկելու համար (*ժափահարություններ «Համախմբում հանուն Հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Անդրե Սանտինիին:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի բարեկամներ, ինձ բախտ վիճակվեց այս պատմական պահին ներկա գտնվել, որովհետև սրահում որոշակի թիվ են կազմում հին ճամփընկերները, չեմ համարձակվում նախկին մարտիկներ կոչել, պարոն պետքարտուղար (*ծիծաղ*), որոնք տարիներ ի վեր պայքարում են հանուն այն բանի, որ Ֆրանսիան ցեղասպանությունն ընդունի: Ես նկատի ունեմ իմ բարեկամներ Ռոչեբլուանին, Բյումին, Ֆուշեին, Լեյուշին, Կազնավին, Էստրոգիին, Դյուպոն-Էնյանին, բայց նաև Ռուբեին, Ադելահ-Պետֆին և Հերմիեին:

Չեմ ուզում այս ամբիոնից քաղաքականությամբ զբաղվել, թեկուզ այն պարզ պատճառով, որ երկար ժամանակ ի վեր առաջին անգամ ես հույս ունեմ, որ բանաձևն ընդունվելու է միաձայն, սիրելի գործընկերներ, մեր հայ բարեկամներին, որոնց ճանաչում ենք, հավանում ու սիրում, նոր տվյալսանքների չենք մատնելու:

Պարոն պետքարտուղար, ես զարմացա, երբ դուք հայտարարեցիք, որ կառավարությունը խորհրդարանական այս նախաձեռնության նկատմամբ «կորոշակիացնի իր վերաբերմունքը»: Դա ինձ մտահոգում է: Ասում եմ, որ Պատրիկ Դևեջյանն այնքան էլ հարգալից չի արտահայտվել ձեր նկատմամբ: Ես ինքս էլ նախարար եմ եղել, այն էլ ճիշտ մի աստիճանով ձեզնից բարձր: Ինչպես տեսնում եք, վերջիններից չէի, ամենամեծն էի փոքրերի մեջ, որից հետո տրեզ ստացա. որը և ձեզ եմ ցանկանում: Այլ կերպ ասած, երբ ինձ որևէ տեղ էին ուղարկում, իմ աստիճանակարգը որոշակի արժեք

ներկայացնում էր: Ակնհայտ է, որ կառավարությունը կարող էր ավելի լուրջ վերաբերմունք դրսևորել այն քայլի նկատմամբ, որ նախաձեռնել է ընկերվարականների խմբակցությունը, սաշտպանել մեր ժողովը:

Ժամանակն է արդեն, որ վերջ տանք ձևականություններին, պարոն պետքարտուղար: Թող մեզ հեքիաթներ չպատմեն, թե բանաձևն օրակարգ մտցնելիս սենատի նախագահությունում կարող են խնդիրներ ծագել: Մենք, չնայած ընդդիմություն ենք, ունակ ենք ձեզ օգնել, բանի որ վերին սլալատի հետ այնպիսի հարաբերություններ ունենք, որոնք երբեմն ձեզ մույնիսկ գրգռում են: Մենք ի վիճակի ենք Սենատում, որի հեռատեսությունը երբեմն դրվատում ենք, միջամտելու հանձնառություն ստանձնել, որպեսզի մեր «վճիռը» հնարավորին չափ արագ տեղ հասնի:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Շատ ճիշտ է:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ – Պարոն պետքարտուղար, մնացածը կառավարության գործն է: Մենք չնայած զանազան խմբակցությունների անդամներ ենք, բայց անկեղծորեն զինվորագրվել ենք Հայոց դատի ճանաչման գործին: Այդ դատը մեզ ներկայացել է տարբեր տեսանկյուններով, մեր խմբակցությունների միջև փոխադարձաբար, որոշ անհասկացողություն է ստեղծել՝ արդի քաղաքականության, գերագույն շահերի, Եվրոպայի ընդհանուր և այլ այնպիսի պատճառաբանություններով, որոնք մինչև այժմ «արգելակել» են մեր ջանքերը:

Այս պահից արդեն մենք ուզում ենք, որ մեզ չմիամտացնենք, չմիամտացնենք հանրությանն այն հայտարարությամբ, որ մենք ենք նախաձեռնել խորհրդարանական այս բննարկումը, որ կառավարությունը հարգում է իշխանությունների ինքնուրույնությունն ու խորհրդարանի անկախությունը: Ես վստահ եմ, որ բարիկամեցողության պահը հասել է: Մենք այնքան հիասթափություններ ենք ապրել, այնպիսի խոստումներ լսել, որոնք հիմարներին միայն կարող էին ուրախացնել: Այժմ արդեն մի շատ կարևոր նախաձեռնություն պիտի իրագործվի: Խորհրդարանը, որը քվեարկելու է առաջարկը, կառավարությունից պահանջում է այդ պահից իր թարգմանը հանդիսանալ: Սենատը, ամենայն հավանականությամբ, շատ արագ կողմ կքվեարկի: Այս անգամ գոնե մենք չենք հիասթափեցնի

Հայ դատի բարեկամներին: Դա արդարամտության տալիսկան խնդիր է (ժախահարություններ բազմաթիվ բազկաթոռներից):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ռիչարդ Կազնավին:

ՌԻՇԱՐԴ ԿԱԶՆԱՎ – Անդրե Սանտինիից առաջ, որը կավարտի հողվածի քննարկումը, թույլ տվեք, սիրելի գործընկերներ, բոլորիդ շնորհակալություն հայտնել, որ այս առավոտ, Ֆրանսիայի համար մի գեղեցիկ օր, երանության զգացողությունը վայելելու հնարավորությունը տվեցիք, որն այնքան հազվադեպ է մեր խորհրդարանական առօրյայում, որի շնորհիվ միասնականության ոգին համակեց բոլորիս և բացահայտեց այն լավագույնը, որ կար մեր մեջ: Մենք երկար կմտապահենք այն ամենը, ինչ այս առավոտ ապրել ենք միասին:

Օրեր կան, ուր մենք կարողանում ենք հիշել, որ Ֆրանսիան անկրկնելի է, երբ հավատարիմ է իր արժեքներին ու պատմությանը՝ արժեքներ ու պատմություն, որոնք ցեղասպանության վերապրողներին մեր երկիրն առաջնորդեցին, որպեսզի մեզ մոտ ազատություն, հյուրընկալություն և հույս գտնեն:

Այս ընդունման՝ հայերի ցեղասպանության ընդունման համար մենք պարտական ենք նաև ինքներս մեզ՝ հավատարմությանը, մեր ազգի մեծությանը, հայրենիքին՝ Ֆրանսիայի, որն առանձնահատուկ տեղ է գրավում ժողովուրդների համանվագում, որի ձայնն աշխարհում ընդմիջտ պահպանում է յուրօրինակ արձագանքը:

«Բարեկամություն» խմբակցության անդամները, որոնք զանգվածաբար ներկա են այսօր, իրենք իրենց խոստացել են հասնել ճշմարտության պարտադրանքի հաղթանակին, առանց որի կայուն ոչինչ չի կարելի կառուցել, առանց որի հայելու մեր արտագոյումը դառնության տխուր արտահայտություն կունենար:

Ես շնորհակալություն եմ հայտնում ընկերվարականների և «Բարեկամություն» խմբակցության գործընկերներին, ովքեր այս հողվածը օրակարգ մտցնելու նախաձեռնությունը հանդես բերեցին: Նրանք գիտեն, իհարկե, որ կարողացան հասնել դրան, որովհետև տարբեր բազկաթոռներից համանման օրենքների առաջարկները նայաստեցին, որ իրենց նպատակին հասնեն, իույս տան մերժումից, որին կբախվեին, թերևս, եթե Ժան-Լուի Դեբրեն, օրինակ, այս առավոտ մեր կողքին չլիներ:

Բաց չթողնենք պահը, կարողանանք միասին այն ապրել, հավանություն տանք մեր քվեարկելիք նախագծի բոլոր հետևանքներին, նախագիծ, որի միակ հողվածը այսուհետև հանրապետության օրենքը կդառնա, սլարտադիր կլինի բոլորի համար, մի կողմից կհակադրվի անհանդուրժելի, գոհերի տառապանքը վիրավորող ողբերգական պատմության վերափոխությանը, մյուս կողմից պաշտոնական բնույթ կհաղորդի ոգեկոչմանը՝ միջազգային հարաբերությունների սերտացմամբ հանդերձ:

Եթե օրենքի սովորական նախադասությունը այդպիսի տարողունակություն չունենար, մինչև վերջերս նման ճնշումների կենթարկվե՞ր:

Ճշմարտության նման պարտադրանքը Հայաստանի և Թուրքիայի հաշտության ճանապարհին խոչընդոտ չի կարող դառնալ: Հայաստանը մի սլահ ուներ այդ մտավախությունը, բայց այսօր արդեն ի դերև է ելել: Մենք դա նույնպես պիտի նկատի ունենանք:

Ճշմարտության պարտադրանքը, այդ մասին արդեն ասվեց, առավել ևս ուղղված չէ ներկա Թուրքիայի դեմ, որը պետք է ընդունի Եվրոպայի բուն արժեքները, մանավանդ որ մեր շարքերն է հավակնում անցնել:

Հիրավի, այսօր էական, նշանակալի քայլ ենք կատարում: Մենք բոլորս միասին կարող ենք հսկարտանալ դրանով, իսկ ամենից ավելի հսկարտ կլինեն հայկական համայնքի մեր բարեկամների զավակները, որոնց ճշմարտության ծարավը թերևս ամենախորն է: Այսօրվանից նրանք առավել կհսկարտանան իրենց երկրով՝ Ֆրանսիայով:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն պետքարտուղարին:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Պարոն նախագահ, ես այս ամբիոնից հայտարարեցի, որ կառավարությունն ընթացք կտա Ազգային Ժողովի քվեարկած բանաձևին: Այսինքն՝ նախաձեռնությունն իր շարունակությունը կգտնի Մենատում: Ես խոսել եմ Մենատի նախագահների խորհրդակցության մասին, քանի որ այդ ատյանն է կազմում օրակարգը: Ամեն պարագայի, կառավարության դիրքորոշումն ավելի քան հստակ է: Բանաձևի քննությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի: Վստահ եղեք և համոզվեք, որ մեր միջև տիպա տարակարծություն-

ներ չեն կարող լինել (ծափահարություններ ընկերվարականների խմբակցության բազմաթիվ, «Համախմբում հանուն Հանրապետության» խմբակցության մի քանի բազկաթռոններից):

ՆԱԽԱԳԱՀ – Իմ տրամադրության տակ են երկու՝ թիվ 1 և թիվ 2 լրացումները, որոնք քանի որ վավերացված են, կարող են ընդհանուր բննարկման դրվել:

Թիվ 1 լրացումը, որը ներկայացրել են տիկին Շամբուն, պարոնայք Հերմիեն, Լեֆորը, Մեյը և համայնավարական խմբակցության անդամները, ձևակերպված է այսպես.

«Միակ հողվածը խմբագրել հետևյալ ձևով. «Ֆրանսիական Հանրապետությունը պաշտոնապես ընդունում և դատապարտում է 1915-ից 1922-ը Օսմանյան կայսրության օրոք ժամանակի թուրքական կառավարության՝ հայ ժողովրդի դեմ գործադրած ցեղասպանությունը»:

Թիվ 8 վավերացված լրացումը, որը ներկայացրել են պարոնայք Բլյունն ու Ռոշերլուան, ձևակերպված է այսպես.

«Միակ հողվածը խմբագրել հետևյալ կերպ. «Ֆրանսիան պաշտոնապես ընդունում է 1915-ից 1922-ը հայերի դեմ գործադրված ցեղասպանությունը»:

Թիվ 1 լրացումը հիմնավորելու համար խոսքը տրվում է պարոն Ռոժե Մեյին:

Ռ-ՌՇԵ ՄԵՅ – Մեր առաջարկած խմբագրումը բխում է մախորդ ելույթների տրամաբանությունից:

Ֆրանսիայի՝ ցեղասպանության պաշտոնական ընդունումը, որը մի մեծ քայլ է դեպի առաջ, պետք է ուղեկցվի տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվության ամրագրմամբ, ինչպես նացիստական Գերմանիան է պատասխանատու 1939-1945 թվականների ցեղասպանության համար:

Շարունակենք մինչև վերջ: Թուրք ժողովրդի համար օգտակար կլինի, եթե ժողովրդավարության առաջընթացի ճանապարհին դասեր քաղի իր պատմությունից: Հանուն մարդու իրավունքների նա ամենից ավելի շահագրգռված պիտի լինի ընդունելու տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվությունը ցեղասպանության հանցանքում, այնպես, ինչպես ամեն ժողովուրդ պիտի կարողանա եզրահանգումներ կատարել իր պատմու-

քյան ճակատագրական իրադարձություններից:

Նա, ով բացահայտում է տվյալ ժամանակվա գերմանական կառավարության մագիստական ոճիրները, գերմանատյաց չէ, այնպես, ինչպես թրքատյաց չէ նա, ով մատնանշում է մեր դարի առաջին ցեղասպանության սլատասխանատուներին: Ի՞նչ էք կարծում, եթե կառավարությունը և թուրք ժողովուրդը յուրացնեին այս դասերը, թուրքական ծագում ունեցող մերօրյա ջարդերը տեղի կունենային, կամ թուրքական բանակը կբռնազավթե՞ր Կիպրոսը:

Ռոստոներեք տարի անց ժամանակն է, իսկական ժամանակն է, որ հանուն հայ ժողովրդի իրավունքների, հանուն նրա հիշողության հայտնի դառնան և՛ ցեղասպանությունը, և՛ թուրքական կառավարության սլատասխանատվությունը:

ՆԱԽԱԳԱՀ – Ի՞նչ կարծիք ունի հանձնաժողովը:

ՌԸՆԵ ՌՈՒԶԵ (խոսմանկ) – Արտաքին գործերի հանձնաժողովը չի ցանկացել որևէ փոփոխություն ընդունել, բանի որ օրենքի առաջարկությունը ստորագրողները, ինչպես նշեցի իմ Վեկուցումը ներկայացնելիս, ձգտել են որ, բանաձևն անխաթար մնա:

Ահա այդ պատճառով է, որ հանձնաժողովը, նախագահի՝ Ժակ Լանգի պնդմամբ, որին ցանկանում են ուղջունել բանաձևն անառարկելիորեն ընդունելու համար, վճռել է մերժել բոլոր փոփոխությունները:

Անշուշտ, ըստ էության ես համաձայն եմ լրացումների հետ, բայց բանի որ օրենքի նախագծի հեղինակները, նկատի ունենալով խնդրի բարդությունը, ձգտել են հստակ, բոլորի համար էլ դյուրըմբռնելի բանաձև ստեղծել, որը բավական երկար ժամանակ քննարկման նյութ է դարձել, դեմ եմ արտահայտվում վերախմբագրումներին:

ՆԱԽԱԳԱՀ – Թիվ 8, վավերացված լրացումը հիմնավորելու համար խոսքը տրվում է պարոն Ռոլան Բլյումին:

ՌՈՒԼԱՆ ԲԼՅՈՒՄ – Պարոն Ռոշեբլուան և ես գտանք, որ «պաշտոնապես» արտահայտությունը «իրապարակայնորեն»-ից ավելի համապատասխան է, իսկ տարբերվող պատմական իրականությունը անհամեմատ ճշգրիտ են ներկայացնում, բանի որ ցեղասպանությունը, որն սկսվել է 1915-ից, դժբախտաբար տևել է մինչև 1922-ը:

ՆԱԽԱԳԱՀ – Ի՞նչ կարծիքի է կառավարությունը:

ՆԱԽԿԻՆ ՍԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Քիչ առաջ ես ներկայացրի կառավարության դիրքորոշումը, որը գտնում է, որ այդ իրադարձության որակումը ֆրանսիական օրենսդրության խնդիր չէ, որքան էլ որ մենք համամիտ լինենք և ընդունենք պատմական փաստերի անառարկելիությունը: Անհրաժեշտ է հետևողական աշխատանք կատարել, որպեսզի թուրք ժողովուրդը վարժվի իր իսկ պատմությանը, ընդունի այնպիսին, ինչպիսին այն կա: Ֆրանսիայի խնդիրն է տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում և ԵԱՀԽ-ի միջոցով, որոնց անդամակցում ենք, մասնակցել հիշատակված գործընթացին, նպաստելով ժողովրդավարության զարգացմանն ամենուր, որտեղ որ անհրաժեշտ է:

Ուտի, պարոն նախագահ, կարծում եմ, դուք հասկանում եք, թե ինչու ես չեմ մասնակցելու լրացումների քննարկմանը: Ուղղակի չեմ ցանկանում այդ կապակցությամբ ձևակերպումների մանրամասների մեջ մտնել: Բայց քանի որ ի պաշտոնե ինձ հարց եք ուղղում, պատասխանում եմ՝ բացասական կարծիքի եմ:

Կառավարության դիրքը որոշակի է: Անձամբ ես գտնում եմ, որ ներկայացված բանաձևն ինքնին բավարար է և լիովին արտահայտում է այն միտքը, որն այս առավոտ ձգտում է Ազգային Ժողովը հաստատել:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Գանիել Մարկովիչին:

ԴԱՆԻԵԼ ՍԱՐԿՈՎԻՉ – Իմ ձեռքին է 43 էջանոց մի զեկուցագիր, որը պատմական հանգամանակից հետազոտության արդյունք է: Ինչպես զեկուցողը նշեց, արտաքին հանձնաժողովի նիստի ժամանակ համաձայնություն կայացավ, որովհետև հանձնաժողովի նախագահ Ժակ Լանգը Ժակ-Բեռնար Ռեմոնի օգնությամբ բոլոր մասնակիցներին համոզեց, որ որևէ լրացում չկատարվի, քանի որ, ըստ նրա, բանաձևի ուժը պարզության մեջ է:

Այս ամենով հանդերձ հարկ է նշել, որ բանաձևն ուղղակի բխում է հիշատակված զեկուցագրից, որն, իմ կարծիքով, խիստ նյութակի է ներկայացնում ցեղասպանության նախապայմանները, ցեղասպանության թվականները, ցեղասպանության պատճառներն ու նրանց, ովքեր ցեղասպանությունը հրահրել են: Ես դիտմամբ եմ բառը չորս անգամ կրկնում, որպեսզի տարըմբռնում չառաջանա:

Իրոք, զեկուցագիրը հավաստում է, որ 1915-ից մինչև 1922-ը թուրքական կառավարությունը, եթե ուզում ենք ավելի ճշգրիտ լինել՝ նրա մի թեև անառարկելիորեն հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն է գործադրել:

Հասկանալի է, մեկ-երկու բառի ավելացումը բանաձևի իմաստը չի փոխի, բայց ազդեցությունը կթուլացնի: Մի՞թե ճշմարիտ չէ, որ մենք այդ հայտարարությունն այսօր հրապարակայնորեն ենք կատարում: Խորհրդարանական որևէ քննարկման ժամանակ մեր ազգային Ժողովի օթյակներն այսքան լեցուն չէին եղել: Ի՞նչու պատգամավորները և հայերը, ինչպես նաև ամբողջ աշխարհի ժողովրդավարները ուշի-ուշով հետևում են, թե ինչ է կատարվում այստեղ այս առավոտ:

Եթե բանաձևի «հրապարակայնորեն» արտահայտությունը փոխարինենք «պաշտոնապես»-ով, լրացուցիչ իմա՞ստ կհաղորդենք: Չէ՞ որ այն, իրոք, հրապարակային ճշմարտություն ունի, մենք ուզում ենք, որ համաշխարհային հասարակայնությունը մեզ լսի, դրա համար ենք ձգտելու բառը պահպանել:

Ես ինձ թույլ եմ տալիս նաև նախօրոք պատասխանել այն լրացման հեղինակներին, ովքեր ցանկանում են, որ կառավարությունը պաշտոնապես ոգեկոչի ապրիլի 24-ը: Ինձ թվում է, և կարծում եմ, որ չեմ սխալվում, ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես ոգեկոչում է միայն այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել իր տարածքում, որոնց Ֆրանսիան ուղղակիորեն առնչվել է: Մենք բոլորս էլ գիտենք, որ նահանգներում և նույնիսկ մայրաքաղաքում տարիներ առնվազն մեկ անգամ կիսապաշտոնական ցույց է այդ կապակցությամբ տեղի ունենում, բայց չի կարելի ֆրանսիական կառավարությունից պահանջել, որ վավերացնի ամսաթիվը, մի բան, որ չի արվել մյուս ազգերի, օրինակ, հրեական ցեղասպանության առնչությամբ:

Մենք ունենք հատուկ բռնագաղթի օր, որի ընթացքում ոգեկոչում ենք բռնադատված ֆրանսիացիներին, հրեաներին, դիմադրության շարժման մասնակիցներին, համայնավարներին, այլոց: Ունենք նաև այնպիսի օր, որն ուղղված է Վիշիի ազգայնամուլների հակահրեական ու հակազնչուական հանցագործությունների դեմ: Սակայն Ֆրանսիայում Ողջակիզմանը նվիրված պաշտոնական օր

չկա: Այն նշում են հրեական հաստատություններն ու համայնքը, բայց ոչ կառավարությունը, որից չի կարելի պահանջել, որ նման առիթներով համազգային ցույցեր կազմակերպի, չնայած այս կամ այն չափով, գրեթե ամենուր, տեղի են ունենում:

Ինչ վերաբերում է ինձ, ես կարծում եմ, որ քննարկվող բանաձևի ուժը պարզության և մանավանդ այն իրողության մեջ է, որն ուղեկցվում է 43 էջանոց զեկուցագրով: Վերջինս պարունակում է առաջադրվող բոլոր լրացումները (*ժափահարություններ ընկերվարականների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ռոբեր Պանդրոյին:

ՌՈՐԵՐ ՊԱՆԴՐՈ – Ինչպես նախորդ հռետորը, ես էլ եմ գտնում, որ օրենսդրական բազմաթիվ բանաձևերի ուժը պարզության մեջ է: Խոստովանենք, որ շատ հաճախ ընդունելուց հետո անգամ մենք չենք կարողանում մեր ընտրողներին պատասխանել, թե ի՞նչ բանաձև ենք քվեարկել: Այդ մասին ինքներս էլ ըստ էության իմանում ենք մանրամասների հրապարակումից հետո միայն:

Այսօր մենք հպարտ ենք զգում, որ այնպիսի պարզ բանաձև պիտի քվեարկենք, որի մասին սրահից ելնելուն պես կարող ենք խոսել:

Անշուշտ, նրա ձևակերպումները որոշ խորհրդածությունների տեղիք տալիս են, այլապես, պարոն նախարար, Ձեզ պատասխանելու կարիք չէր զգացվի:

«Հրապարակայնորեն» բառը ինքնին ինձ դուր է գալիս: «Պաշտոնապես»-ը այնքան էլ տեղին չի թվում, մանավանդ որ մենք միշտ, ըստ էության, պաշտոնական աշխատանք ենք կատարում: Եթե որևէ մակդիրի կարիք զգացվեր, մի բան, որ առանձնապես չեմ էլ սիրում, նախապատվությունը կտալի «հանդիսավորապես»-ին, որը բանաձևն ավելի տարողունակ կդարձներ: Եվ եթե շատ ենք ուզում մանրակրկիտ լինել, քանի որ բոլորս էլ դրան կողմնակից ենք, «հայերի ցեղասպանությունը» արտահայտությանը կուզեի ավելացնել այն, ինչ առաջարկում է մեր գործընկեր Հերմինե՝ «Հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանությունը», որն ավելի հստակ է:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Պիեռ Լելուչին:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ես չեմ ցանկանում վիճաբանության ստվեր նետել մեր սկզբունքային քննարկման ընթացքի վրա, և ոչ էլ այն պատճառներով, որոնց արդեն անդրադարձան պարոնայք

Պանդորոն և Մարկովիչը, մեկնաբանել լրացումների բովանդակությունը, որոնց հետ, ըստ էության, համաձայն են: Խորհրդարանն, անկասկած, խելամիտ վճիռ կկայացնի:

Ինձ ավելի հուզում է այն ամենի իմաստավորումը, ինչ այս առավոտ տեղի է ունենում մեր նիստերի դահլիճում: Բացի «պաշտոնապես» և «հրապարակայնորեն» բառերի միջև կատարվելիք ընտրությունից, հարկ է պարզել, թե արդյո՞ք Ազգային Ժողովը կարող է կանոնակարգում մտցնել, որպեսզի պատմական իմաստ հաղորդի ութսուներեք տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների: Սա քաղաքական, բայց նույնքան էլ իրավաբանական հարց է, որը բացառիկ կարևորություն ունի հենց մեր հաստատությունների դիրքորոշման առումով:

Ես ուշադրություն դարձրի, թե ինչպես պետքարտուղարն իր ելույթում օգտագործեց «նկատի կունենամ» արտահայտությունը: Այլ կերպ դա նշանակում է, որ նկատի կունենա, բայց հարցն իրեն առանձնապես չի զբաղեցնի: Բացի դրանից, նա Անդրե Սանտինիին շատ որոշակի պատասխանեց, որ Ազգային Ժողովը նման քննարկումների կապակցությամբ օրինակարգումներ չի կարող կատարել: Մինչդեռ մենք հենց դրան ենք ձգտում՝ ելնելով մեր Սահմանադրության երրորդ հոդվածից, հավաստում ենք ֆրանսիացի ժողովրդի ինքնիշխանությունը: Այդ առումով այն, ինչ տեղի է ունենում այս առավոտ, միանգամայն պաշտոնական է:

ԱԼԵՆ ԿԱԼՄԱ – Իհարկե:

ՊԻԵՌ-ԼԵԼՈՒՇ – Ես խոսք վերցրի հենց այն բանի համար, որ ամեն ինչ հատակ լինի: Ըստ էության մենք պարտավորեցնում ենք ֆրանսիական կառավարությանը, որովհետև ազգային ինքնիշխանությունը մեր միջոցով է իրագործվում: Նույն ձևով էլ, դարձյալ ըստ Սահմանադրության, եթե գործադիր մարմինը պայմանագրեր է վավերացման ներկայացնում, որի հաստատման իրավասությունը բաժանված է կառավարության և հանրապետության նախագահի միջև, ու այդ պայմանագրերը այնուհետև օրենքի, նույնիսկ օրենքը գերազանցող ուժ են ստանում, նշանակում է վավերացվել են կամ հանրաքվեի միջոցով և կամ Ազգային Ժողովում:

ԺԱՆ-ՊԻԵՌ ԲԼԱՋԻ – Ճիշտ է:

ՊԻԵՌ-ԼԵԼՈՒՇ – Սիրելի գործընկերներ, որպեսզի հե-

տագայում տարակարծություններ չծագեն, խիստ որոշակի արտահայտվենք՝ այն, ինչ մենք ընդունում ենք այս առավոտ, օրենք է, որն ուղղակիորեն առնչվում է ֆրանսիական կառավարությանը (*ընկերվարականների խմբակցության բազկաթոռներից բացականչություններ են լսվում՝ «ճիշտ է»*):

Ուստի, պարոն պետքարտուղար, ես կարծում եմ, որ դուք կիրաժարվեք այն արտահայտություններից, որոնք քիչ առաջ արեցիք (*ժախհարություններ «Համախմբում հանուն Հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից*):

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Օրենքը պարտավորեցնում է ազգին, օրենքը պարտավորեցնում է պետությանը:

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Ժորժ Սարրին:

ԺՈՐԺ ՄԱՐՐ – Պարոն նախագահ, ես կուզեի ներկայացնել մեր խմբակցության դիրքորոշումը: Ինքնին, զոնե մեզ համար, հասկանալի է, որ արտաքին գործերի հանձնաժողովի կայացրած որոշումը խելամիտ է ու օրինական: Ռոբեր Պանդրոյին հարկ եմ համարում անկեղծորեն նկատել տալ, որ անկախ օգտագործված բառից՝ «պաշտոնապես» լինի, «իրապարակայնորեն», թե «հանդիսավոր կերպով», կարևորն այն է, որ Ֆրանսիան այսօր օրենսդրորեն ընդունում է ցեղասպանությունը (*ժախհարություններ ընկերվարականների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*): Սա որոշակի է:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Եվ կարևորն էլ հենց դա է:

ԺՈՐԺ ՄԱՐՐ – Մակբայի կցումը նույնիսկ կարող է ստվեր նետել մեր ազգային դիմագծի վրա, որովհետև, եթե այն, ինչ մենք անում ենք այստեղ, պաշտոնական չէ, հրապարակային չէ, հանդիսավոր չէ, հապա ի՞նչ է:

ՌԻՇԱՐ ԿԱԶՆԱՎ – Ճիշտ է:

ԺՈՐԺ ՄԱՐՐ – Միքելի գործընկերներ, հիշեցնեմ, որ մենք գտնվում ենք Ազգային Ժողովում: Ահա թե ինչու բոլորիդ առաջարկում եմ պաշտպանել արտաքին գործերի հանձնաժողովի ներկայացրած միակ բանաձևը (*ժախհարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Գի Հերմիտին:

ԳԻ ՀԵՐՄԻՆ – Ես ընդունում եմ պարզությունը պաշտպա-

նող փաստարկները: Ինքնին, որքան էլ էական թվա, մենք սոսկ մակ-բայ ենք քննարկում, չնայած անձամբ ես սիրով կրվեարկեի «հան-դիսավոր»-ի օգտին, նկատի ունենալով վճռի պատմական կարևորությունը, որը, բնականաբար, կարծիքների փոխանակությունից հետո կայացնելու ենք նիստի վերջում:

Մենք ցանկանում ենք միայն, դա՛ է մեր լրացման նպատակը, որ որոշակիացվի, թե ո՞վ է այդ ցեղասպանության պատասխանատուն:

ԺԱՆ-ՊՈՒԼ ԲՐԵՏ, ԱԼԵՆ ԿԱԼՍԱ – Ձեկուցագրում որոշակի է:

Գ.Ի ՀԵՐՄԻՆ – Առավել ևս: Այդ դեպքում Ինչո՞ւ չարտագույել օրենքում, մանավանդ, որ հենց այդ պատճառով ութսուններեք տարի ի վեր Ազգային ժողովը քննարկման նյութ չի դարձրել:

Եթե պարզությունն, անկասկած, որոշ ձևակերպումների ուժ է հաղորդում, ճշգրտումներ կան, որոնք հնարավորություն են տալիս խզել ութսուններեք տարվա լռությունն ու հասնել այն բանին, որ մեր քվեարկությունը անցյալի և ապագայի նկատմամբ որոշակիություն ունենա (*Ժափահարությունների համայնավարների խմբակցության բազկաթռոններից*):

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ միշտ է:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ռոժե Սեյին:

ՌՈՇԵ ՄԵՅ – Երբ խոսում են 1939-1945 թվականների ցեղասպանության մասին, մացիստական Գերմանիան միշտ հիշատակվում է: Այդ դեպքում ինչո՞ւ չնշել տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվությունը: Յեղասպանություններն ու սանձազերծողներին միաժամանակ վկայակոչելը տրամաբանական է:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժան-Պոլ Բրետին:

ԺԱՆ-ՊՈՒԼ ԲՐԵՏ – Բոլոր փաստարկները քննարկելուց հետո մենք որոշեցինք պարզ ու որոշակի ձևակերպմանը մախապատվություն տալ, որովհետև ազդեցիկությունը դրանով է պայմանավորված:

Այս շենքի դիմաց, վաղ առավոտից ի վեր խորհրդարանականներին սատարող հայ համայնքի ցուցարարները մի պաստառ են ծածանում, որի վրա գրված է՝ «Ֆրանսիան պետք է ընդունի հայերի ցեղասպանությունը»:

Ինչ-որ տեղ մենք այդ ձևակերպումից ենք բխեցնում մեր ընդունելիք օրենքը: Ահա՛ էականը (*ծափահարություններ ընկերվա- յականների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ես քվեարկման եմ դնում թիվ 1 լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Քվեարկման եմ դնում թիվ 8 վավերացված լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Տիկին Ժամբուն, պարոնայք Հերմինե, Լեֆորը, համայնավարների խմբակցության անդամները ներկայացրել են մի այլ՝ թիվ 2 լրացումը, որը ձևակերպված է այսպես. «Միակ հողվածքը ամբողջացնել հետևյալ պարբերությամբ. «Կառավարությունը հանձն է առնում մեր երկրում ամեն տարի ապահովել ոգեկոչումն ու ջանք չխնայել, որ միջազգային հանրությունն էլ ընդունի ցեղասպանությունը»:

Չայնը տրվում է Ռոժե Մեյին:

ՌՌԺԵ ՄԵՅ – Ընդունել ցեղասպանությունը, որի գոհն է դարձել հայ ժողովուրդը, նշանակում է հասնել այն բանին, որ մարդկության դեմ գործված այդ ոճիրը արձանագրվի հիշողություններում, նոր դրսևորումները խոչընդոտելու դաս դառնա: Այդ պատճառով է անհրաժեշտ, որ կառավարությունն ամեն տարի ապահովի ոգեկոչումը:

Բացի դրանից, քանի որ թուրքական բոլոր կառավարությունները հրաժարվել են ընդունել հայ ժողովրդի ցեղասպանությունը, այդ ընդունմանը նվաստող ազգային և համաշխարհային հանրային կարծիքի վրա ներազդելու լայն քարոզարշավ են ծավալել, շատ կարևոր է, որ Ֆրանսիան քսաներորդ դարի առաջին ցեղասպանության ընդունման համար միջազգային տարբեր ոլորտներում հանդես գա գործնական նախաձեռնություններով:

ՆԱԽԱԳԱՀ – Հանձնաժողովը և կառավարությունն այս լրացման կապակցությամբ արդեն արտահայտել են իրենց տեսակետը:

ՆԱԽԱԳԱՀ – Ես քվեարկման եմ դնում թիվ 2 լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Քվեարկման եմ դնում օրենքի նախագծի միակ հողվածք: (*Օրենքի նախագծի միակ հողվածքն ընդունվում է*):

(*Տիկնայք և սլարոնայք պատգամավորները ծափահարում են*):

Նիստն ավարտվում է ժամը 11-ն անց 45 րոպեին:

ԼԱՎՐԵՆՏԻ ԱՇՈՏԻ ԲԱՐՄԵՂՅԱՆ

**ՖՐԱՆՍԻԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ ԾԱՆԱԶՈՒՄԷ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան

Հանձնված է շարվածքի 30.10.98:
Ստորագրված է տպագրության 28.10.98: Չափսը՝ 60x84¹/₁₆:
Հրատարակչական 6,25 մամուլ: Պատվեր №42:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
375019, Երևան, Մարշալ Բաղդամյան պող.24գ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
Կոմպյուտերային խմբագրական-հրատարակչական ծառայություն,
375019, Երևան, Մարշալ Բաղդամյան պող.24գ:

[1500 yr]

A $\frac{11}{85110}$

11